

ՅԳԼ. 99 ար.

2006

ԲԱԳԻՆ

Pakine



Սիւր Սիւր
2 men walking in Beirut and smoking the last cigarette.

ԳՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ ■ ԱՐՈՒԵՍ ■ ԻՄԱՑԱԿԱՆ ԱԾԽԱՐՀ

Վարիչ խմբագիր՝
Յակոբ Պախեան

Օգնական խմբագիր՝
Սոնիա Քիլեճեան

Ձեռադրում՝
Studio VICKEN - Paris

Լէջադրում՝
Ձարեհ Չէօրէքճեանի

Կողքի նկար՝
Արա Ալպատ©


Հասցէ՝
Պուրճ Համուտ,
«Շաղկոյեան» կեդրոն
Բյարկ
e-mail :
pakir@namap.com
Հեռ. 00961-1-241072

Տպագրութիւն՝
Համալգայինի «Վահէ
Սէքեան» տպարանի

Ճրուումի կեդրոն՝
Համալգայինի
Փրատարած,
Շաղկոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ
Հեռաձայն՝
(01)241263/4
Ֆաքս՝
(01)260329
Փոստարկդ՝
80-1096 Պ.Համուտ
E-mail :
imphamuz@inco.com.lb



Հրատարակութիւն
Համալգայինի
Կեդրոնական
Վարչութեան



ԲԱԳԻՆ

ՄԱՐՏ 2006

ԽԴ ՏԱՐԻ ԹԻԻ 1

«Մնացածին մէջ ծաղկած փշածաղիկ չէին տեսեր»
ՍՈՆԻԱ ՍՈՆՆԱՆ էջ 2

Սափուն

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ էջ 8

Կարկասանոս Յիշողութիւն
ՍԱՐԳԻՍ ԿՐԱՎՈՍԵԱՆ էջ 11

Բաժանումը

ԳԼՈՐԳ ՊԵՏՐՅԵԱՆ էջ 14

Բանաստեղծութիւններ
ՆԵՆԲԻԿ ԷԳՈՅԵԱՆ էջ 17

Բանաստեղծութիւններ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ էջ 20

Թատրոն

ՎՐԷԺ ԻՍԿԱՆԵԱՆ էջ 22

Կայինի Տղան

ՄՏԵՓԱՆ ԱՍՏԱՏԵԱՆ էջ 27

Առ

ԻԼԻԱՍ ՃԱՐՔՈՐՀ

Խորաբերէնէ թարգմանեց՝ ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ էջ 32

Մեղաւոր եւ Յարուր Կոստանդեան

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ էջ 42

Յ.Ճ. Սիրունիի նասակները Կ.Չարեանին
ՎԱՐԳԱՆ ՄԱՏԹԷԱՍԵԱՆ էջ 44

«Մեր ազգային գաղափարախօսական տեսիլքը պէտք է ունենանք»
Հարցազրոյց՝ Արամ Ա Կաթողիկոսին հետ
էջ 48

Բագինին առջեւ՝ Կրկին

ԲԱՅՅԻ ԱՃԷՄԵԱՆ էջ 57

Նրբ գիրն ու խօսքը կոթի էին մզում արուեստի անկեղծութեան եւ մտքի
ազատութեան բոնաբարման ոչնի
ԻՌԻՐԵՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ էջ 63

Ծէւը. եկեղեցին եւ թատրոնը դարերու իայժմերուկներուն վրայ
ԲՈՊԵՐԹ ԱՌԱՔԵԼԵԱՆ էջ 73

«Բարի Նրկինք»

ՊՕՂԱՍ ՍՆԱՊԵԱՆ էջ 78

Բանաստեղծութիւններ

ՉԱՀՐԱՏ էջ 80

Նամականի

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՐՔԱՆ էջ 81

Արա Ալպատ՝ տարբեր նկարիչ մը

Յ. ՊԱԼԵԱՆ էջ 84

Յարութիւն Գազանճեան - Յ.Գեղարդ
էջ 94

Կամար էջ 95

ՀԱՅ ԳՐԱԴԻ ԵՒ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Մարտի 2006ին, Հայ Գրողներ, Հայաստանէն եւ Մփիւոքէն, պիտի հաւաքուին Մփիւոքի շնչատութեան աւագ կեդրոններէն մին. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրաժանքին սէջ, միասնութեան եւ վերականգնումի հեռանկար ունեցող հայոց Հայրապետի հովանիին տակ: Մենք պիտի գան Հայաստանէն եւ Մփիւոքէն: Կարելի չախաճեռնութիւն մը, որ նշանակալից կ'ըլլայ, եթէ ակնկալութիւններ իրականացնէ, առանց նմանելու այլ համագումարներու անվաղորդայն հրավառութեան:

Գրողներու միութիւն կամ Եկարիչներու միութիւն, այդ կարգի կառոյցներ, ստեղծուած էին խորհրդային իշխանութեան կողմէ, ոստիկանական վարչակարգի մը ծառայելու նպատակով: Ժողովրդավարական երկիրներ այս քմբռնումով գրողներու միութիւն չունին. կան Բոն Հիւսի նման կազմակերպութիւններ, առանց իշխանութիւններու հսկողութեան եւ նեցուկի: Գրողները անկախ են, իշխանութիւնները պանոնք չեն հակակշռեր, իրենց կապը ուղղակի է հրատարակիչներու հետ, որոնց քննարկման լաւմեքիւմները ստացուած բնագիրներու ընթերցումը եւ քննութիւնը կը կատարեն, ապա ընտրութիւն կը կատարեն գիրքը հրատարակելու համար հրատարակչատան անունով, ինչ որ առաջին գնահատանքն է. եւ գրողին կ'ապահովէ հեղինակի իրաւունքը եւ եկամուտ, պայն կը դարձնէ քիչ մը աւելի անկախ: Գրողներու համագումարին օգտակար պիտի ըլլայ քննել այս խնդիրը: Ողջ ընելու համար անհրաժեշտ է հրատարակիչներու ներկայութիւնը, ոչ անոնց որոնք հեղինակի հաշտոյն գիրք կը տպեն:

Կը դրուի հայ գիրքի տարածման խնդիրը: Երբ ֆրանսական Gallimard կամ Payot հրատարակչատունէն գիրք մը լոյս կը տեսնէ, նոյն օրերուն այդ գիրքը կը գտնենք երկրի գրատուններուն մէջ, բայց նաեւ Գանատայի, Միացեալ Նահանգներու, Ճապոնի, Զամբուիի, Ալժերիոյ կամ Էթիովիոյ: Գրականութեան պարզացման եւ տարածման համար այս ցանցի ստեղծումը գրական ուղղութիւններու եւ քննարկման կեդրոններու չ'առնելուի, ան էական նշանակութիւն ունի, գրականութեան եւ գրողի անկախութեան պարզացման համար, որպէսզի Գիւր դուրս գայ փակ ջրջանակէ, ժողովրդականացայ, հանրային դատատանի ճամբով որով ձեռք բերէ եւ որակ տայ ժողովուրդին:

Գրքի տարածման եւ գրողի գնահատման համար անհրաժեշտ է գրական իրաւ քննադատութեան պարզացումը, անկաշկանդ եւ անկողմնապաշտ, առանց խրելու քաջալերանքի եւ պատգանքի հայրենասիրութեան ճանիճին մէջ, ի հարկին թապուններ վերցնելու լանդզնուութեամբ: Սյս քննադատութիւնը հաճախօտական գրախօսականէ տարբեր որակ կ'ենթադրէ եւ կը միտի արժէք արտահանելու, որ սոսկ գրականագիտութիւն չէ: Գրական քննադատութիւնը բացասականութիւն չէ, այլ որոնում մնայուն արժէքներու, ինքնատարութեան եւ գեղեցիկի, եթէ անոնք բացակային, հրկը կը դառնայ տպուած թուիր: Սյս վերաբերումով հարկ է մօտեցնել հայ գրականութեան ժառանգութեան եւ նորերու ստեղծագործութեան:

Հայ գրողներու Համագումարը, առաջինը այս տարողութեամբ, պարտք պէտք է համարէ քննել լեզուի հարցը: Գրականութիւն կը ստեղծուի տունայ ալգի մը լեզուով: Յրանսացի հեղինակը երբ աներկերէն կը գրէ չի հարստացներ ֆրանսական գրականութիւնը, թերեւ ինք կը նուաճէ հռչակ եւ իր գիրքերը աւելի յայն տարածում կը գտնեն: Հայերէնի պոռումը եւ բիրեղացումը հարկ է քննել, ան գրականութեան սրբապան միջոց է եւ արեւելեան պապալի ապրումը չէ, ապաշին ինքնութիւն եւ ժառանգութիւն եկած եւ մեկի հասած են լեզուով նաեւ: Նոյն մտահոգութեան ծիրէն ներս հարկ է քննել հայերէնի հարապատ ուղղագրութեան վերականգնման բարդացած խնդիրը, առանց կանգ առնելու անյանելի համարելու կուցութեան առջեւ, որ հետեւանք է խորնրդային իշխանութեան գաղափարաբանութենէն բխած քաղաքական պարտադրանքի:

Որանձին չենք աշխարհի վրայ: Գրականութիւնը ժողովուրդներու ապրումներուն արտայայտութիւնը կը բերէ, բազմապէս եւ ինքնատիպ: Մեղանչում չէ պանոնք ճանչնալ, ընդհակառակն, հարկ է թափանցուիլ, առանց հետեւելու, նմանելու եւ կապելու անշուի ճապկումի:

Գրական նախաճեռնութիւն մըն է այս Համագումարը: Մեն մեծ իրադարձութիւն կ'ըլլայ միայն իր եզրակացութիւններով:

Մեզնող աւելի քան քաղաքուն տարիներուն հայ գրականութեան բարի քարձը պահած ԲԻՊԻԻ ընտանիքը կ'ողջունէ Համագումարը՝ վառ ակնկալութիւններով:

Մարտ 2006

Բագին



«Անապատին մէջ ծաղկած փշածաղիկ չէին տեսեր»

«Մարիպա կը սորցէ ճաղերը իգորեան/կարչակէ գիւ փափաքումներու»։ Տափառաւանները՝ տարածքը բանաստեղծութեան, ար բանաստեղծութիւն տառչին անգամ բացուեր է «Հում բառերով» ամշպար, «դիմակներու հանդէսի»-ն դէմ յանդիման։ Սկսելու է գրել նոր անորոշարձեր է որ տարածք մը կայ ուր հայ կիմը դեռ չէ մաւած, իր խօսքը չէ ըսած, կամ չէ ըսած ոչն անորոշութեամբ որ ինք կ'ուզէր որ ըսէր։ «Ծառ» փայտաց սկսած էմ գրել, եւ չէմ գիտեր ինչու եւ ուրիշ եկած է մէջս, որ միշտ ամշցած էմ ըսելու թէ կը գրեմ։ Բայց միշտ գրած էմ, գրած պահած էմ, թէ բանաստեղծութիւն, թէ փայտորսական էջեր, բայց քանի ինքզինքն կը չիշէմ, միշտ կարդացեր եւ գրեր էմ, մութ անկիւն մը թիմուած, մայրս միշտ կը բառեպնար թէ մութ անկիւններ պատկերներով եւ կարդալով «Ծր»-ը անթերուս պիտի վնասէի։ Բայց եւ միշտ մութ անկիւններ գրեմ եւ գրելու

Բաին, որ տողերս շատ պայծառ են, յուսաւոր իսկ գրականութեան պէտք է ցաւ խօսի ու ցաւ շնչէ։
Անապատին մէջ ծաղկած փշածաղիկ չէին տեսեր։

(ՅԱԼ, «Հին Քերթուածներ»)

3290143
526-2017

թերեւս չհասկնաք գիրս
 զոր կը գրեմ
 գրուած թուղթերու վրայ
 ուր Բանը բիրենորդ անգամ
 ծնիլ կը փորձէ
 թերեւս չկարդաք գիրս
 որ ուրիշ գիրերու խառնուած
 անոնց չափ անկենդան կը թուէր

թերեւս չտեսնէք գիրս
 զոր գրեր եմ միշտ թափանցիկ
 շունչի
 հպարտ գնացքով

բայց կը լսէք պահ
 ձեր յոռիքունն է որմէ կը վախնաք
 մղձաւանջն է զոր կ'ուզէք խօսիլ
 եւ երազները զորս ասկէս կիրքով
 կ'ապրիք մութին մէջ

ես
 այդ բոլորը
 լոյսին կը հաւնեմ

(ԹԵՐԵԿՍ ԶՀԱՄԱՆԱՔ ԳԻՐՍ,
 «Հին Քերթնածներ»)



եւ թերեւս ապոր համար է որ քանադեղծութիւն
 գրելը եւ կատրնջն ստորելուն հենր հաւաքալով
 որ քանադեղծութիւն գրելը ստանձնաբեան
 արունարն է»:

«Թերեւս չտեսնէք գիրս/զոր գրեր եմ միշտ
 թափանցիկ». Կնոջ մը հոգիին անկիւնը մեծցող,
 աղօթքի սեղմութեամբ խորունկ, զուսպ, բայց
 իրական տողերը գրուել են տարիներ շարու-
 նակ, թաղթին հետ գաղտնի բարեկամութեամ մը
 անթափանց հաւաստածութեամբ, ըստելով արե-
 լելեան քաղաքի մը պատմական քերդին հսկայ
 պարթսպներուն, կարծես վտրձելով գրաւել
 անոնց անառիկ ու անյաղթահարելի
 ամրութիւնը, գրուել են խառնուելով արաբական
 խորելապտոր բաղնիքներու շոգնակաւ մշուշին
 մէջ կնոջ միսին ցանկալարոյց գաղտնիքները
 գիրին տաք տաք մոտեմութեան մէջ սեղմելու: Եւ
 օր մը միայն լոյսին եկել երբ արիշ քանաստեղծ
 մը կարգազեր է պանուն ու տեսնել եոն լաւաս-
 տեղծութեան յաղթանակը:

«Դասընկերս՝ Կորին Շախինեան միակ
 ամէն էր որ գիրքը թէ ես կը գրեմ: Օր մը երբ
 ըսի իրեն թէ ես կը գրեմ, երբեք չգարմացաւ,
 ըսաւ որ ինք մոյմիսի կը կասկածէր թէ ես յօթ-
 նումներ ալ կը կարարեմ, ռապի յարդորեց զիս
 որ գրածներս փպեմ: Մինչ այդ Էւոն Վարդան
 եկեր էր Հայէս, եւ գրոյցի մը ընթացքին թիւ մը
 ամէնալով ըսի թէ ես ալ կը գրեմ: Բոնից օջիքեւ
 եւ անպայման ուզեց մեր փունը գալ եւ փեր-
 րակներս աչքէ անցընել: Արալէս ալ ըրաւ, փեր-
 րակներս առաւ փարաւ Պէյրութ եւ սկսայ փպել
 քանադեղծութիւններ...այս ամբողջը պարզա-
 պէս շեշտելու համար որ փպելը իմ նախաշե-
 նութիւնն չէր եւ մինչեւ այսօր ալ հարց է ինձի
 համար թէ ինչու կը փպեմ...բայց առաջին
 գիրքիս փպագրութեանն երբ ես գիս
 յանձնառութեան փակ զգացի, որ պէտք է փր-
 պեմ»:

Առաջին գիրքը «Համ քառերն իմ կը բերեմ դի-
 մակներու հանդէսին» կը տպուի 1991 թուա-
 կանին Հայէս: Երկրորդը՝ «Տարբերակներ»
 1995ին: «Հալոց», երրորդ գիրքը, 1998ին: Ապա
 «Գիշերներ» 2000ին: Պատմութեան արա-
 ջին ժողովածուն՝ «Աօր Գողգոցը» 2002ին եւ
 2004ին «Հին Զերթուածներ»:

«Երբ բանաստեղծութիւն կը գրես անպայման չես սպասեր որ մարդիկ կարդան եւ արտասայրուին անոր մասին, բանաստեղծութեան պարագային կարեւոր չէ թէ ընթերցող ունիս կամ ոչ»: Իր քաղաքի բերդին պէս, մինակ ու անառիկ բանաստեղծուիլն, կը քայլէ «գրգիռնիւրու ինքնամոռաց բարեկեցիկ» եւ կը գրէ, քանի որ չի կրնար չգրել, չի կրնար չառեղծել իրեն համար ընտրեալ սարածք մը, սր կարելի է ըսել ամէն ինչ, խօսիլ ամէն ինչ: «Բանաստեղծութիւնը այն վայրը չէ ուր ես կուզեմ իմ խնդիրներս լուծել: Այլ ան վայրն է ուր ես կուզեմ ըսել ամէն ինչ, խօսիլ ամէն ինչ» եւ «փոքր մաքուր սառանները բառերում»: Հոն՝ թուրքի աշտ անաթատ ճերմակութեամբ վրայ բանաստեղծուիլն կը դառնայ իր ու բանաստեղծութեան վիսն, անձնակաւնութեան եւ անանձնակաւնութեան խառն մէջ մտնելով, «կոնսպիրոյտ կամաններ» միակէտին ձգտելով, փնտռելով «բարձր սղօրքը» եւ զեխաջուրներուն մէջ ցոլացող երկինքները, քայց մանա ետուարութիւն մը պահելով հաւաքական ոտիւզոնի մը մեղ աշխմաններէն, անապատային քաղաքի մը չարութենէն, փրկելով բանաստեղծութիւնը հաստցումի ու ծառայումի արգելափակում «աշխարհի»-ին ինքնակրծումէն, «իմ գրեւս անպայմանօրէն բանաստեղծութեան ընկերային դեր մը տալ չէ», «բանաստեղծութեան դեր մը տեղը չէ վերագրել: Երբ բանաստեղծութիւնը դեր մը չունենայ շատ աւելի նպաստաւոր է բանաստեղծութեան համար, քանի որ երբ որեւէ դեր կը վերագրենք բանաստեղծութեան, բանաստեղծը շատ աւելի կը գրագի աղ դերով, բան բանաստեղծութեամբ»: «Բայց թէ բանաստեղծութիւնը ինք դեր մը ունի ընդհանրապէս, կասկածելի է անշուշտ, բայց կը պատահի, որ գրութիւն մը ըսելիք ունենայ մարդոց մեծ թիւի մը եւ գիրներ շարժել որոշ ուղղութեամբ, ապիւստեղծումէն յետոյ եկող համայնական մըն է, միայն ուղղաւորութիւն ունեցող գրականութիւնն է, որ որոշ դերով մը ծամբայ կ'ըլլէ: Իսկ թէ գրականութիւնը ի՞նչ դեր ունի Սփիւրքի մէջ, կը դժուարանամ ըսել, որովհետեւ այնքան փոքր է թիւը ընթերցողներուն, իսկ բանաստեղծութիւնը ընթերցողներուն՝ շատ նուազ: Բայց բանաստեղծութիւնը Սփիւրքի մէջ կը շարունակէ սպրիլ քանի մը բանաստեղծներու եւ քանի մը ըն-

Փոքր մաքուր սառանները բառերուն,
ո՛չ մեղրամսին,
ալլ այն բոլոր վէճերուն,
որոնք ճամբան, որ դեռ գոյ չէր
մեր միջեւ,
հարթեցին.

ժարել լոյսերը բոլոր սովորական
բառերուն
եւ սպասել որ անոնք
մեր ափերուն մէջ ինկած
տաքնան կամաց
արթնցնեն կայծերն այնտեղ
անթեղուած

յետոյ միայն
սղալացող լոյսին տակ
հանուիլ մինչեւ արթնացում
ու գրել

ունենալու համար
ունենալու պէս
քեզ

(ԳՐԵԼ «Հին Քերթուածներ»)





*Եկան քեզի
իրենց տենչերէն փախչելով
փնտռելու համար
կորսուած ալը եսին*

*Փորեցին աչքերդ
փնտռելով հորիզոնը հեռու*

*հասեցին լեզուդ
ու խցկեցին ականջներդ*

*ու երբ նայեցան
անծանօթ էիր արդէն
եւ իրենցն էիր արդէն*

*իսկ մարմինս քակուած գերան
բառին կեռով կը պրկեմ
ու կը սկսի դաժան ելքը
լեզուին մէջ*

(ԵՐԿԻՐ «Հին Քերթուածներ»)

*Քերցողներու շնորհիւ: Անշուշտ հրք «քանի մը»
կ'ըսեմ. փոքր թիւ մը ըսել կ'ուզեմ»:*

Մարտչ Երամեան իր բանաստեղծութեամբ կը յօրինէ ինքնութիւն մը. բանաստեղծուիի մը ինքնութիւնը, որ կը խուսափի ցուցամօլ մորաբարութենէն եւ քերթուածին մէջ կը խտանայ ու կը խուսացնէ ինչ որ կայ իր մէջ, խօսքին խորութեան մէջ ծաւալելով, սակաւախօսութեամբ բանաստեղծելով քայց Լջին տալով բանին ամբողջականութիւնը, միտքին յոտակութիւնը, զգացումներուն առատ անկեղծութիւնը: «Եմբարքնուած»-ի փնտռանքին ճամբաները բանաստեղծութեան տողերէն անցընելով, երբեք չ'իյնալոյ շատախօսութեան ու ճշացող «շատախօսութեան» մէջ ալ կը փորձէ բանաստեղծութեան խտութեան թելադրականութեամբ մտածել եւ մտածելու տանիլ ընթերցողները, «*կը սիրեմ խորութիւնը, քանի որ խորութիւնը բանաստեղծութեան մէջ թելադրականութիւն մը ունի որ քեզ կու տայ գրողին մտածելու...Ինչ որ կայ մէջս տնկիքսպէս թուրքին չեմ յանձնիր, եղածը մէջս կը դառնայ ու յետոյ հրք կը գրեմ շատ խիտ կու գայ...*»:

Բանաստեղծուիին կը գրէ «փրկելու» եւ «պահպանելու» գրականութեան մը կաշկանդումներէն դուրս, պատգամաբերի սփիւռքեան ծանօթ գրական շրջանակէ մը անդին, ստանձնելով անհատական իր մօտեցումը գիրին ու գրականութեան ճկատմամբ որ է մաեւ ըսել մը իր ներսին, իր մտքին եւ խորունկին մասին: «*Անդեղիի հոսանքով բառեր կը ծնին*» եւ կը ստաղեն քերթուածին առաւծքը, կնոջ մը հօգիւս «հասունացման քերթերը» թուրքին վրայ մշակելու: Կը գրէ գիրին եւ իրեն համդէպ փառախօսեամբ մը, տեսութիւններու եւ գաղափարախօսութիւններու բեռնակրութիւնն ու հայկականութեան ծանօթ ֆէրիշները մերժելով: «*Ես կ'ուզեմ որ գրողները դուրս գան կաշկանդումներէ. Հայ, Հայ ազգ, Հայութիւն չգեն մէկ կողմ եւ թոյլ տան որ գրականութիւնը ինք շնչէ. հայրենասիրականը շատ փառնգաւոր գեպին մըն է մանաւանդ Սփիւռքի պարագային, ըզրժումն, հոն կոխողը պէտք է գիտնայ ինչ կ'ընէ, ինչպէս կ'ընէ, եթէ յուզումով մտաւ կը սստի եւ կ'իյնայ փոսին մէջ. Լիսպրեդ կ'ուզեմ շեշտել սակայն որ ամբողջ*

յովին համոզում եմ այն խօսքով, որ կրոն՝ ունեն մեծ արուեստ անպայմանորեն ուզալին է քայց ամեն ուզալին արուեստ անպայմանորեն մեծ չէ: Երբեմն «հայ ոգի»ն բռնագրքիկ կերպով գրականությանն առանցքի կը վերածի, ինչ որ կը վնասէ գրականության: Շատ քիչեր կրցած են այդ դարածքին վրայ իրենք գիրենք եւ հայ բանաստեղծութիւնը նորոգել, ինչպէս, օրինակ, Վեհամոյշ Թէքեանն ու Յովհաննէս Գրիգորեանը»:

Բանաստեղծութեան տարածքը գրաւած բանաստեղծուիւն, քեմաներու ոյսչակիւքեանք չի արստատարեր գիրին յղացքը, կը գրէ անձնական յանձնադրեանք մը բանաստեղծութեան հետ անկեղծ ինքնապոմով մի խոստովանելով, տակալն թէ «իդ»ը ստեղծելու ճամբուն ընթացքին եանգրուանք է կարգ մը գրողներու գրքերուն մէջ ու սորվելու անոնց գրական փորձառութենէն: «Գրելու արեւնային եւ արուեստին փրապելու համար մարդիկ զանազան գիրքեր կը կարդան փարքեր դիւանկիւններէ մօրհնալով գրելու արուեստին եւ արեւնային: Անշուշտ նաեւ կը կարդան որպէս հաճոյք ոչ իրեն աշխատանք: Զանի մը գիրք միաժամանակ կը կարդամ, քանի մը մարդու հետ գրուցելու պէս, քայց կարգ մը գրողներ օգնէր են որ իմ ընթացքս զարգանայ, քայց երբ այդ ընթացքս կամ հանգրուանը տարրեր է իրենք ալ երես մնայի եւ: Խրաքանչիւր գրող ինձի քան մը սորվեցուցեր է, խրաքանչիւր գրող իր ազդեցութիւնը ունեցեր է: Ժամանակին Անայիս Նինի օրագրութիւնները շատ կը սիրէի կամ Վիրճինիա Վուլֆ կը կարդայի իր մշտնոյութեան համար, քայց հիմա չեմ կարդար, չեմ ուզեր կարդալ, որովհետեւ հանգրուան մըն էր անցայ: Բայց միշտ կը սիրեմ Յ. Օշակեան կարդալ իր շունին, լեզուին համար, իր լեզուն հիմնու համբերանքին համար, կը սիրեմ կարդալ Վսեռ Օշակեան իր գրելու կիրքին համար որ վրչինի հարուածներու զարկին կը նմանցնեն: Յանախ Լորէնսի գիրքերուն կը վերադառնամ, մանատեղ երբ կանդրադառնամ որ անոնք հեղափոխական մշտնոյութեանք գրուած են դարասկիզբին: Այս բոլորին կողքին անհամբեր կը ազատեմ Վեհամոյշի եւ Գրիգորեանի գիրքերը: Հայաստանի մէջ ալ շատ լատ



Կը ծնի պահէն պահը՝ յիշատակէն մտածումէն ու կը փնտռէ ճամբան դէպի անէն ենթա-թաքնուած

մեղեդիի հոսքով բառեր կը ծնին ու կը մեռնին աննշմար ինք աշկապուկ կը խաղայ մտածումին յիշատակին պահին հետ կը պահուրտի երկար-երկար կը լայտնուի երբ չկաս

աստղեր կ'իյնան թուղթի ձիւնին ու կը հալեն ճերմակն ամուլ բեղմի հզօր ներկածով

(ՔԵՐԹՈՒՆԻՆ «Հին Քերթուածներ»)

գրողներ կան, սակայն ցուրի երես չեն: Եթե կուգես լսել յոսն մը կարողացաւ պէտք է պրագմա, միայնի ունենալով անշուշտ թէ քեզի համար ինչ է լսել գրականությունը: Վիդէթի գրութիւնները անհամբեր կը սպասեմ, արեւելու համար թէ վերջը ինչ պիտի գրէ, սակայն բանի մը ցուրի է այդ վերջը չեմ արեւել, մոյն բաները ոկսեր է գրել: Սակայն Վիդէթի միգը, թափն ու հոսանքը դրական է եւ գեղեցիկ մեր գրականութեան մէջ... կը սիրեմ անոր գրութիւնները, բայց չեմ համար, եւ սիրելու եւ համարու միջեւ արտաբերութիւն մը կը դնեմ: Կրնամ ըսել օրինակ թէ Լեւոն Խեչոյեանը իբրեւ արշակագիր կը սիրեմ եւ կը համար, կամ օրինակ Յովհաննէս Գրիգորեանի բանաստեղծութիւնները շատ կը սիրեմ եւ շատ կը համար:

**Անկայարան ճեպընթաց
տեղ հասնելու հասցնելու հարցեր չկան
կայարաններ՝ յոկ ուղեցոյց
քնութեան մէջ թափառելու նշանակէս**

ուրիշ ոչինչ

**կայարաններ անուն ունի՞ք
թէ՞ ամէն ոք կը կնքէ ձեզ
իր ուղղութիւնը նշելու
«անանձնական» կեղծիքի մէջ**

**երբ գիշեր գալ
վառել աչքերը լամբի պէս
լարել բառերը՝ թէժ կրակ
եւ սպասել խոստմանայի առաւօտեան**

**յետոյ գրել իր անունը փոքրատառով
կայարանի մը ամայի ցուցանակին
ու հեռանալ**

**(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ, «Հին
Քերութիւններ»)**

Մայրուշ իմ ընթերցումներուն ա մշակած գրականութեան միջոցաւ կարծէք ստանձնած ըլլայ մերկայ դարը իր այլոթիւններով եւ բարդութեամբ: Երաժշտութեան backgroundին յենած կը կարողայ ու կը գրէ կնոջ մը ենթաշխարհէն, իր մօր գոգմոցին դրուագներէն եւ ավիւրաբանայու իր ազգնապներէն, կամայական յուզումներու խանգարաւ սովորութեան ու անկենդան միւրեքու երմշտուլի դրակսն բացակայութիւնը անոր գրքերէն՝ կարծէք առիթ տուած են գրողին, որ պէսզի իր բանաստեղծութեան պատուհանները բանայ դրսութեան ասիմաններուն եւ սփիւռքեան իր կացութենէն մեկնած բանաստեղծութեամբ մտնէ «համաշխարհային ձգողութեան մէջ»: «Սփիւռքի մէջ գրականութիւնը կը տառապի՝ ժամանակավրէպ միւրեքու եւ ոճերու մէջ բռնուած, նորութիւններ փորձելու վախը յաճախ կը կաշկանդէ գրագէտները»: Եւ ճիշդ այս պատճառով է, որ բանաստեղծուիին ստեղծեր է գրականութեան մէջ իր մօր վայրը, իր մօր տարածքը ուր կարելի է «ըլլալ», խօսերս եւ ըսելու ամէն բան որ կու մէջը, ներսին տարբերակումներուն եւ գիշերներուն հաւատարիմ, բայց դուրսի ճեպընթացին, խաղին ու ընդարձակումին զուգահեռ, աւելորդաբանութիւններէ եւ բարդութիւններէ ձերբազատուած, իր եւ իր ժամանակին լարումով, գրականութեան սերէն թռնուած: Եւ վերջապէս կը գրէ էջին վրայ ամբողջանալով, բառերուն ետին ծլարձակելով եւ քերթուածին շեռտալին հասնելով: «Երբ գիշեր գալ/վառել աչքերը լամբի պէս/լարել բառերը թէժ կրակ/եւ սպասել խոստմանայի առաւօտեան »եւ «Գրել մոռցած որ վերջինն եւ, առաջինն եւ, միջինն եւ/կրկին ծաղկիլ ամէն թափուող/ նմարկուող թուղթին հետ» :

ՍՈՐԵԿ - ՍԵՆԸՆ:

Լուսանկարները՝ Միլիա Տաւուսանի

ՍԱՓՈՆ

Սկիզբը ես էի,
յեսոյ եղանք միասին,
եհմա՝ միայն ի՞նքն է տիրուհի.

կը քալէ ինծի հետ անձամբայ ուղիներով
ու կը վարձանայ ինդին վրայ
նոր ցատկերու կայտաւերով.

կը քալէ լուռ
իր լոռիքներ կը կամարուի մինչեւ զիս
բիր գոյներու շքեղանք,
որուն ծայրը՝ Լեւոնու հեռու
էւ մոռցուած բառերու քզկին.

կը մագլցիմ գոյներէն վեր
լոռիքներ՝ ինծի թիկունք.

հասնելու հոն
ուր իր բառք նոր կը ծնի
կը թռթռվէ
կ'ոստոտէ՝ կը խոյայ ...

Ոչինչ գիտենք
բաժն աշխարհի կը խաղայ
երբեմն՝ սանդուխ դէպի վեր
կամ դէպի վար
նայած թէ ո՞ւր կեցեր ենք
ո՞ւր կը շարժինք:

Քառատողեր կը կազմուին
պարզ բացայայտ
մեղեդի մը հետունքէն
ցանկութիւններ կ'արթնցնէ

բայց ինք հետս
իմ աշխարհիս առեղծուածին դէմ
նոյնքան լուռ.

դարեր դոպած կարծես շրջան
էւ ալիքներն եզակեանին
մաշած շրջայ խութերը խիստ.

մահը երբեք մեր միջեւ
միտին միւսը՝ դատափեռուած
փափուացուած արգիլեալ



* * *

կը նայիմ իրեն,
այսինքն գիրերուն, որունք զինք կը խօսին
շունչը չկայ
ոչ իսկ նայուածքը, որ կրնար մեծնալ
պարուրէ՛լ փոխադարձաբար
հեռու հետաքրքիր մխրճերէ
հեռու հրեշտակային դաւերէ
հեռու ... մտերմութեամբ աններելի.

արտօնեալ էր.
դարձաւ արգիլեալ եւ սովորական.
բառը լոնց.

ինչ որ եղած է
կը շարունակէ շքեղութեան մը մէջ անտես
անգուշակելի
եւ կ'ըլլանք - ի վերջոյ - մէկ միասին
բառին հետ
որուն էինք սկիւրէն.

* * *

Պիտի դաւաճանէ օր մը
որովհետեւ լքեցի հարստութիւնս
բաժնեցի հմայքներս շունեցողներուն
եւ հետեւեցայ իրեն
կոտորելու հմայքը միթոսին
ուր բանտուեր էի իր հետ
շնչահեղձ անբառ

անցարատ էր պէտք

պեղե՞լ թէ ստեղծել
մտածե՞լ
թէ ջիղերու շօշափուկներով
յղանալ սրտին մէջ տեղ մը
դէպի վեր գացող
բնել
չմնալ անբառ չմնալ անանցարատ
լուսանցքի վրայ իսկ ոչ
բոլոր անդին տարածքներուն վրայ

ուր ով ինչու երբ
կը հրէ կամացուկ անպարոյկ
շոյնելու պէս սիրելու պէս
բոլորու քեզի պէս

* * *

բայց չէ մեռած

Հմենում

երկու թիւերու մէջ սեղմուած չէ առասպելը
որ ունի անուն
ունեցած քլլալու է երթողի մը
խիւսիս նման

չի մեռնիր
քսել չէ թէ՛ չի խաշուիր
եւ ամէն պահ

(բաւ լաւ ոչ ամէն պահ
միայն երբեմն
թէեւ «երբեմն»-ն ալ տանելի չէ
երբ խմածդ քաջախն է)

չի ցնցուիր
տեսիլքներէն
որոնք զինք վիհին վերէն
կը գամեն

Եւ ուրեմն՝ թեւանցուկ իր հետ
որովհետեւ ւաւելի շքեղ է երկուքով
թէեւ ւաւելի ծանր
եւ որովհետեւ ւաւելի դժուար է
սիրել շունչ շունչի
քան հեռուէ հեռու
անսահման ցանցերու մէջ թափառելով
երբ վաւերական ուղիները
մազաշիղերէն կ'ըթանան

կարելի է նոյնիսկ մոյրորի
գիշերներու մէջ բնազդներու մէջ
վարսագութեան մէջ

կարելի է ալնքան հեռանալ շնորհէն
ուր վայն երազելն իսկ մոռնալ
նոյնիսկ կարելի է մեռնիլ
երբ կայ ելքը միւս ափին
վերածնելու

Սափօ!

ՄԱՅՈՒՆԷ ԵՐԱՍՄԷԱՆ



Gustav Klimt, «The Virgin»



Վահան Բավադյան «A Blue Painting»

ԿԱՐԿԱԶԱՀՈՍ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

I

Ալիք-ալիք կ'արթննամ
խռովքներէն յարափոփոխ շարժումին
էւ թելերը լռութեան լոյսին կը թափահարեմ
ոչ թէ որովհետեւ գետնափայտի ժաճանակին
վանդակն է ջուրին եւ մարմինը ամպին
այլ պարպապէս անոր համար
որ քամիները լեզուին
կ'արձակեն զիս
էւ թելերս են
շղթայակապ

Քամիները կ'աղաղակեն ինչ որ տենդ
էւ կը նետեն անդադար քեկորները յիշողութեան
հետազնայ քայլերուն հետ ջուրերուն
նոր ւափերու հարցումներու եղեմին

II

Գորգի մը պէս
հիացումն իմ սուսկներուն կը սփռեն
էւ կը քայլիմ գալիքի ջուրերն ի վեր

Ի՞նչ քնեմ ես
երբ տարածքները բոլոր



- կայսրութիւնը ազամական տռասպելին -
մարտահրաւեր մտիճներ են յայնաբաց
որոնց աննիկնջ գիշերներու ծոցերուն
դանդաղօրէն կը շարժիմ

Եւ կը շարժեմ
շարժումները սկիզբին

III

Խոնարհած գէտի արկերուն թաւիշ
չեմ ցանկար քաղմիջ խիճերու գահին
խոնարհած արիւ պղտոր պատկերիս
չեմ կրնար կանգնիլ

Մամուռը չեմ ջուրներուն
ոչ ալ լոյսը գետափի նորաբողբոջ ծիլներուն
բայց կ'ուզեմ իօսսիլ ալիակերպումը
տառին ու յոյսին
ջուրին ու ծիլին

Ճատագումը խաւարին
գիշերներուն այբութենէն կը բանայ
դէպի պատաւ արմատներ
եւ յոռութիւնն արեւին
նոր գիշերներ
կ'արթնայ

IV


Ջուրերն ի դէմ
հովն է ուռած դատարկ ուռկան
ուր պատկերիս գիծերն աղօտ դեռ կը խաղան
Եւ ձայները ովկիանոսի քնդերքներուն
սարսափահար ձուկեր ինչպէս՝
ծամանակի աւազներուն վրայ ուռած
տխուր-տխուր կը թփրտան
կառչած ժորոռ յոյսի շիթին՝
հարցումներուն եւ խօսքերուն
լանձնապատտան

Ինչպէ՞ս կանգնիմ
ինչպէ՞ս կանգնեմ բարեյոնը շարժումներուն
երբ նախատակ օրերու ուրուականները քոյրը
դեռ աւտ ու անդ կատաղօրէն կը տեղան
ցատումները լիշողութեան արհաւիրքին
Եւ ջրամոյն աշքերուս դաշտերուն մէջ
աւերակներ կը դառնան

Ինչպէ՞ս չըլլամ եւ մամուռը յայտնութեան

V

Սկիզբը յոյսն էր
շարժումն ու խօսքն էր
ամառն էիր սկիզբներու սկիզբին
երանութեան լեռներու լանջերն ի վար
հազար շարժում եւ ծաղիկներ վառվոռոռ



հեքիաթագոյն առիւակներուն եւ իմաստուն ջուրերուն
կարօտարաղձ թեւերով
Տապանին վրայ նոյն ահապետի
նրկնցած էի մերկ ու գեղեցիկ
դիակի մը պէս
եւ կը սպասէի

Յարալէզները զաղթած էին ո՛ւր
միայն ձիւնը մոռացութեան
տարօրինակ դեռ կը տեղար
եւ մարմինն իմ կը ծածկէր
յիշողութեան թմբիւրով

Յարալէզները զաղթած էին ո՛ւր

V

Ձուր եմ կարկաշ
սիրոյ պուշայ արմաղան
ուր աստղերը տաղերն իրենց կը մոռնան
եւ անտառի լուսաստունը պատարագին մէջ միայն
ըմբռնութիւնն ինքսմի որդիներուն
գեղեցկօրէն կ'ամբողջանան

Եւ հերանոս անտառի սօսիներուն
անդամաւան արմատներն իմ իմաստուն
որ ջուրերուն կարօտներէն կը ձենձերին
եւ անմատոյց խաւարի արշալոյսին
արշալոյսները կ'այլրին
հաւո՛ւն-հաւո՛ւն

Կուցե արօր մերձենամ
իմ մարմինին վերաժաղկեալ ժեսերուն
եւ տաղերգիւ արմատներուն ու ծիլերուն
մանկութիւնը լուսածայն

Աշուղն եմ եւ կարօտներու աստղերուն

VII

Աշուղն եմ եւ կարօտներու աստղերուն
եւ իմ պանդուխտ ջուրերուն երթն եւ անքուն
կողերդ ի վար ասեղծութիւնք փոթորկող

Դուն այն ծաղն հա սյացիկ
որուն անպուսպ ամառներէն կը յորդին
երկինքն ի վեր խոյացող բարունակներ ուղղածից
եւ տեսիլները հողին
իմաստութեան նոր արիւնքուն կ'աղեղունին
առիւակներու թեւերուն շարժումներով
եւ դողերով թափանցիկ

Աշուղն եմ եւ սիրաշխարհի արշալոյսին առաջին

II. ԿԵՐԱՎՈՐՈՒՄԸ

(Հատուածներ՝ «Ձուրիւն Վիճակները» սենտիպ կատրէն)



ԲԱԺԱՆՈՒՄԸ

Բաժանումէն շաբաթ մը առաջ

Դժուարութեամբ, սակայն վերջապէս համոզւեցաւ ճակատագրին պարտադրած նոր որոշումէն: Իր ծննդավայրէն, իր հայրական տունէն պիտի քաժնուէր:

Տունէն հեռանալու կտամ բաժնուելու թուակա- նի որոշման օրն իսկ, իր սենեակը քաշուելով, նոյն երազներ կախեց անոր չոր ու ցամաք պատերէն:

Երազներ, որոնք կամայ կամաց, նոյն ծրագիր- ներու թեթիկով սկսան հիւսուել՝ ինքնաբերաբար:

Ու յանկարծ, չես գիտեր ուրկէ ուր, մոռցուած ժպիտ մը արթննալով, անձանօթ հետաքրքրութե- նէ ծնունդ առած ուրախութեան մը ոտուկըրը գծեց գէմքին վրայ:

Գոհ էր ու համոզուած:

Ուրիշ ճար չունէր:

Առաջին անգամ ըլլալով պիտի հեռանար սու- նէն, պիտի բաժնուէր անկէ, նման բոլոր անոնց, որոնց պանդուխտ մակդիրը կու տան մարդիկ:

Բայց այս վիճակը երկուր չտեսնէր:

Մենեակին ժամերը անզգայարար կը հալէին, իսկ քիչ անդին իր կեանքը նստած կը մնար սեղա- նին առջեւ, դիմի՛ն սառած:

Ինքնեկ ու անլեզու բազմաթիւ տրոմուսթիւն- ներով շաղախուած ցաղափարներ, հապճեպով եւ անխնայ իրողութեամբ շարուած՝ կը յաղթէին ու- րախութիւնը:

Հագիւ նշմարելի, նայնիակ աննշան արցունք մը կը ծնէր իր կոպերուն տակ, խոնաւ տրոմութիւն մը կը փոթթիւնէր սրտին ու գիւր կը պահէր այս- պէս նոյն վիճակին մէջ:

Մինչ երեկոն դէպի իրիկուն կը քալէր, մօտա- յուտ թափիծը մեղմաղնելու համար, իր մաա- ծումները կրկին կը թաւայէին երազի ալիքնե- յուն մէջ:

Բաժանումէն օր մը առաջ

Այդ առաւօտ, կուշտ գոհունակութիւն մը շալ- կած արթնցաւ:

Ինք, թէ՛ մաքրով եւ թէ՛ ու հաստաւորապէս պատրաստ էր:

Պատրաստ էին նաեւ իր կապողները:

Այս րորոյին մէջ իր երազը ունէր նաեւ անժրի- տելի գիւր, անոր համար ամրույթ պիտի երազած էր ու նոյնը արթնցուցած մտքին մէջ:

Քստնչորս ժամեր ետք, պիտի հեռանար տարի- ներու իր ընտանեանէն, իր բարեկամներէն, իր սէրերէն եւ մանաւանդ իր միակ ու մեծ սէրէն:

Ոչ ոք գիտեր, թէ իր մէջ կար, դոյռութիւն ու- նէր, ու երկար առեւել ի վեր կ'ապրէր իր իւր ու հին այդ սէրը:

Ոչ ոք...

Աշխարհի մը չափ սիրած էր ու սակաւին կը սիրէր:



Լուսանկարները՝ Մաքս Մվալեանի

Որովհետեւ անբակտիկ կապ մը կար երկու-
ֆին միջեւ:

Այդ կապն էր, որ մինչեւ հիմա պահած էր ամ-
բսրէն ու զազտնի, հեռու բոլոր աչքերէ: Բայց
ասկէ ետք, կարեւր չէր այլեւս պահել, թաքցնել:

Կարեւր չէր նոյնիսկ հեռացնել, մոռնալ հը կամ
այ հին քուրջի նման նիւտել կամ ալքել:

Տմարդի եւ անսիրտ բլլայտ: Էր, իր այդ մէկ
հատիկ սէրը խարոյկի գոհ դարձնելու համար:

Իսկական տնդութ մը պէտք էր, որ բլլար նման
սէր մը...

Մէր մը, որ երբեմն եղած էր ցաւ. յաճախ՝ իրա-
կանութիւն եւ միշտ՝ խթան:

Ամէն վշտակից սրտի չէ տրուած իր զգացածը
ամբողջ խորութեամբ արտայայտել, խոստովա-
նել եւ կամ հաղորդել:

Քաջերուն տրուած էր այդ:

Ուստի, ձեռով մը ինքզինք մխիթարուած
զգաց:

Մեկնումի պահը

Արշայրայր բռնկելու մօտ էր, իսկ իր սիրար,
անսահման զիտակցութեամբ մը բեգուած:

Սկսեալի պատուհանէն ներս, արեւի քանի մը
բարեկամ նմուշներու մուտքն ու անոնց իրքեւ
արդիւնք, մութ խաւարի հետքերուն վախկոտ
մուկերու նման անյայապացումը, վերջին անգամ
բլլայտով տուհալար կը դիտէր:

Ինք՝ վերջարշաւէն մինչեւ արշայրայս սարսիներ
ապրած էր:

Բաժանումի պահը վերջապէս հասած էր:

Հիմա էր:

Ահա պաղ ու յատակ իրականութիւն մը:

Բաժանում բառին զառնութիւնը կտրելի չէ
անմիջապէս ճանչնալ հը բմբունել:

Այս մէկուն ծանօթ են անոնք, որոնք առաջին
անգամ, իրեն նման եւ իրմէ առաջ, դուրս եկած
էին իրենց րնաւալուէն:

Ինք, մինակը, ուրիշ երկիր մը կը գաղթէր,
կ'երթար:

Մինակը: Ո՛չ, ո՛չ, իր յուշերուն հետ, իր...

Նախ գողգոթուն կուրծքին սեղմեց սիրելիներ-
ը՝ երկարօրէն:

Կը գլար, որ գինով էր:

Տրամութեամբ հարրած գինով մը:

Կը պզտը նաեւ, որ իր կարողութենէն աւելի
բարձր քնկնող բան մըն էր բաժանում ըսուածը:

Անոր համար աչքերուն մէջ կաթիլ մը արցունք
սկսաւ գողալ:

Ինք պիտի երթար, մինչ՝ իր յուշերը պիտի
մոռային:

Կը վախնար, որ նոր կեանքը իրեն պիտի նայէր,
իրքեւ բոլորովին նոր անծանօթ մը:

Կը վախնար, որ բաժանումը մոռացութեան
պիտի տանէր իր սէրը: Եւ վախը կեանքին մոռալի-
քեց, որ հոն, իր այդ ծննդափայլի տան մէջ, շատ
յաճախ կ'իտնէր ազուր ժամերով յուսաւորած էր
գինք:

Տունէն բաժնետուղները միայն դիտեն, թէ ինչ-
պէս հրգե՞ն մը կը ցանուի իրենց էութեան վրայ,
ծիշդ ու ճիշդ այս բաժանում-մեկնումի տխուր
պահուն:

Ու իր մէջ հիմա անյայտ բանի մը քոնկումը կար:

Ինք ներքնապէս կ'այրէր:

Նոյն պահուն, կարծես վերէն, տեղէ մը, խոնար
տրամութիւն մը ինկաւ ուսերուն վրայ:

Կը զգար, որ ալ պիտի չվերադառնար:

Ահա լեռան մը չափ ծանր տխրութիւն մը:

Թերեւս օր մը վերադառնար:

Բայց, ե՛րբ... Չէր գիտեր:

Թերեւս... առիթներ ետք... բախտաւոր օր մը:

Ահա զարնանային մօտսդուա անձրեւի նման
յույս մը:

Կը գիտակցէր ճակատագրին մանր, ճարպիկ
սակայն վտանգաւոր խաղերուն ու յիօրէն կը
վախնար անոր ճիրաններէն:

Գիտէր, որ պայմաններու բերումով, այլեւս
պիտի չկարենար ողջունել իրքեւն ճառագայթ-
ները իր սենեակէն ներս:

Այլեւս պիտի չկարենար տեսնել խաւարին հո-
սիցը՝ իր սկսեակէն դուրս:

Խաւար... յույս... Ի՞նչ բառեր էին ասոնք,
որոնք յանկարծ մտերմացած էին իրեն հետ ու
անբաժան յնկերակիցներ դարձած:

Ուր էին ասոնք՝ այս մօաիկ անցեալին... ըսէ՛ք
... ո՛ւր:

Իր անցեալը երկու տնտակ օրեր ունեցած էր,
ուրախ եւ տխուր:

Չեզոք փճակ չկար:

Բայց, ամէն պարագայի, հիմա երկուքի յիշա-
տակումն ալ տխուր էր, որովհետեւ այլեւս անոնք

հաստատապէս անցեալին կը պատկանէին:

Սակայն եւ այնպէս, բարի էին հին ժամանակները:
Շտկուեցաւ:

Փորձեց շտրունակէլ ըստանձան կիսատ մնացած արարողութիւնը:

Անծանօթի մը ողէս երկարօրէն նայեցաւ իր բարեկամներուն:

Կրկնակի կարօտով համբուրեց իր սիրելիները:

Մէ, Աստուած իմ, այնքա՛ն ջերմ էին անոնց համբոյրները, այնքա՛ն սուք: Այդ վայրկեանին տարիներու թմրութեան տակ պահուած ու քնադած յուշերը, վայրկեանապէս սարսուռի մը նման արթնցան:

Կրկին ու կրկին ձեռքի ջերմադին սեղմուեցին կապարեց, անդդալարաբար:

Ու յետոյ...

Համակրանքի քանի մը կարօտապին ըստեր՝ արտադրանք, ու վերջ:

Պիտի երթար հոն՝ ուր աստղերը անծանօթ էին:

Գիտէ՞ր, որ խաղաղ ու հանդարտ եւր կեանք մը ապրելու համար ամէն հին յոյս եւ երազ պէտք էր, որ ջնջուէին:

Ու այս մէկը անմիջական ու կատաղի իրպում մը կ'ենթադրէր անցեալէն:

Գիտէ՞ր:

Հապա՛ իր սէրը...

Մեկնում

Իր ետեւ, տակաւին մութ լուծիւնը քաղաքին հետ կը քնանար:

Իսկ ինք կուրծքին ասկ անվհատ սիրտ մը շալկած, աչքերուն մէջ կոտորուած նախուծք մը, անվերադարձ անցեալի յիշատակները մաքին մէջ երգելով, իր ևսին ձգելով հարադատներու հեծկրկնութիւնները՝ հեռացաւ, չապիկի գլխաւորին մէջ պահած հին նկար մը, ամբողջ սեղմած:

Մեկնումէն օրեր ետք

Նոր օրերը, իրենց նոր ժամերով, բացի յոյսէն՝ ամէն բան իրենց հետ բերած էին:

Մութ, տխուր եւ սեւ:

Նոր օրերը սկսած էին շատ դանդաղ ու ծանր սահել:

Հզօր յիշողութիւն եւ երանութիւն արդէն

սկսած էին գինք ունելի՝ դժբախտացնել:

Տակաւին կային նաեւ իրողութիւններ, որոնց չղթային օղակները կորսուելու վրայ էին դիտակցաբար. թերեւս...

Ինքն այլ չէր գիտեր:

Մեկնումէն անմիջապէս ետք, առաջին իսկ օրերուն, ժամերով աշխատած էր դէմքեր մաարներէ, անուններ վերահասպակ, աղօտած նկարներ վերջիչներ:

Ձգադած էր, որ աշխարհը երբեմն բարդ, յաճախ շատ պարզ ու միշտ տնայրդար եղած էր իրեն նկատմամբ ու վերջապէս դարձած էր մոգական թաաերարեմ մը:

Վախնալով, որ իր անցեալը կրնար ծերանալ, չուրաթներով ապրեցաւ իր ալլ անուշ եւ անմեղ չինը:

Որովհետեւ իր երազին մէջ գաաւ իրական հաճոյքը կեանքին:

Փորձեց ամէն օր նորեր չիւսել:

Չյաջողեցաւ:

Փորձեց ամէն վայրկեան եւ ամէն առիթով իր սիրած նկարը ժամերով դիտել:

Իր բոյոր յուշերը մաղաչաբ չէին հեռացած իրմէ:

Ձգացած էր անոնց հեղնութեան սարսուռը:

Օրերը զսպուած հառաչով աւելցած էին, որոնք երբեմն արջուհներ ցանեցին իր այաերուն:

Նկարը յուշեր ընաւ ու ինք անոնցմով ամէն օր ապրեցաւ:

Ամէն օր անոր ներկայութեան կամովին ընկենց ինքզինք:

Ինք սիրահար մըն էր, նման բոյոր սիրահարներուն. անմեղ եւ ալլար:

Նկարը իր առաջին սէրն էր, որուն չուքին տակ պատանութիւնն ու երխաստարդութիւնը աճած էին քաղցրօրէն:

Նկարը:

Հինցած ու հնամաշ պատմութիւն բուրոյ քաղաքի մը նկարն էր, որուն կարօտը իր հողին հային զարճուցած էր:

Մէր՝ որ ուրիշ բան չէր եթէ ոչ լուրջ պաշտամունք, ծնած անմեղ սրտի մը մէջ:

Այս աշն նկարն էր, որ ամէն օր թարմ կարօտ բերաւ ու իր հողին պովաղուց:

Այս միակ նկարն էր իր ծննդավայր քաղաքին՝ Հայկաթի, որուն կարօտովը կ'ապրի մինչեւ այսօր:

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

ՓՆՏՈՒՄ

Ժամանակի հողը փորփրելով
Իմ հոգին իր կորուստն էր փնտռում,
Հօշափում ինչ որ գտնում էր, ձեռք տալիս, դնում մի կողմ,
գնում էր սուսը եւ նորից դառնում,
որպէսզի նորից գնայ
օրուայ սքանչելի պայծառութեան շրագնող լոյսի մէջ,
որ իշխում էր տարածութեան ամալի եզերքներին –
մի պատկեր ցած նայող երկնային խորաններից:

Ձեռք տուր, օգնիր նրան, որ մի դէմք է փնտռում,
անհանգիստ անցնում ժամանակի քեկքեկուն արահետներով:
Ինչ գտնում էր այն չէր, ինչ անուն էր տալիս դառնում էր
արձագանգ իր մարմնի վրայ
Թէեւ սէրը չկայ, բայց մնում են նրա ոտնահետքերը
Օրուայ սքանչելի պայծառութեան շրագնող լոյսի մէջ:

ՓՈՂՈՅԻ ԲԱԺՆՈՒՈՂ ՄԱՍՈՒՄ

Սա մի ժամանակ է, որ շունի անուն,
(մի հանգույց, որ ոչ ոք չի կարող քանդել):
Ստունաշունչ մի գիշեր ծածկում է մի քաղաք եւ մի վայր:
Ձեռք մի՛ տուր նրա ծածկոցին նենգ ու լուռ
աստղերով պարզարուած:
Հոգին նուազում է ժամ առ ժամ ամպերում մթնող
լուսնի պէս: Իսկ դրսում
մարմինն է շրջում՝ կորցրած իր տունն ու հասցէն:
Բայց դու մի՛ գնաւ մենակ, ձեռքդ
ուսիս դիր, յենուիր ինձ: Մենք պէտք է քայլենք իրար հետ,
եւ ոչ թէ մէկ-մէկ, առանձին:



526-2018

Van Gogh «A stary night»



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋԻՆ

Հոկտեմբերի վերջին, ուշ էրեկոյեան երկնքի ամպամած
տաճարի ներքոյ, ուր շրջում են քաղաքում
ճակատագրերը
մարդկային կերպարանքով. հնչում է յանկարծակի
հեռախօսի մի զանգ,
էւ նա, ով սպասում է վերցնում է հեռախօսի նիւսք ու սեւ փողը,
բայց այն ընդհատուում է - (ո՛ւ, ո՛ւ, տուկ, տուկ, տուկ...)

Վսեմ ռդրերգութիւնը հոկտեմբերի մոսյլաշունչ
մառախուղի մէջ
ցնցում է յիշողութեան հատուկէնտ վիտրաժները
եւ մի կնոջ մրմունջն ու աղերսանքը
մտքերի անհաւանական թառուտում կորած:
Հեռախօսի զանգը հնչում է նորից փողոցի
ամայացած պատկերի վրայ
եւ լռում տղամարդու դողացող ձեռքի մէջ:
Մի թանձր լռութիւն
թաքցնում է արձանացած դէմքերը մէկ առ մէկ
իր մութ արգանդում: Յոյսը կուլ է զնում
ինչպէս մի լուսին՝ ցեխաշրթի մէջ:
Մէրը զինուած սպանում է սիրահարներին
եւ թափուող արիւնը փրկագինն է նրանց
մուգ-կարմիր վերջալոյսի
կիսաբաց անկողնու մէջ. աստղերի
վերջին ճիգերի տակ,
որ ուզում են դուրս գալ, բայց չեն կարողանում:

ՀԱՆԳԻՍ, ՀԱՆԳԻՍ, ՀՈԳԻ

Այգու մէջ հեծեծում է
մենութեան մի առուներ: Գիշերն իր ձեռքով
թմբերն է օրօրում ծառերի քնի մէջ:
Մենասցէ մի մարդ՝ պատկած նստաբանին
փաթաթուած մթութեան փշալարերով:
Մի քանի մոլորակներ
վազում են աղմուկով
երկնքի խույ դաշտում: Մի ժայն է բարձրանում
երազի անդունդից
էւ նորից հանգչում: Ոչ մի ճշմարտութիւն
մեզ չի պաշտպանել: Կէս
վստահութիւն, քառորդ խօսք, քառորդ քաղ –
էւ ամբողջ մի անկում: Ժամանակի մէջ
սոսկալի մի վճիռ
իւր անիւն է գլորում առանց նայելու
աջ ու ձախ: Կիսաբաց պատուհանից
մի հոգի տազնաւզով
նայում է ամպերի լճակում խորտակուող
ստազատանաւին: Եւրքելում քաղաքի
ստուերներէ մէջ
մի սարսափահար ճշմարտութիւն է
մէր սիրտը շափում: Հանգիստ, հանգիստ հոգի,
մենք դեռ պիտի անցնենք գիշերն ամպից ամպ,
նայնիսկ էթէ քաղաքի ստուերների մէջ
կորցնենք իրար:

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ

Մոռցիր լեզուն քարոզներուդ
 եւ կրկնուող աղօթքներուդ:
 Մոռցի՛ր, մոռցի՛ր.
 Ինչ որ քեզի ստրկեցուցած են շարունակ
 իբրեւ օրէնք, իբրեւ հնարք
 հռետորական: Բառերը շուտ դուրս հանէ
 իրենց ծանօթ հանդերձանքէն.
 մոռբալիքով, մերկ տաւարի պէս
 պանոնք կախէ կեռ ճանկերէն -
 թող տեսնուին
 մկանները անոնց ներքին,
 եւ միտերուն վրայ հոսի
 արիւնը տաք:
 Մնցիր բառին,
 անոր բերած խորհուրդներուն քակարդներէն՝
 լռեցնող, շփոթեցնող
 քիւր ուղղութիւն պիտի գտնես,
 քանի որ միշտ վարժուած եւ
 չիրենք տեսնել քեզի ծանօթ
 շրջագիծին մէջ բանտուած:
 Մնցի՛ր, անցի՛ր
 քեզ երկպիեղ կող կածաններէ,
 ներսդ ատկայ ստորերկրեայ ուղիներէ,
 աստղեր տանող, կորսնցնող ալաքներէ...
 Լեզուն գուցէ քեզի համար
 հաղորդութեան միջոց է սոսկ
 առօրեային մէջ գործածուած,
 օրաբերբին մէջ, ձայնաւփիւոներուն,
 հեռատեսիլի կամ համացանցի
 պատաստին վրայ
 միշտ բռնաբարուած...
 Բայց՝ առտնին
 եւ նեղ թաղային գործիք է աման,
 բայց ատկէ անդին,
 գուցէ ներքին բախողներուդ մէջ ճամբորդես,
 հասնիս արմատը ջիղերուդ
 եւ մոռցուած սպրռմներուդ:
 Գուցէ նաեւ թմրած, ծուլացած,
 ձմեռնաքունի գիրկը գտնուող
 էութեանդ մէկ մասը արթննայ,
 հաւաքական ու անձնական յիշողութեան
 տարրեր գտնէ արեանդ մէջ,
 հարցադրէ եւ մտածէ:

Գուցէ այն ատեն
 գտնես մատուածդ՝
 տեղ մը անժանօթ

եւ պարմանաս.
 որ պայն ինչպէ՞ս
 դեռ չես ճանչցած:

Տիք-տիք քարերն են,
զօրաքարերը յուր բարձունքներու,
աչք-խոռոչները իւրաքանչիւրին
կը սպասեն իրենց ժամադիր շողին,
որ միշտ կը հասնի
ժամացուցային ճշդութեամբ, անձայն,
նոյնիսկ երբ այլեւս դիտորդներ չկան...

Միականի այդ քարեղէն հսկաներու
խումբը՝ դաժան, լերկ հողերուն,
մամուռապատ հազուստներու
հանդերձանքին մէջ թողլըուած,
վկայութիւն մըն է հստու
շրջանէ մը, երբ մարդը հոս,
գերլարումով կեդրոնացած,
իր հայեացքը սեւեռած է անջրպետին
էւ պռուցած աստղերուն հետ...
Փորձած կարդալ՝ տիեզերքի խորհարդը: Չայն
առնչելով իր ծագումին,
մահուան ահին,
պատմութեան ու ժամանակի
քմայքներուն,
բնութեան կամ աստուածներու
անհերք, ան-
հասկնալի նշաններուն:

Չօրաքարերը պահապաններն են անքուն,
ժամանակի մը արթուն,
որոնք կը պահեն,
գաղտնիքը ինկած գիսաւոր աստղէն
երկրի արգանդին:

Հաւանդուած գիտութիւնը կը կորսուի:
Խոռոչները հիմա արդէն
վերածուած են
կլորակ, սին դատարկութեան,
չստանձնուած ժառանգութեան:
Քարահունչի
դիտարանը նախնադարեայ՝
դարձած վայր մը անիրական,
գուցէ՛ նոյնիսկ գնդիրական,
որը մարդը կրնայ
իր իսկ ստեղծած հրաշքը մոռնալ,
ինքզինք ուրանալ:

Եւ քարացած կիկլուցները ակնդէտ,
աստեղային ժամանակի
վերադարձին կը սպասեն -
հանեն տարագր իրենց ժայռային,
դուրս գաւն վիճակէն ամուլ, պարդային
կրկին բարբառին տիեզերքին հետ...

ՅԵՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵՆՆ,

ԹԱՏԻՈՆ

Այս փոքրիկ երկրի մեծ քաղաքում, ուր շուներ տիրոջը չի էլ ուղում ճանաչել, որովհետև ահիբերը շատ են եւ անճանաչելի, օրը սկսուում է կռակածներով:

Հրեանդը բժշկին է կասկածում, ուսանողը՝ դասախօսին, մայրը՝ որդուն: Նախկին աղատամարտիկը փնտում է եւ չի գտնում նախկին հրամանատարին: Նախկին հրամանատարը չի նայում ստորդեանեայ՝ զետեւողինների պատերի տակ նստած մարդկանց, որովհետեւ այնտեղ, զինարկները պարզած մուրալիաների աչքերի մէջ ծանօթ փայլեր է որսալու: Նախկին երաժիշտը իր ջութակի արձակած հնչիւնի մէջ չի ընկալում իր հոգու թրթիռները: Նախկին պատերազմի վետերանները անփաստաթուղթերով են նայում վերջին պատերազմի վետերաններին, որովհետեւ նրանք ուրանում են նախկին պատերազմը: Նախկին պետական ղեկավարները վերջին պետութեան ղեկավարների բարեհաճութեանը արժանանալու համար փնտում են իրենց անցեալը: Նախկին ղեկավարի նախկին հաւատարիմները, ներկայ ղեկավարի ներկայ հասարակիւններն են եւ նախկին ղեկավարների թերութիւններն են ձաղկում: Եւ ինչ բարեղործներ են ծնուում այս քաղաքում: Եթէ մայրը որդուն, յանկարծ, սիրում է, նրա նկարը տպագրում է քաղաքային թերթի առաջին էջում՝ ի ջոյը միւս մայրերի:

Իսկ եթէ ապերախտ որդին չի ընկալում մայրական յարեղործութիւնը, նրա նկարը տպագրում է նոյն թերթի մէկ այլ էջում՝ «Բարոյականութեան խաղճերուկ» խորագրի ներքո:

Այս ամէնով հանգերձ, օտարները սիրում են այս քաղաքը, որովհետեւ իրենց, հաստատ ոչ ոք չի կասկածում:

Եւ որպէսզի քաղաքը իր ողնաշարը կրծող կասկածը չրի, ինքն իրեն սկսում է նախաւարից: Այդ զերեզմանաւորները կասկածից դուրս է: Այն-

տեղ իմ հրամանատարն է ննջում: Շատ ծագեցապետներն կան նրա չխրիմիմ: Դրանց մէջ կայ մէկը, որի ժապաւէնի պրոթիւնը միայն ետ կարող էմ վերծանել: «Իմ դատաւորին եւ իմ որդուն: Կայսնուդ թիւ 1-ից»: Վերծանեմ, թէ շվերծանեմ, մի-եւնոյնն է, պատմութիւնը մի օր մեզ պատկու է: Ինձ, Հելս Հերոյեանիս՝ շատ բան իմանալու եւ լուելու, ձեզ՝ ոչինչ լիմանալու եւ խօսելու համար:

Վերջին հրեայ պրոդի պատմութեան վերնագիրը յօրինել է պռաջին հրեան, իսկ վերջին հայ պրոդի պատմութեանը մտում է անաւարտ, որովհետեւ առաջին հայր վերջին հային ոչինչ չի ասել: Մեղաւոր է արդեօք առաջին հայը, որ իր բաւալարալուծ «թուրք» բառը չի ունեցել: Մեղաւոր է արդեօք վերջին հայը, որ իր պատմութեանը առանց թուրքի հոյա չի դնում: Միւրահարակտը պատմութեանը է մտնում, մէկ էլ թուրքը քիթը խաթում է մէջը: Պատմափէ՛պ է գրում, թուրքը կայ ու կայ: Քնում-գարթնում է թուրքի հետ: Եւ չի գարմանում, երբ իր զրէլից, լուսամփոփից, մոխրամաղից, ճերմակ թղթից ու ժամացույցի տկակոցից թուրքի ծածածուած ներկայութիւնն է ազգաբարոյում: Որտեղ հայ, այնտեղ թուրք: Եւ ի՞նչ արարելնակ հարապատութիւն է: Ինչպէս իմ հրամանատարն էր տոտում. «Մեր միմի թուրքից աղտոտուելու միտի միջոցը, նրան յաղթիլն է՝ թէ զրոտում, թէ ներսում»: Ինչու մտահոգ աւելագնում էր. «Դրոյի զործը հեշտ է, մենք կ'անենք: Ներսիւնը՝ Աստույ աթուղցութիւնն է պէտք»:

Քիչ փոխափայլը, Հերոյ Թատրոն է, իսկ ի՞նչ պիտի է: Թուրքն էլ է թատրոն, հայն էլ: Թուրքը թուրքի դեր է տանում, հայը՝ հայի: Ով յաւ դերառնութիւն արեց, նրան էլ կը ծափահարեն:

Հրամանատարի տոածները քննարկման համար չեն: Թեոթ՝ ինչ, որ չեմ հասկանում. Ոչ ոք էլ



նրան չի հասկանում: Ձեռք ենք անում, իբր հասկանում ենք, բայց ինքը, հրամանատարն էլ է զգում, որ չենք հասկանում: Նայում եմ նրա աչքերին, սրունք թուում է ուր որ է ակնակապիճներից դուրս կը թռչեն եւ ասում:

- Ճիշտ այդպէս, պարտն հրամանատար, թաարոն է:

- Այ դու Հերո, գրող ես: Երկու լապիկ էլ ինձնից անել ես մաշել, դու ասա՝ ո՞վ պիտի էս ժողովրդին տիրութիւն անի: Ո՞ր մի խելօք մարդը պիտի կը հանի: Եթէ իմ ու քո նման պժներն էլ ձեռքերը լուանան, մեր հայր ի՞նչ է լինելու ...

Այսօր արտառոց օր է ինձ համար: Առաջին, որ հրամանատարը մարտական կարեւոր առաջադրանք ունի յանձնարարելու: Առիկ է, որ միայն Հերոն գլուխ կը հանի էլ զործից: Ի հարկէ յուզում եմ: Երեւի հեռախոս գութեան խնդիր կայ: Մի քիչ թուրքերէն գիտեմ, մի քիչ էլ, ասում են, թուրքի նման եմ: Տղերքն են ասում, երեւի իսկական հայ չեն տեսել: Ինչ է թէ, սեւ եմ եւ ծալքերը վեր ոյորած պէիս ունեմ: Երեւի իսկական թուրք

էլ չեն տեսել: Ի հարկէ յուզում եմ: Առաջին անգամ ինձ յիարժէք տղամարդ եմ զգում: Ի հարկէ վախենում եմ, մէկ էլ անսար գերի լնկայ, մէկ էլ անսար ...

Բայց այն, որ հրամանատարը մտառում է, ամէն ինչ արժէ:

- Հերո, - ասում է հրամանատարը, - չառ կարեւոր առաջադրանք է: Գրող ես, կը հասկանաս: Առաջի, չէ՞, թաարոն է: Էսօր դու վերակացուի դեր ես տանելու: Հսկելու ես, դիտե՛ս ում, ութսունամետր մի պառաւի, որի թուրը զատալքել է: Ձերբակալութեան հրամանը ես եմ տուել: Եթէ դրանց դեղում տղամարդ կայ, կը ներկայանայ: Եթէ ոչ՝ պատմութիւնը թող ինձ դատի:

- Պարտն հրամանատար, - կմկմում եմ, - ախր ...

- Ի՞նչ ես այժի պէս մկկում: Ախր-մախր չկայ... թաարոն է, եւ եթէ ուզում ես, որ այս պատերազմում ես ու դու յաղթենք, պիտի նամուսով մեր դերը կատարենք:

- Պարտն հրամանատար, ախր ... թերթերը ...

- Թերթերն էլ են թատրոնի թող գրեն, որ մենք սաղիստ ենք, թույլ գրեն Ասալին ենք, ինչ պիտի ենք: Մեր դորժը էս պատերազմը շահելն է... Ես թույլ դերասաններից մէկն էլ մի պատահի լինի:

Հրամանատարը ինձ ուղեկցեց սենեակ, որը ութսունամեայ պառաւի քանոնախուցն էր: Ինձ ստորացուած էի գլուխ: Նաեւ մէջի ուժ չէի գտնում հակաճառելու: Նրա ահաքը յոգնած էր, խօսելիս չոյում էր չափաւորած երեսը: Երեւի յուզմունքը թարցնելու համար: Նաեւ ինչ-որ հիասթափութեան, վախի, անորոշութեան շղարչ կար նրա կայծկյառն աչքերում:

- Ահա քո կայանաւորը, Հերո, Կայանաւոր թիւ 1, - դույլ տուեց հրամանատարը, - բարեկիր մայրիկին:

Բարեկում եմ:

- Բարու մէջ մնաք, որդիներ ջան, - հանդիսաւորապէս պատասխար:

- Հարցրու, գիտի՞, թէ ինչու եմ իրեն ձերբաւար:

Հարցնում եմ:

- Հրամանատարին սոսա, որ դիտեմ: Թանցագործութեան համար, - ասաց պառաւը եւ հայեացքը ուղղեց ինձ, իմ աւտոմատին:

Ասում եմ:

- Հարցրու, ի՞նչ յանցանք է, գիտի՞:

Հարցնում եմ:

- Ասա, որ գիտեմ: Իմ յանցանքն էն է, որ ես հայ եմ, բայց իմ թուր չգիտի, որ ինքն էլ է հայ:

Հրամանատարը աչքերը խօսաւորեց: Նրան թուում էր, պառաւը անկէժքերով կը զիմաւորի իրեն: Ներկայացումը այլ հունով էր գտնում: Քիչ մնաց հրամանատարը խոստովանել իր ճախողումը եւ ծնկի իջնի պատուի առաջ: Քիչ մնաց արցունքներով թրջել պատաւի փէշը եւ խոստովանել, որ ինքը անորոշութեան եւ վախի մէջ է եւ այլեւս չգիտի իր անելիքը: Պառաւը գործիքներով նայեց հրամանատարին ու ինձ դիմեց:

- Ասա, որ ինքը յոգնած է:

Ես անելանելի վիճակի մէջ էի: Աւտոմատի ծանրութիւնը ճնշում էր ինձ: Այս ներկայացման մէջ ինձ աւելորդ էի գղում: Ռեգիսի գուրս գալ, հրամանատարը ստուեց:

- Շարքային Հերոյան -... - յետոյ բարեացաւ, խեղճացաւ, - Հերո, հարցրու, թէ էդ ո՞նց եղաւ, որ իր նման մայրիկի թուր դասալիք դարձաւ:

Պառաւը իր դերի մէջ էր մտել, բառ առ բառ լսում էր հրամանատարի ասածի կրկնութիւնը, յետոյ պատասխանում: Նոյնը հրամանատարը:

- Տղայ ջան, հրամանատարին ասա, որ իմ կամքին հակառակ եմ աղքատ, որս համար էլ կ'ապէս եղաւ:

- Հերո ջան, մայրիկին սոսա, որ ես էլ իմ կամքին հակառակ ամէն օր ապրողների հետ ապրում եմ, գոհաւորների հետ գոհաւում: Թեառյ ասա, որ ապրեմ, թէ գոհաւում, մէկ է, էս պատերազմը շահելու եմ: Իր եւ քո հետ եմ շահելու:

Ասում եմ:

- Տղայ ջան, հրամանատարին ասա, որ գոհաւոր հեշտ է, ապրելն է զժուար: Ասա թող դրա մասին մտածի: Անպայման թող մտածի:

Կրկնում եմ:

- Պարոն հրամանատար, մայրիկին ասում է, թող մտածի, անպայման թող մտածի:

- Հերո ջան, մայրիկին ասա, որ իր թուանք պատժելու եմ, չգտայ՝ որդուն եմ պատժելու, չգտայ իրեն եմ պատժելու: Խիստ եմ պատժելու, եւ թող պատմութիւնը ինձ դառնի:

Մայրիկին ասում եմ, որ պատժելու է, խիստ է պատժելու:

- Տղայ ջան, հրամանատարին ասա, որ ինքը իմ դատաւորն է եւ իմ որդին:

Ասում եմ:

- Հերո ջան, մայրիկին ասա, որ էս թաւորոնում, թէ ով ում դատաւորն է եւ ով ում որդին՝ միայն Ասաուած դիտի:

Ասում եմ:

- Մայրիկ ջան, հրամանատարը ասում է, որ միայն Ասաուած դիտի:

- Տղայ ջան, հրամանատարին ասա, որ էն ինչ որ Ասաուած գիտի, գիտի: Էն, ինչ որ չգիտի, մենք պիտք է իմանանք: Թեառյ, ասա, որ մայրիկը չի սիրում, երբ ներկայացումը ձյճգուում է:

Պահր օրուացի եւ ինքս էլ փորձեցի պարտաւորութիւն անել:

- Ճիշտ այդպէս, ձյճգուում է ...

Հրամանատարը մօտեցաւ ինձ, պինդ բռնեց գլուխս, ցաւացնելու մատիճան ճակաւը իմ ճակատին սեղմեց ու շշնջալով ասաց:

- Հերո, հայրենիքը քեզ չի մոռանալ:

Հրամանատարը գնաց, երեւի իմանալու էն, ինչը Ասաուած էլ չգիտի: Մնացի ես՝ իմ ամօթայի

 Քիտեմ անոր շատրուանները որոնց տակ՝ Կարապետ Լեւոնեան եւ որդիք մականիշը կը կարդամ:


Կը ճանչնամ Պէյրութը ո՛վ բանաստեղծ
 Ես չեղայ Փարիզի, հենց Փրովանսի լեռներուն գոյնը չեմ տեսած,
 Ոչ ալ արուարձանը այն ուր շատ հայրենակիցներ ունիմ
 Ունիմ ընկերներ հատ ու կենտ ու խոստացեր եմ անպայման Օր մը անպայման գալու եմ տղաք:
 Ես կը ճանչնամ Պէյրութը
 Լէջս լեզուն կը փռուկուի այսօր
 Եւ քառանք մէկ-մէկ կը հասունան մէջս,
 Պրադարաններ կը փլին որպէսզի ապրի բանաստեղծութիւնը տաք հացի պէս,
 Մեր յաղին ծալքը ամէն օր կարմրող հացին պէս
 Եւ սերմի հունտեր կը ցանեմ պատշգամբս...
 Որ առաւօտը ծիծաղով բանամ աչքերս
 Որովհետեւ ես կը սիրեմ կեանքը,
 Հունտը կը գունատիէ հին մեղքերուս դարանը
 Ու չվերջացող սա սփիւռքի պատուհանէն կը նայիմ վերադարձի կայաններուն...:

Սփիւռքը որուն դեռ եմ այսօր,
 Երբբոր ինքիկ կը փակեմ ազգային պատուհանի արպակին,
 որ չմսիմ
 ու անգամ մըն ալ չծռիմ Պետրոս Դուրեանի արցունքներէն խմելու:

Ես կեդրոնն եմ Պէյրութի
 Անոր հայրենիք կը փնտռէ
 Լոս կամ Մոնթրէալ
 Հէյ սուսիկներ,
 հայրենիքը մէկ է....

Փրովանսի լեռներու բնակիչը,
 Որ աքսորեայ մեռաւ,
 Քիտէր բաւժս
 Քիտէր սաւածս:

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻՆ



Կոստան Զարեան (1885-1969) և Յ. Ճ. Սիրունի (1890-1973) եին ծանօթներ էին Պոլսոյ նախապատկառաւորական գրական շարժումի օրերէն: Հասակակա՛ն է, որ տրդէն բանաստեղծական հատորներ հրատարակած Սիրունիին մաս կտգմէր «Մենեանի շարժումին, երէ ալց օրերուն բանտի մէջ չըլլար՝ «Ազատամարտ»ի գործերուն պատկառով: «Նուառարգ» տարեգիրքին հրատարակութիւնը՝ Դ. Վարուժանի ճեշտ, որուն ուշիասակիցներէն եղած է Զարեանը, որիչ փառա մըն է ալց կտպերուն:

Պատերազմէն ետք, Զարեան եւ Սիրունի 1921-22իւ Պոլսոյ Հայ Արուեստի Տան շուրջ կայացած գրական-գեղարուեստական շարժումին մասնակից եղած են: Այնպէս, Զարեան սեկնած է Հայաստան, իսկ Սիրունի՝ Իտմանիա: Յունիս 1924իւ Զարեան ու իր լուտանիքը անցած է Ներսիս: 1928իւ Զարեան իր կի՛նն ու աղջիկը ուղարկած է Իտմանիա՝ Պոլսոյ քաղաքը անկէ զաւակները Վենետիկի Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանին մէջ գիշերօրիկ էին, իսկ ինք շարունակած է ապրիլ Վենետիկ, Փարիզ եւ Ասկոնա քաղաքներուն միջեւ:

Շահեկան է նշել, որ ալս համակները, ի շարս ալց նիւրերու, հաեւ կը բերեն պատմութիւնը ծախուած փորձի մը՝ Պուրքէի մէջ Կ. Զարեանի մեծարժէք «Անցարդք եւ իր համբաւ» գործը հրատարակելու, 1930իւ: Պէտք է յիշել, որ «Հայրենիք» ամսագրին մէջ լոյս տեսած ալց երկը մամուլի էջերուն մէջ մնացած է 45 տարի եւս, մինչեւ անոր տպագրութիւնը «Գեորգ Մելիտինեզի» Գրական Մրցանակի կողմէ 1975իւ՝ Պօգոս Սնապեանի խմբագրութեամբ:

Նոյնուրեւմէր հրատարակուող ալս համակներուն բնագիրները, որոնցմէ երկրորդը հասցեագրուած է Զայեանի առաջին կնոջ՝ Փագունի Շահնազար-Զարեանի, կը պահուին երեսանի եղիշէ Զարեանց Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ Կոստան Զարեանի ֆոնտ, թիւ 99: Անոնց պատասխանները մեզի չեն հասած, 1945-54իւ Յ. Ճ. Սիրունի ձերբակալուած ու ապա Սիսիւրիա արտորուած ըլլալով Ռումանիոյ համալսարանի վարչակարգին կողմէ, հնարաւոր է որ իր բողբերը փնացած կամ լուսագրուուած թլլան:

Աստ մէր ստացած տեղեկութիւններուն, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ ներկայիս կը պահպանուի Սիրունիի անախ պուշերուն հրատարակութիւնը, որոնք հաեւ կը պարունակեն տուեալներ Զարեանի պոլսոյն շրջանին մասին:

Նիս. Ճըրզի

ՎԱՐՈՒՆ ԽԱՏԻՇԻՍԵԱՆ

Ա.

9 Օգոստոս 924
Պուքրէշ

Սիրելի Զարեան
Ստացայ նամակդ՝:

Ղրկեցի ցոյց տուած հասցէիդ «Նստութարի»-ի՝ ցարդ լոյս տեսած թիւերը, բացի Ա. եւ Բ. թիւերէն՝ որոնք սպառած են:

Օշականի այծմու ճշգրիտ հասցէն չուցիմ: Բայց կը կարծեմ որ կը ստանայ սա հասցէով. - Ecole Armenienne, le Caire: Վերջացող տարւումն մէջ հոն ուսուցիչ էր՝:

Կ'ըմբռնեմ թէ հանգստանալու պէտք ունիս, որովհետեւ կ'ենթադրեմ թէ գոնէ մարմնապէս զրկանք կրած ըլլալու ես: Բայց քիչ մը հանգստանալէ յետոյ՝ միտքդ ըլլայ. Հայաստանի արուեստի կեանքին ամբողջ պատկերը կ'ուզեմ քեզմէ:

Իսկ տոայծմ բարի եղիր բացառիկ թիւիս յարմար ճիւղ մը հասցնել: Գիտես որ ան նուիրում պիտի ըլլայ վերջին տասնամեակին մէջ մեզմէ հեռացող գրագէտներուն եւ արուեստագէտներուն: Անպատճառ անոնցսէ մէկուն մասին ճիւղ մը չէ որ կ'ուզես: Գրելիքը դուն գիտես՝:

Յարգանքներս տուր տիկնոջդ. եւ տիկին Շահնազարին՝: Բիշ մը առաջ «Վերջին լուր»-էն՝ իմացայ թէ այդտեղ է:

Կը յուսամ թէ երկար չես սպասներ զիս:

Համբոյրներով
Յ. Մ. ՍԻՐՈՒՆԻ

Բ.

7 Ապրիլ 930

Յարգելի տիկին՝,

Զարեանէն ստացած եմ անցագիրը եւ դիմում կատարած: Արդիւնքին կը սպասեմ ճեզ տեղեկացնելու համար:

Գալով «Անցորդ»-ին՝ ես ալ չեմ ուզեր որ ան անվայելուչ տպագրութեամբ մը լոյս տեսնէ. սա հայ գրականութեան ապրող երկերէն մէկն է, եւ ըստ այնմ՝ պէտք է տպուի:

1. Նամակը պէտք է գրուած ըլլայ վեհեփեկէն կամ Փոքրիչէն:
2. 1923-1925ին Յ. Մ. Սիրունիի խմբագրութեամբ Պուքրէշի մէջ լոյս տեսած գրականութեան եւ արուեստի պարբերաթերթը: Առաջին թիւերուն խմբագրութեան մասնակցած է Հ. Մկրտիչ Դոտուրեան:
3. Յակոբ Օշական Գահիրէի մէջ դասաւանդած է 1924-1926ին:
4. Զարեանի միակ աշխատանքութիւնը վերնագրուած է «Մի էջ» եւ հրատարակուած է պարբերականի Յունուար-Փետրուար 1925ի թիւին մէջ, էջ 17 իմմտ. Կոստան Զարեան, Նաւատումար, Երեւան, 1949, էջ 222-223): Ուշագրաւ է, որ յօդուածը տպուած է 1922ի «արեղեանական» ուղղագրութեամբ:
5. Թագուհի Շահնազար-Զարեանի մայրը:
6. «Վերջին լուր» (1914-1924), պոլսահայ օրաթերթ:
7. Բացիկին յետադարձ հասցէն՝ H. Dj. Siruni, 15 Str. Carminuleu, Bucarest: Յղուած է Թագուհի Զարեանին (Dna. Takonhi Zorian, 15 Str. Castelului, Brasov), որ Ապրիլ 9ին, քստ դրոշմակնիքին, գայն վերադառնալու է իր ամուսնոյն՝ իր իսկ հասցէն քնշելով ու Զարեանի հասցէն գրելով (Mr. Zorian, Posta ferma, Ascona (Canton Ticino, Suisse): Դաւելով լուսանցքային տողէ մը, որ Զարեանին կը պատկանի, վերջինս հետագային վերստին ուղարկած է բացիկը իր կնոջ:
8. Կոստան Զարեան, «Անցորդը եւ իր ճամբան», Հայրենիք ամսագիր, Հոկտեմբեր 1926-Փետրուար 1928: Առանձին գիրքով լոյս տեսած է որպէս Երկեր հատորին (Անթիլիան, 1975) առաջին միւտորը:

Ձեմ կարծեր սր Ֆրանսայի մէջ Կարենան «Անցորդ»-ին վայել տպագրութեանը մը լոյս
 րնծայել զայն: Հետեւաբար կը խնդրեմ ես ալ որ տպագրութեան յանձնելէ առաջ՝
 Զարեանին ալ կարծիքը առնէք: Ի դէպ ըսեմ որ «Նոր Արշալոյս»-ն ալ կրնայ տայել՝
 ինչպէս անգամ մը ինծի քսաւ պ. Լեոնեանը⁹: Պուքրէշ տպուելու պարագային ես կը
 հսկեմ փորձերուն: «Անցորդ»-ը գործ մըն էր որ արտասահմանի որեւէ հրատարակչա-
 կան շատ սիրով պիտի ուզէր տպել: Կրնաք վստահ ըլլալ որ պատրաստ եմ աջակցե-
 լու ձեզ այս առթիւ. միայն թէ լաւ տպուի գործը:

Քիչ առաջ «Հայրենիք» օրաթերթը ստացայ: Ապրիլի թիւին մէջ ամսագիրը պիտի
 սկսի տպել Զարեանի մէկ նոր գործը¹⁰:

Անցագրի գործը երբ լմննայ [քառ անոնթ,] մասին ալ կը գրեմ:

Յարգանքով
 Յ. Մ. ՍԻՐՈՅՆԻ

Լաւ խորհիր. իսկոյն մտածիր եւ թէ Լեոնեանին թէ Սիրուցիին անուշ բարեկամա-
 կան նամակ գրիր. քեզ բարեկամ եմ. լաւ խորհիր.

1500 օրինակ ուզէ ինքեւ պայման:

Լաւ պահիր այս:

Խորհեցայ: Կարելի՞ է Պոտ.Լը| տպել Պուքրէշ. Ս.ի եւ Լ.ի [քառ անոնթ, Վ.Մ.]
 տակ. գրէ՞¹¹:

Պայմանների օրինակը իրան դրկեցի: Ինչ էլ գրիր¹²:

Գ.

30 Յունիս 1930
 Պուքրէշ

Սիրելի Զարեան,

Ծաբաթներով ճեռու էի Պուքրէշէն, եւ թէեւ ատենէ մը ի վեր դարձած եմ՝ սակայն
 ցուցահանդէսին թուցման աշխատանքները եւ այդ առթիւ բիւր հոգեր ոչ իսկ շունչ առ-
 նելու ատեն թողուցեր էին ինծի:

Այս պահուս իսկ ստացայ նամակդ: Որքան ջղայնացաւ՝ իրաւունք ունիս, որովհե-
 տեւ ես իսկ ջղայնացեր եմ «Անցորդ»-ի պատահածին առթիւ, որովհետեւ միամտու-
 թիւնը ունեցայ հայ տպարանի մը հաստատու. գրչի եղբօր մը սիրուն:

9. «Նոր Արշալոյս» (1922-1933), ռումանական շտորեայ, որու պատասխանատու տնօրէնն ու
 իւրագործն էր Պարոյր Լեոնեան՝ Աշուղ Ձիւանիի պատկը եւ բանասէր Գարեգին Լեոնեանի եղ-
 քայրը (Ծովհաննէս Գալփազեան, Ռումանական գաղութը, Երուսաղէմ, 1979, էջ 200):

10. Կ'ակնարկէ «Տատրագոմի հարստ»ին, որ տպուած է «Հայրենիք» ամսագրի Ռաբի 1930ի
 թիւին մէջ ամբողջութեամբ եւ, պուգահեռաբար, առանձին գիրքով:

11. Թագուհի Զարեան բացիկին յուսանցքներուն վրայ այս տողերը հասցէագրած է Կ. Զարեա-
 նին: «Լաւ պահիր այս»-ը՝ շրջանակի մէջ առնուած: «Պոստ» կրճատումն է Հ. Մկրտիչ Պոստրեանի
 (1881-1959), Ս իւրաբեան միաբանութեան անդամ, բանասէր ու իւրագործ, որ Պուքրէշ կ'ապրէր:
 «Ա.» եւ «Լ.» Սիրունիի եւ Լեոնեանի կ'ակնարկին:

12. Կ. Զարեանի այս յուսանցքային նախադասութիւնը գրուած է տողընդմէջ: Դասելով անոր
 բովանդակութենէն, գրագէտը բացիկը վերստին ուղարկած է իր կնիքը:

Ըսեմ երկու տողով: Առաջին տառի Պարոյր Լևոնեանը սիրով յաճճ առաւ: Նոյն իսկ խանդավառութեամբ: Տիկնոջ երթալէն յետոյ¹³, սակայն, գործը սկսաւ ձգձգել: Նիւթակա՞ն մասը սկսաւ գինը վախճնել: Նախ ուզեց թերթին սովորական տառերովը տպել գիրքը: Ես թոյլ չտուի: Ձեի ուզեալ որ «Անցորդը» տպուի, այնպէս ինչպէս կը տպուի... «Նոր Արշալոյս»-ը: Նոր տառ առնել չուզեց՝ ինչպէս որ պայմանադրուած էինք: Իր միակ առարկութիւնը ճիշտակա՞ն բեռի տակ ստնել չուզելն է: Կրնայ ըլլալ որ, ինչպէս կը կասկածիս, փսփսուքներ ալ եղած ըլլան իր ականջին, թէն ինք որեւէ բան մը յայտնի չ'ըներ: Ամէն պարագայի մէջ դեռ չէ սկսած բան մը:

Հիմա իսկ - Նոր Արշալոյս» կ'երթաս եւ ետ կ'առնես «Անցորդը»- ու կը դրկես ամսի- ջապէս հասցէիդ:

Ամէն պարագայի մէջ ներողամտութիւնդ կը խնդրեմ որ չկրցայ օգտակար դստնայ գրչի եղբօր մը՝ հսկառակ իմ ինքնաբեր ցանկութեամբ: «Անցորդը» իր արժէքին վայել տպագրութեամբ լոյս տեսնել տալու ցանկութիւնն էր որ պահ մը զիս միամիտ դարձուց: Կը ներես դարձեալ որ ատենին չկրցայ արթննալ: Միշտ կը լուսայի որ Է. Ե. տնեանը - որ, կը կրկնես. ինքն ալ սիրով յաճճ առաւ գործը - վերջապէս տառ առնել եւ տպել կը սկսի:

Գիտեմ, հայ գրողին համար, մեծագոյն տանջանքն է տպագրիչին եւ գրավաճառին հետ խնդիր ունենալ, եւ կ'երեւակայեմ ամբողջ սիրտհատնումդ:

!Մեր ցուցահանդէսին¹⁴՝ ալպօմները որոնք գոնէ ամիս մը առաջ տպուած պէտք է ըլլային՝ պատրաստ եղան ցուցահանդէսէն հազիւ օր մը առաջ...)

Դարձեալ կը խնդրեմ քու եւ տիկնոջդ ներողամտութիւնը՝ իրեն հետ պահ մը իմ ալ ունեցած միամտութեան համար:

Ջերմ կարօտով կը սեղմեմ ձեռքդ: -Քուկդ

Յ. Ժ. ՍԻՐՈՒՆԻ


Յ. Գ.

«Տատրագոմի հարսը» անգամ մըն ալ կարդացի: Յուզումով եւ հպարտութեամբ: Մասնատրաքար հատուածներ կան որոնք զմայլելի են: Թէն էս «Անցորդը» անգերագանցելի կը գտնեմ: «Անցորդը» դարուն գիրքն է՛լ եւ ամոր անունովը պիտի ապրի:

Վերջին պահուն - Նոր Արշալոյս-էն ինձ կը տեղեկացնեն թէ անցեալ շաբաթ «Անցորդը» քեզ դրկած են ապահովագրուած:

13. Ըստ էրեւոյթին, այս գործին կապակցութեամբ Թագուհի Զարեան Պուքրէջ այցելած է:

14. Կ'ակնարկէ հայ արուեստին նուիրուած ցուցահանդէսի մը, որ տեղի ունեցած է Պուքրէշի մէջ 1930ին:



ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԱԿԱՆ ՏԵՍԻԼՔԸ ՊԷՏՔ Է ՈՒՆԵՆԱՆՔ

Արամ Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա կրօնապետ է: Միաժամանակ՝ մարտգրական, ներգործօն կերպով ունկնդիր մեծ հարցերուն՝ որոնք կը խոռվեն ԻՍԴ դարը և կամխաղանդ կու տան զուպար և բախում: Անոնք կը բխեն արժեքներէ և գաղափարներէ, կրօնական, իմաստասիրական, րոնկերային քէ փնտրական: Անոնց միջև տնրափանց պատմէշներ հաստատել տրուեալական է, բանի որ մարդը կը գտնուի անոնց տտանցրին միայ, անոնք տտանշին չեն գարգանար, կրնրանան զուգահեռ գիծերով, կը հակադրուին, կը բախին, գիբար կը հարաբազնեն, կը հանդիսանան ընկերութեան, քաղաքակրթութիւններու և մշակոյթներու շարժիչը: ԻՍԳԻՆ, Իմացական Աշխարհ բաժնին մէջ, գրոյցէ մը քաղելով, փեղ կու տայ Արամ Ա Կաթողիկոսի մտածումներուն, դարձումներուն, որդեգրած ողորդեան և ուշիապանրին, որոնք մասնակցութեան հրաւէր են: Էնկարանի իբ գրտակնակին մէջ ԻՍԳԻՆ.ի խմբագրութիւնը ընդունուեցաւ Արամ Ա Կաթողիկոսի կողմէ և փեղի տնեցաւ գրոյց:

- Վեհափառ, ժամանակակից խնդիրները բարդ են, կտրբեն մտահոգութիւններ: Ի՞նչ են նեոակադեմները տնտեսական լուծման: Գուք նաև նախկան միջավայրէ դուրս լայն հորիզոն քննարկող մտաւարական էք: Կ ուզենք շնել Ձեզ: Ի՞նչ դարը, նախորդի նախասուրյուններու ուղիղ գծին վրայ, լուծումներ գտնելու խորանցումին մէջ, կը սրէ կացութիւնները, ինչ որ կրնայ առաջնորդել թաղմերնս բախումներու:

- Արդարտէն, չափեր, փոխադաս, Անտուանարան, քաղաքագէտ, ընկերարան, ԻՒՒ զարը կը ընդունին որպէս թախումներու գար: Անձնապէս համաձայն չեմ վարդապետական եւ վեհադիր աայու մօտեցումով դարը այդպէս ընդունելու բախումներու դար: Երբ իրապաշտ մօտեցումով կարդանք ցուցանիշները եւ փորձենք վերլուծել տեղի ունեցող գարգայումները, պիտի տեսնենք թէ բախումներ տեղի կ'ունենան քիչ մը ամէն տեղ: Այդ բախումները երբեմն կրօնական սարադատութեամբ, երբեմն քաղաքական-տնտեսական-ընկերային արտայայտութիւն ունին:

- Ընդդ լրանալ կրօնական տարագ ունին:

- Անձնապէս գտնենք պիտի չորակեմ որպէս կրօններու, քաղաքակրթութիւններու եւ մշակութիւններու բախումներ, այլ՝ արժէքներու: Կարծէք ներկայ աշխարհը արժէքներու նոր համակարգ փնտռելու ընթացքին մէջ է, եւ ինչ որ տեղի կ'ունենայ հոս ու հոն, օրինակ վերջերս Գանիոյ մէջ տեղի ունեցած Մուհամէտ մարդարէի նկարներու հարցը, արտաքինապէս կրօնական է. սակայն միջուկը արժէքներու բախում է:

- Ի՞նչ են այդ արժէքները...

- Հոս պէտք է մտածենք յիշօրէն, որպէս կրօններ, մշակութիւններ, թէ ի՞նչ բան է արժէքը եւ ո՞ւր է արժէքը: Տարրերս հասկացողութիւններ կան. արժէքի տարրեր ըմբռնումներ: Օրինակ, խառնութեան համար արժէքը իր էութեամբ եւ պերտապօրէն կրօնական է. աստուածակեդրոն: Նման հասկացողութիւն ոչ մէկ ձեռով տեղ կուտայ երկխօսութեան ըմբռնումը այն է որ արժէքը հոս կը սկսի հոս կը փերջանար վարդապետական մօտեցումով. հոն բաց պատուհան չկայ երկխօսութեան՝ ուրիշ արժէքներու հետ: Ի՞նչք, կը կործանի որ հոս բան քննարկումներու պէտք ու-

նինք, երկխօսութեամբ, կրօններու, մշակութիւններու, քաղաքակրթութիւններու միջեւ, հասկնալու համար թէ ի՞նչ է արժէքը, այլ խօսքով՝ ճշմարտութիւնը:

- Որոնք են այդ «Մեք»ը:

- Ի՞նչք ըսելով կը հասկնամ կրօններ, մշակութիւններ, քաղաքակրթութիւններ: Բառերը կը գործածեմ իրենց բայն հասկացողութեամբ: Կրօն, մշակութիւն, քաղաքակրթութիւն, տարրեր բաներ չեն, ներքին յարակցութիւն կայ երեք իրականութիւններուն միջեւ: Իսկ անոնց խորքը ժողովուրդն է: Այս շրջագծէն ներս, արժէքներ ունինք. մշակութեային, քաղաքակրթական, կրօնական: Ոմանք չեւոր կը պնեն կրօնականի վրայ, ուրիշներ՝ մշակութիւն, մեր պարագային՝ կրօնի եւ մշակութիւն, միասնաբար: Իսլամութեան պարագային ամէն բան կրօնն է, մշակութիւն՝ կրօնի մէջ, քաղաքակրթութիւնը՝ կրօնի մէջ, քաղաքականութիւնը՝ կրօնի մէջ, կրօնն է որ կը պաշտնաւորէ բոլորը: Աստուածակեդրոն մօտեցում ունի Իսլամութիւնը, հետեւաբար Աստուածապետական է, ամէն բան կրօնով կը սկսի, մշակութիւնը կրօնն է, ճիշդ սոսորհումայ Գուրանը արարելէն դուրսն է եւ ան արարելէն պէտք է կարդացուի. Իսլամը ամերիկացի բլայթէ լինացի, Գուրանը պէտք է սորտելու ինքնով կարդայ, ան պէտք չէ կարդացուի ուրիշ լեզուով, պէտք չէ թարգմանուի միջեւ յետուն աւարի առաջ, օտարներ միայն թարգմանում էին Գուրանը, որովհետեւ Գուրան թարգմանել արարներուն համար հերետիկոսութիւն էր: Աստուած արարելէնով խօսած է Մուհամէտ մարդարէին հետ եւ արարելէնով պէտք է կարդացուի Գուրանը: Վերջին տարիներուն մտածման նոր հոսանք կը դարձանայ աւելի չափաւոր Իսլամութեան մէջ, ըստ որում կարելի է Գուրանը թարգմանել, բայց ոչ կարդալ օտար լեզուով: Այս ամբողջը կ'ըսեմ, չեչանելու համար որ Իսլամութեան մօտ արժէքներու համակարգը ճշգրտած է կրօնի կողմէ: Վերադառնալով նոյն հարցին, Գանիոյ եւ քանի մը այլ քաղաքներու մէջ եղածը պէտք է դիտել այս ծիրէն ներս: Իսլամութիւնը կրօն թէ ինչ որ պատահած է մեր արժէքներու համակարգին չի համապատասխաներ, իսկ արեւմտեան արժէքներու համակարգը կ'ըսէ՝ ոչ այդպէս չէ: Հոս բախում կույ: Ուրեմն ըստ էութեան կրօնական-

վարդապետական բախում չէ։ Արժեքներու բմբու-
նումբի եւ համարորդի հարց կայ։

- Վեհափառ, գուք մօտեն շփուած էք ուշիար-
նը առաջնորդող դեմքերու եւ կոտուցներու։ Հե-
տալքութեան է լսել մեր անսխալական ներկան
լուզող խնայիրներու մասին։ Ալուպեա, երկու Աշ-
խարհամարտերը խաղաղութիւն չբերին մեր մո-
լորակին։ Ազգեկան, էթնիկ եւ ՄԱԿը տնօրո-
թեամբ կը ընդունուին։ ՄԱԿը իր ուխտագրի
տառքին տուր երբեք չլարպեց, գլուած էր՝
մենք, աշխարհի ազգերն եւ ժողովուրդներն։
Ինչպէս երշեմն կ'ըսեն, ՄԱԿը կը կոտարե
հրշեջի զէր։ Ըստ Զեզի, ո՞ւր կը գտնուի բնու-
կը կամ ի՞նչ բան կ'ընեն կը, գոր չեն տաճե-
նացներ, լուծում գտնելու համար։

- Քանի մը կէտեր կ'սկսեմ շեշտել։ Երեք առիթ-
ներով ՄԱԿի բնոյհանուր քարտեզարին հետ խո-
սած եմ այս մասին։ Տասներկու տարի առաջ
նախկինին հետ խօսած եմ, ներկայ քարտեզարին
հետ երկու առիթով խօսած եմ։ Առաջին՝ ՄԱԿը
կարող մը միջազգային համաձայնագիրներ հաս-
տատած է յոյսը ազգերու մասնակցութեամբ եւ
անոնց գործադրութեան ինք պատասխանատու
է։ Առաջինը եւ հիմնականը մարդկային իրաւանց
համաձայնագիրն է։ Հոս հարց կայ։ Եստե՞ր այս
հարցը կ'արծարծեն։ Վերջին տեղամ, եկեղեցիներ-
ու համաշխարհային Խորհուրդի Թ համաժողո-
վին արծարծուեցաւ այն, որ ԱԶԺին հռչակուած
այս համաձայնագիրը կարելի՞ է համարել համաշ-
խարհային յանձն ռենցող։

- Միթե՞ մտրդկային իրաւանց լայնարարու-
թիւնը տիեզերական չէ։

- Կ'ըսուի, եւ արդարօրէն, որ արեւմտեան եր-
կիրներու կողմէ եղած է ան եւ անոնց համակար-
գին, արժեքներուն, մշակոյթին, քաղաքական շա-
հերուն կը համապատասխանէ եւ արեւմտեան դի-
մագիժ ունեցող այս համաձայնագիրը լուրջ վե-
րանայումի կը կարօտի։ Այսօր մարդկային իրա-
ւունք բեկով ի՞նչ կը հասկնանք։ Հոս է որ, ես կը
կարծեմ թէ ՄԱԿը կարեւոր բնեկեք ունի, պէտք է
թղթածրարը բանայ, եւ գործընթաց մը պէտք է
ճշգրտի յոյսը երկիրներու, մասնակցութեամբ,
սահմանելու թէ ի՞նչ են մարդկային իրաւունքնե-
րը այսօր։ Ինչպէս պիտէք, 1998ին, Հռոմի մէջ, յի-

դապաստութեան դժով, Հոլանտայի մէջ միջա-
զային պատարանի ստեղծում հռչակուեցաւ։ Հոն
եւս տրամադրութիւններ կան որոնք երկրիմի են
կարգ մը երկիրներ արդարօրէն այս հարցը կ'ար-
ծարծեն եւ կը կարծեն որ այս հարցը ՄԱԿի կողմէ
ողէտք է որ բնուի։ Համաձայնագիրներ կը
կնքուին ազգերու կողմէ, ՄԱԿի հովանաւորու-
թեամբ, անոնք երբեմն թերի են, անորոշ են եւ կը
կարօտին յատկացման համաձայնագիրներ
կան որոնց գործադրութիւնը, գործախտարար,
ՄԱԿը ի վիճակի չէ ապահովելու։ 2000 թուակա-
նին ՄԱԿը ուրիշ համաձայնագիր մը կ'ըսեց, բո-
լոր ազգերու մասնակցութեամբ, Երրորդ Հազա-
րամեակի Նպատակները սարագով, millennium
goals, որոնք չաա գեղեցիկ են։


- ՄԱԿը կ'սրոշէ, բայց ունի՞ գործադրու-
թեան ու լայն միջոցներ։ Խօսքը կը լուռ։

- Քոֆի Անանին գիմկի հարց տալով թէ ՄԱ-
Կը որքանով կ'ըցաւ որոշ գործնական քայլերու
դիմել, որքանով կ'ընայ, ի՞նչ է ՄԱԿի գերակատա-
րութիւնը, ՄԱԿը տեղ մըն է, չընդլիժ մըն է մի-
ջազգային, ուր ուղղիրք քով քովի կու գան խօսե-
լու, միասին հարցեր քննելու, թէ տեղ մըն է ո՞ւր
բացի հարցերը քննել, որոշումներ կը արուին եւ
անոնք միասնարար կը գործադրուին։ Հոս է հար-
ցը։ Փաստօրէն չկ'ըրու աղպէս ըլլալ, փաստերը
յատակ են, օրինակ՝ Իրաքի պատերազմը։ ՄԱԿը
կոչուած է բազմակողմանիութեան, ալիպիոսի
փայտ մը ըլլալու, բայց կը անաննք որ այսօրուան
սշխոսին մէջ միակողմանիութիւնը կը շարու-
նակուի գերապետութիւններու կողմէ։ ՄԱԿը
պէտք է արդ բազմակողմանիութեան վայրը ըլ-
լայ, որոշումներ ողէտք է արուին հոն միտին եւ
դանոնք պէտք է միասնարար կենքի կոչել։ ՄԱ-
Կը հրամայական անհրաժեշտութիւնը ունի վերա-
նորոգման, վերադասաւորման, վերակառուց-
ման։ Արդէն նման ծրագիր ունի։ Այստեղ ըսեմ,
որ եկեղեցիներու համաշխարհային Խորհուրդի
վերջին ժողովին, այս ուղղութեամբ երկար յայտ-
արարութիւն մը կատարեցինք, թէ մենք, որպէս
եկեղեցիներ, ինչ ձեւով կ'ըմբռնենք ՄԱԿի գերա-
կատարութիւնը ներկայ աշխարհին մէջ։ Ես այս
կէտը կը նկատեմ անհրաժեշտ։ Ուրիշ կէտ մըն ալ
այն է, թէ ՄԱԿը խաղաղութիւնը պահելու՝ մէջ
դերակատար է, peace keeping, եթէ ոչ խաղաղու-

թեան գործընթացներ ստեղծելու մէջ. peace making կը կոչուի զանազան ժողովուրդներու միմեկին հարաբերութիւններ ստեղծելու, իսկ խաղաղութիւն ստեղծելու կարելի չէ առանց արդարութեան: Կը նշանակէ որ ՄԱԿի գործը միայն խաղաղութիւն ընել պէտք չէ ըլլայ. կարելի չէ խաղաղութիւնը արդարութեանն ունիւնել. խաղաղութիւն կարելի է գոյացնել միայն արդարութիւն ստեղծելով:

- Ինչու չար անցած է ՄԱԿի ստեղծումէն ի վեր, երբ զարդ չէ կրցած աշխարհը բերել, երաշխիք կա՞յ որ յառաջիկայ տարիներուն պիտի լինէ, երբ ուժ չունի:

- Կը խորհիմ թէ ՄԱԿի կոչումը, գործը, կը կարծախն հիմնական փոփոխութեան: ՄԱԿը ոչ թէ որպէս կառոյց ինքզինք պէտք է ներքին վերանորոգման ենթարկէ, այլ որպէս գործ, առաքելութիւն: Ան պէտք է դառնայ բազմակողմանիութեան կեդրոն եւ իր հիմնական գործը պէտք է ըլլայ խաղաղութիւնը, արդարութեան հիմնը վրայ հաստատուած, մարդկային իրաւունքներու ամբողջական հետապնդում: Ցատկապէս կարգ մը երկիրներու մէջ, Հատին Ամերիկեան երկիրներու մէջ, միջինարեւելեան երկիրներու մէջ, հակա խրամատ մը կայ, զեկաւարութեան եւ ժողովուրդին միջեւ, նախ ալ զեկաւարութիւնը ժողովուրդին կողմէ չէ ընտրուած, ցանազան ձեռքով զարժած է զեկաւարութիւն, ապա, ան չէ կրցած իր եւ ժողովուրդին միջեւ կապ հաստատել: Զեմ կրնար երեւակայել զեկաւարութիւն մը հեռու ժողովուրդէն, զեկաւարութիւնը անոր ձայնն է, կամքը, կեցուածքը ժողովուրդէն եկող եւ ժողովուրդի ուղղութեամբ ինքնուրու զեկաւարութիւն պէտք է ըլլայ, այսպէս կը դառնայ բոնատիրութիւն: Կան երկիրներ որոնք իրենց ձեռքն մէջ իրեն թէ ժողովուրդապար են, բայց իրականութեան մէջ իրենց էութեամբ բռնատէր են, ժողովուրդը անտեսուած է, ճնշուած: Ժողովուրդապարութիւնը, զժողովուրդապար, լողունգի վերածուած է: Ան ինքզինք կ'արտայայտէ երբ ժողովուրդն է



տէր իշխանութեան, եւ կը մասնակցի իշխանութեան, ներկայ է իր տաղանքներով, ինդիւնեւրով, սպասումներով: Նոյնը պէտք է ըլլայ նաեւ Հայաստանի մէջ: Ազրիւրի շատ մը չարութիւն, անտեսական, բնկերային, մշակութային թէ կրօնական, զեկաւարութեան եւ ժողովուրդին միջեւ գոյութիւն ունեցող խրամատն է: Ղեկավարութիւնը պէտք է կապ հաստատէ ժողովուրդին հետ, որովհետեւ ան է մնայունը, զեկաւարութիւնը կ'երթայ, չի մնար: Կը կարծեմ թէ քաղաքացիական բնկերութեան մէջ, civil society, գործող կառոյցները, կուսակցութիւններ, միութիւններ, գործակալներ, մեծ դեր ունին կատարելիք:

- Վեհափառ, Խորհրդային կենսամարտն ունիք, ոչ միայն տեղեկ էք, այլ նաեւ կը փորձէք ազդել զեկաւարութեան ընթացքին վրայ: Խորհրդային տաղանգ կ'ապրի, քաղաքական լուծումները զարդ սոսկ տնտեսական եղանակով, ինչպէս Մարշալի ծրագիր եւ բնկերային օրէնքներ: Ի՞նչ կը մտածէք, որպէս հոգեւոր աշխարհի վրայ բացուած մտածող, այն մասին որ ինչու խաղաղութեան կառուցումը չի յաջողիր, ի՞նչ բան կը պակսի:

- Մենք պէտք է յստակ լորտնուոր ունենանք խաղաղութեան: Ի՞նչ է ան: Կը նշանակէ ներդաշնակ գոյակցութիւն: Իրաւ խաղաղութիւն կարելի է հաստատել երբ արդարութիւն կայ, երբ մար-

դիկ գրկուած, անխառնուած, լուսանցքայնացած չեն, կը մասնակցին իրենց համայնքին, ընկերութեան կամ երկրի կեանքին. Դժբախտաբար, ընկերութիւններու կեանքին մէջ մենք ունինք մայր էջ եւ լուսանցք: Ամենէն մեծ վտանգը լուսանցքն է ընկերային կեանքի մէջ: Երբ մենք լուսանցքներ կը ստեղծենք, անոնք կը դառնան չարիքի աղբիւր: Տարիներ առաջ, Անդլիոյ վարչապետին լաի, թէ երկրին մէջ լուսանցքներ ստեղծած էք, երբ լոնտոնէն դուրս կ'ելլէք, կը զդաք թէ Փաքիստան կամ Չինաստան էք:

- Նրաւումն ուղ վնորեց ալս բնկեայլն լուսանցքին համար:

- Ծիւղ. Ուստի ամէն անասկ պատեր պէտք է քանդուին: Ընկերութիւնը ինքզինք պէտք է զգայ մէկ ամբողջութիւն: Այդ մէկ ամբողջութեան ծիրէն ներս տարրերութիւններ պէտք է ըլլան, անոնք վտանգաւոր չեն զառնար, երբ ներգաղնակ ձեւով մէկ շրջագլծի մէջ իրենք գիտենք կը գտան: Այս ուղղութեամբ պէտք է զարգանան համայնքներու կապմաստիւմը եւ ժողովրդավարական սկզբունքները: Այդպէս խողաղութիւն չի կրնար ըլլալ երբ ցանկապատեր կան, լուսանցք կայ, մեր մտքերուն եւ հոգիներուն մէջ: Երբ մարդիկ զգան թէ իրենք լուսանցքայնացած են, բռնութիւն կը շուռնացնեն եւ բռնութիւնները մեզ կը տունին քայքայի կողմութիւններու, որոնք կը դառնան իրապէս վտանգաւոր՝ մարդկութեան ապագային դժոճ:

- Վեհափառ, համաշխարհումը նազումը, ձեռով մը, իր բնդմանութեան մէջ կը խմբէ խնդիրներ: Նոյնիսկ երբ լացարար կերպով չ'ըսուիր, ան զուտ տնտեսական հետեւկար չէ, և հաւե մշակութային եւ քաղաքակրթական խնդիր, քանի որ միատեսակ կեանքադ կը ստեղծուի մոլորակի տարածքին, ձեռով մը Փորս-բոլայի եւ համալքեկըրի, և ընկերանք դեպի միատեսակ լեզու, որուն կրողն են արհեստագիտութիւնը եւ համացանցը, որոնք անդ չեն ձգեր հոգեւորին, մտածման, գլխադրուած մարդուն: Ամէն սր լեզուներ կը միտնին, կը հշանակէ սր ինքնութոյց հաւաքականութիւններ կը դառնալարտուն անհետադման, և ընթանանք դեպի մեկ լեզու խօսելու հանգրուան: Այս պայմաններուն մէջ արդարու-

թիւն եւ խողաղութիւն կարելի՞ են:

- Ես կը մօտենամ այդ խնդրին արժէքներու հայեցակէտով: Արժէքներու, կենցաղակերպերու, մասնակերպերու, գոյածեպակերպերու տարբերութիւն կայ: Դժբախտաբար, կրօնական աւանդութիւններ եւ հաւատալիքներ աւելի սրելոյն տարբերութիւնները: 1988ին ես գիրք մը հրատարակեցի, ուր տուաւուակի մը մէջ կը հաստատեմ, թէ արեւմտեան ընկերութեան մէջ տակաւ ածող ծայրայեղ ազատամտութիւնը եւ աշխարհայնացումը լաւ աչքով չեն դիտուիր խաւմական աշխուրհին կողմէ, որովհետեւ, յատկապէս աշխարհայնացումը, ընկերութիւնը կը հեռուիկէ հողեւոր եւ բարոյական արժէքներէ: Ասոր գիմաց ըսի թէ իսլամութիւնը պիտի փորձէ վերադարձ մը կատարել, կրօնական, հոգեւոր, բարոյական արժէքներու: Մէկուն փորձը դէպի աշխարհայնացում, միւսին փորձը դէպի արամտները, հոգեւոր եւ բարոյական արժէքներու բախում կրնայ յառաջացնել: Այժմ նոյնը կը պատահի: Բախում կար մէկ կողմէ կը տեսնենք կրօնական արժէքներու ծայրայեղ շեշտաւորումը, միւս կողմէ արեւմտեան ազատամտութիւնը, երբ կրտուի թէ մարդ ազատ է ամէն բանի մասին խօսելու: Եթէ ազատութիւնը սահման չունի, սահմարձակ է, հարց է՝ Բացարձակ ոգատութիւնը Աստուծոյ կը պատկանի, մարդուն արուած ազատութիւնը սահման ունի, մարդը իր ազատութեան մէջ պէտք է ունենայ համարատուութեան զգացում իր նմանին հանդէպ (ընտանիք, ազգ, եկեղեցի...): Մենք իրարու կողուած ենք համարատուութեան եւ պատասխանատուութեան սկզբունքներով: Ազատութիւնը չենք կրնար ինքն իր մէջ բացարձակ արժէքի վերածել, այս է խնդիրը: Ազատութիւնը պէտք է համարատուութեան շրջոյծէն ներս կնտել եւ փոխադարձաբար: Ապա, արեւմտեան ընկերութեան մէջ խնդիրը նաեւ այն է, թէ յատկ բաժանում մը յատկացուած է քաղաքական, տնտեսական եւ ընկերային սկզբունքներու արժէքին եւ բարոյական ու հոգեւոր արժէքներու միջեւ: Հոգեւոր արժէքները պէտք չէ միացնել միւս արժէքներուն, տարբեր բաներ են, բարոյական արժէքները կրօնական արժէքներ չեն, բարոյական են: Չեմ կրնար երեւակայել ընկերութիւն մը, ընկերային եւ քաղաքական համակարգ մը, որուն կեդրոնը այդ բարոյական սկզբունքները

չբլլան։ Հոս է որ այդ բաժանումը կ'ըլլայ եւ կը ստեղծէ լուրջ կացութիւն։ Հոս է որ արեւմտեան ընկերութիւնները պէտք է իրենց անսակ տեսակ դրութիւններուն մէջ ներառեն ըստ յայտնի հիմնական սկզբունքները։

- Ըմբռնումները յստակ են։ Ելակետային յաջողութիւնը հասնակալն է։

- Երկու ծախսաւորութիւններու արժէքներու հասկացողութեան միջեւ եւ կը տեսնուի բախում։ Այս վերջին շրջանին այս ուղղութեամբ կ'աշխատիմ։ Կրօններու երկխօսութիւնը զուտ աստուածաբանական խմտումով մեզ տեղ չի հասցներ։ Աստուծոյ, Մուհամմէտին կամ Քրիստոսին ինչպէս ըլլայր, աստուածաբանական հարցերը քով քովի բերել, մեզ տեղ չի հասցներ, թուղթին վրայ միայն կարելի է։ Բայց երկխօսութիւնը ինչպէ՞ս կարելի է ընկերութեան կեանքին մէջ փոխադրել։ Ժողովուրդը կեանքի երկխօսութեան մէջ ինչպէ՞ս կարելի է մտնել։ Կը կարծեմ թէ Հոս տարբեր մօտեցում պէտք է ունենանք։ Հասարակաց արժէքներու համակարգ մը վարդապետելու մասին պէտք է մտածենք։ Եթէ բոլոր կրօնները կրցան ասիկա ընել միասնաբար, մարդկութիւնը, համայնքները, ազգերը, դրած կ'ըլլանք այնպիսի ընթացքի մը մէջ ուր իրենց պանազանութիւնը պահելով հանդերձ, ամէն իմաստով, հասարակաց արժէքներու շուրջ քով քովի կու գան։ Ինչ որ մեզի կը պակսի հասարակաց արժէքներու գոյութիւնն է, այդ հասարակաց արժէքներու վրայ է որ մենք կրնանք հաւարական համայնքներ ստեղծել, զանազանութիւնները պահելով հանդերձ, եւ հարցերը տեսնել հաւաքական մօտեցումով։ Այսօր կ'ըսեն միութիւնը պանազանութեան մէջ եւ պանազանութիւն միութեան մէջ։ Հեռեւարար, կարեւորութեամբ կը շեշտեմ, հաւաքական արժէքներու պարզացումը կրօններու, մշակութիւններու եւ քաղաքակրթութիւններու միջեւ։

- Վեհափառ, աշխարհի նախապալարը կ'որոշեն նգոյնները։ Ինչպէ՞ս կարելի է յստիկ ամօնցմէ։ Այս բոլոր գաղափարներուն մէջ ի՞նչ նախապալար եւ զի վերադառնաւ են մեր ժողովուրդին, մեր շիրքիկ անունը, կամ ինչպէ՞ս նախապալար վնասով դուրս կ'ընենք զայլ այս գոյարեւմ։

- Համաշխարհայնացումը գրական երեսներ շատ ունի։ Տարիներ առաջ մտնակցեցալ կտր սեղանի մը այս օրակարգով։ Իր բոլոր գրական երեսներով, համաշխարհայնացումը աշխարհը կը տանի գէպի մէկ մշակոյթ, ուր համայնքներ, դաստիարակութիւններ, ինքնութիւններ չկան։ միաձուլութիւն, միտկերպութիւն, միօրինակութիւն, միատեսակութիւն։ Կարծէք մեր ընկերութիւնները գէպի հոն կ'երթան։ Այսինքն տարբերութիւններ չկան։ Արեւմտեան համաշխարհայնացած մշակոյթի նշանները ամէն տեղ թափանցած են, դժբախտաբար Քոքա-քոլայի եւ վիրցայի մշակոյթ է համաշխարհայնացած այս մշակոյթը, անորակ, անդիմադրելի եւ բոլոր փոքր ազգերը կուլ տուող։ Ինչպէ՞ս կարելի է պայքարիլ անոր դէմ։ Մենք չենք կրնար հակադրել, ոչ կրօնները, ոչ եկեղեցիները, ոչ փոքր ազգերը։ Իսլամութիւնը կը փորձէ հակադրել, բայց մինչեւ ուր։ Համաշխարհայնացումը այնքան պարզ է որ կը փշուէ եւ կը տանի ամէն տեսակ հակադրութիւն։ Մենք պէտք է երկխօսութիւն ստեղծենք համաշխարհայնացման հետ։ Ինչպէս կ'ըսեն անգլերէն, proactive պէտք չէ ըլլանք այլ նաեւ proactive, միայն չհակադրել, այլ նաեւ կանխել։ Համաշխարհայնացման հետ երկխօսութիւն պէտք է ստեղծենք, քննադատական, ոչ համակերպումի։ Խօսելով մեր տղայի մասին, համաշխարհայնացումէն պէտք է առնենք ինչ որ դրական է եւ գուրս ձգենք ինչ որ բացասական է։ Այս մէկը ընելու համար մենք պէտք է զօրացնենք։ Համաշխարհայնացումը մարտահրաւէր մըն է ուղղուած մեզի՝ մեր ինքնութիւնը, մեր արժէքները որպէսզի չհաւենք։ Փոքր ազգ մը ըլլալով յաճախ ապրած ենք զերհրկօր պետութիւններու իշխանութեան ներքեւ, առած ենք ինչ որ դրական է, հալոցուցած ենք։ Հայացման այդ ընթացքը մեր պատմութեան ամենէն դրական երեւոյթներէն մէկը եղած է, ուրիշներէն առած ենք ինչ որ դեղեցիկ է եւ հարուստացնող, բայց փրամկրտած եւ տղային դիմագրելու նկարագիր տուած ենք։ Այժմ, դժբախտաբար, գունդը յայն բացած ենք օտար բարքերու առջեւ։ Հոս պէտք է զգոյշ ըլլանք։ Ամբողջութեամբ չենք կրնար մեր շուրջ ցանկապատել ստեղծել։ Այսօրուան ընկերութիւնը ցանկապատ չի ճանչնար, անցանկապատ ընկերութեան մէջ կ'ապրինք։ Մակայն պէտք է ստեղծենք մեր ներ-

քին, հոգեկան, իմացական ցանկապատիրը մեր արժեքներու հաստատումով:

- Միշտ ուզած եմք պատշաճիլ, կառվել, և ճեռելակները ծանօթ եմ:

- Ուրիշները կապել են ճիշդ չեմ նկատիր: Ինչ որ համաշխարհայնացումը մեզի կ'ընծայէ որ լաւ չէ, դրական չէ, պէտք է մաղէ անցնենք: Եկեղեցին, մեր մշակութային հազմակերպութիւնները, մեր մաղէ անցնողները պէտք է ըլլան, ապա թէ ոչ շատ դիւրին կերպով համաշխարհայնացման հոսանքը մեզ կը քշէ և կը տանի: Հետեւաբար, համաշխարհայնացման հետ աւելի-տալու երկխոսութիւնը շատ կարեւոր է, ուրիշ էլք չկայ: Ամէն տեսակ դռները պէտք է բոխենք եւ մասնակից դառնանք աշխարհայնացման աշխարհին, բոլոր կարեւորներէ ներս, բոլոր մակարդակներու վրայ: Ինքնակազմակերպումը մահն է փոքր ժողովուրդներուն: Աշխարհայնացման աշխարհը մեզի լայն առիթներ կ'ընծայէ, տարածքներ կան տեսակ տեսակ, կարեկցութիւններ, պէտք է ներկայ եւ մասնակից դառնանք ամէն տեղ, պէտք եղած ժամանակ պէտք է յոնք: Մենք միշտ հակամէջ եղած ենք խօսելու, երբեմն յուսկներ աւելի ազդու է քան խօսքը, ամիսկացիներ կ'ըսեն դարձի աւելի կը խօսի քան խօսքը, բայց երբեմն յուսկներ աւելի կը խօսի... ամէն տեղ պէտք է ըլլանք եւ միշտ պէտք է մեկնինք մեր շահերէն: Միշտ պէտք է երկխոսութեան մէջ ըլլանք մեր շրջապատին հետ, ինքնակազմակերպումը, աշխարհայնացման մէջ մահն իսկ է ազդի մը կամ համայնքի մը: Մնայուն երկխոսութիւնը մեր շրջապատին հետ, ուրիշի հետ, կարեւոր է: Աշխարհայնացման աշխարհը պոպիկցած է: Բաղամարտուն եւ բաղամարտուն ընկերութեան մէջ կ'ապրին հայերս, դուներս ու պատահումները չենք կրնար փակիլ, խեղդամահ կ'ըլլանք: Ուրիշներ չենք կրնար ստեղծել, այլ պատենք չենք փոքր քանդուած են:

- Բայց կրնանք եղած եմ, պատմութեան քննարկով, պատմէ ըսելով որ մեր:

- Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին իմ ուղղած տեղեկագրի մէջ հետեւեալը լսի, թէ եկեղեցին ինքզինք պահելու համար պատենք:

Ներսէս Սեփակեան, աստուածաբանական, ժխտական եւ աշխարհայնացման աշխարհին մէջ աշխարհայնացման չենք կրնար պոպիկցել, աշխարհայնացման չենք կրնար քանդուած են, ուստի եկեղեցին իր պատեն տեղին պէտք է երթայ, երթայ դէպի ժողովուրդը, ուրիշ մշակութիւններ, ուրիշ կրօններ եւ երկխոսութեան մէջ մտնէ:

- Չեմ վաւերացուիր փոքր ժողովուրդները եւ մասնաւորաբար նախկին Արարի:

- Մենք փոքր ազգ ենք: Մեր ինքնութիւնը ազատագրող ազգակ հղած են մեր եկեղեցին, մեր մշակութիւնը, մեր արժեքները, մեզի համար պայքար է երկխոսութիւնը մեր շրջապատին հետ, մեր հայութիւնը պահելու: Այստեղ կը ծագի ուրիշ հարց մը. աշխարհայնացման մէջ, յատկապէս Միքիւքի պարագային, ինչ կը նշանակէ հայ ըլլալ: Եւ հայ մնալ: Հայաստանի մէջ, ուրիշներ չենք, հայ ըլլալ ընտրութեան հարց չէ, սփիւռքի մէջ հայ ըլլալ ընտրութեան հարց է, մենք այլ ընտրութիւնը կատարած ենք, քարոզելու չենք, աշխարհայնացման մէջ, հայ պիտի ըլլանք, սփիւռքի պատմութիւնը հայ ըլլալու եւ հայ մնալու պատմութիւնն է: Աշխարհայնացմանը նպատակն է, մեր կիսներ իւրաքանչիւր վայրկեանին, տարբեր միջավայրերու մէջ հայ ըլլալու եւ հայութիւնը պահելու մարտահարկներն առջեւ ենք: Այս հարցը կը կարծիք լուրջ քննարկման: Համաշխարհայնացման աշխարհայնացման մէջ մենք ի՞նչ ձեռքով մեր հայութիւնը պիտի պահենք, ի՞նչ կը նշանակէ սփիւռքի մէջ հայ ըլլալ: Կը կարծեմ որ այս պայքարին մէջ մենք ուրիշ ընտրութիւն չենք կրնար ընտրել: Եւ մեր շրջապատին հետ երկխոսութեան մէջ մտնել: Մենք պէտք է միւս կողմէն մեր կառոյցներուն ճամբով վերաշինենք այն արժեքներն ու սկզբունքները որոնք իրապէս մեր հայութիւնն ու ինքնութիւնը կ'ապահովեն:

- Այս միտքերը, կեցութեանքը եւ նոր մամուլի տպագրութիւններու գիտակցութիւնը, ազգային, մշակութային, բարոյական եւ հոգեւոր որակեցի փակ շրջանակի մէջ չմնան, ո՞վ եւ ինչպէս պիտի բացատրէ մեր ժողովուրդին: Անորձաբան տարբեր մակարդակի վրայ ո՞րք կը բնութիւնը այս խնդիրները, գեղարարութիւնները կը բնութիւնը զանաւոր: Հարկ է ստանալ եւ դարձ:



դուրս գանք նեղ սահմաններէ, նեղ պատեանէ, մաշած մօտեցումներէ, մտածելակերպերէ: Տարրեր աշխարհի մէջ կ'ապրինք, պէտք է փոխենք մեր մտածելակերպը: Սփիւռքի մէջ կ'ապրինք փոքր փոքր կղզիներու մէջ, մեր բոլոր կառույցները պէտք է քով քովի դան: Մենք, սփիւռքի հայերս, ասորիներ պայմաններու մէջ կ'ապրինք. զանոնք յարգելով հանդերձ պէտք է քով քովի գանք, հասարակաց մտահոգութիւններ, արժէքներ եւ սկզբունքներ կան, ձրգ-

նրաշքի մասին, երբ կրօնական, քաղաքական եւ մտաւորական առաջնորդները նույն ձեւով զգային, մտածելով եւ գործեցին, որպէսզի ազգը չընկղմի, եւ ունեցանք մեր ալիւթները: Հրաշքը կրնա՞ւ կրկնուիլ:

- Խօսելով սփիւռքի մասին, իրապաշտ մօտեցումով, կրնանք բռնել որ մեր կառույցները կարծրացած վիճակի մէջ են, անոնք կոկիկ տուփերու վերածուած են, ինքնապահակ, ինքնավախճան մօտեցում ունին մեր ազգը յուզող հարցերու նկատմամբ: Իւրաքանչիւր համայնք ինք իր մէջ փակուած է, իր գոյութիւնը կ'ուզէ պահպան ձեւերով պահել: Տակաւին չենք կրցած այս հարցերուն համապարփակ ձեւով մօտենալ: Փորձեր եղան, Հայաստանի մէջ նրկու համահայկական համադրումներ տեսի ունեցան, որոնք ոչինչ կրցան ընել եւ ոչինչ փոխել կազմութենէն: Անցնող ամիսներէ մտաւորականներ համախմբեցինք սփիւռքէն եւ Հայաստանէն, կարեւոր հարցերու մասին խօսեցանք, բայց չկրցանք մտածումները գործնականացնել, տշնտիսի դործնութեանիւր յառաջացնել, որ կարելի ըլլար այս հարցերու մասին յիշօրէն խօսիլ: Մենք պէտք է, եկեղեցիէն սկսեալ, ինքնաքննական եւ իրապաշտ մօտեցում ունենանք, այլեւս չենք կրնար հինգած-մոշած ձեւերով մօտենալ այս հարցերուն, պէտք է բացուինք,

տուժներ կան, տեսնենք թէ ինչ կրնանք ընել:

- Կ'ըսենք՝ հաւարակաց մտահոգութիւններ: Առանձնացուած են անոնք:

- Այս մտահոգութիւնէն մեկնած փորձեցի որոշ նախաձեռնութիւն մը ունենալ եւ ամէն տարի մեր կեանքը յուզող հարցի մը շուրջ հրաւիրեցի մեր ժողովուրդի պաւակները, խօսելու, քննելու եւ մտածելու, որոշ աշխատանքներու դիմելու: Այս տարին, օրինակ, Հայ դպրոցի տարի հռչակեցի. Հայ դպրոցը միջնորդեցն է մեր դպրութեան, մեր կեանքին մէջ շատ կառույցներ կան, շատ հարցեր կան, այս բոլորին մասին կր խօսինք տուն մէջ, դուռ եւ պատուհան գոցած, հկեղեցին, կառույցները, կուսակցութիւնները տմէն մէկը ինք իր ճամբով կր խօսի: Զիչդ չէ ասիկա: Կուսակցական եւ կրօնական տարբերութիւններ կան, սակայն կան հասարակաց մտահոգութիւններ, հասարակաց օրակարգ մը կայ: Ժողովուրդ մը չի կրնար ապրիլ երբ օրակարգ մը չունի: Ես հարց կու տամ այսօր, սփիւռքի եւ Հայաստանի, մեր ազգին օրակարգը ի՞նչ է: Հայ դատը շատ կարեւոր է, բոլորս հայ գատ կը հետապնդենք, բայց մեր ազգի այսօրուան օրակարգը հաւաքականութիւններ ինչ են: Ո՛ր պիտի ճշդուէի այս օրակարգը: Համահայկական երկու խորհրդաժողովներուն

միայն ճառեր արտասանուեցան եւ պտույտներ կազմակերպուեցան: Եթէ ազգ մը, կառույց մը, ընկերութիւն մը, իրենց օրակարգը չունին. իրենց առաջնահերթութիւնները չունին եւ իրենց նպատակը յստակ չէ, կը կոխտրին: Առաջարկս պիտի ըլլայ մեր բոլոր կառույցներուն, քով-քովի գալ, ոչ նրեւանի մէջ տեղի ունեցած ժողովի հասկացողութեամբ, այլ յուր՝ համագումար մը կազմակերպել եւ մեր ազգի պակարգը ճշդել, այդ հարցերը քննելու ընթացքները ճշդել, եւ մեր տուած որոշումները կիսանքի վերածելու աշխատելակերպեր եւ դործընթացներ, ինչպէս նաեւ դերեր ճշդել, յստակացնել: Այսպէս համաշխարհայնացած աշխարհը մեզ յուսանցքի մէջ կը հրէ, ուր մենք չենք կրնար ապրիլ, կուր կ'երթանք զերիշխանութիւններու ախորժակներուն:

- Վեկոփաւ, վերլուծումներէ ետք, յիշեցնուիլով տեսէք կարելիութիւնը ազգային հայազատ մշակոյթով եւ որակով ազգովին վերակազմակերպուիլ:

- Այսօր մենք մշակոյթ մը ունինք անցեալէն ժառանգած, առաջին հերթին եւ կ'ուզեմ որ այդ մշակոյթը այլ մշակոյթներու հետ երկխօսութեան մէջ գնենք, ինչ որ մեր մշակոյթը կը ըլլալիզացնէ. Երկխօսութիւն չի նշանակել միայն առնել, այլ նաեւ տալ: Ես իմ մշակոյթիս արմատները պէտք է ցօրացնեմ, արժէքներս յիւրեղացնեմ եւ երկխօսութեան մէջ դնեմ: Երկնութիւնը եւ անցեալը դրամադուրի վերածել մեզ տեղ չեն հասցնիր: Մենք մեր դրամադուրի պէտք է հարատւացնենք, արժէքներու դրամադուրի պէտք է երկխօսութեան մէջ դնենք ուրիշներու հետ, եւ տեսնենք թէ ինչ ձեւով ներկայ աշխարհին յարարերունք կը դառնան պատասխան, կը համապատասխանեն ներկայ աշխարհի մահագոթիւններուն, պայմաններուն, նաեւ մեր երիտասարդութեան սպասումներուն: Մեր հոգեւոր եւ մշակութային արժէքները երիտասարդութեան համար պէտք է գրաւիլ դարձնենք, երիտասարդներու լեզուով պէտք է խօսինք, այսպէս միզմէ կը հեռանան: Եկեղեցին չի կրնար լսել ինքի՝ հիտեւեցէ՛ք, նախ եկեղեցին պէտք է դէպի ժողովուրդը երթայ, Քրիստոս ներկայ ժողովուրդին համապատասխան լեզուով մօտեցաւ, իր օրինակները ժողովուրդի կեանքէն առաւ, եւ յետոյ յուսե՛

աւն որ ինքի կը հաւատայ ետեւէս թող դա՛նք: Մենք բերդերու վերածուած ենք, եկեղեցին միշտ նարեղ, մշակոյթը միջնարեղ, եւ այլն, եւ կը սպասենք որ երիտասարդութիւնը մեզի մօտենայ Ո՛ր: Մենք պէտք է երիտասարդութեան մօտենանք, մենք մեր արժէքները տարլոր մօտեցումներով մասուցենք ժողովուրդին, յատկապէս երիտասարդութեան՝ մտաչելի եւ ըմբռնելի դարձնենք: Արժէքները ինքնապատուկ չեն, անոնք տեսիլքի մը ծառայող հաւատակ պէտք է ունենան: Տեսիլքն է որ կը պայմանաւորէ ազգի մը կամ կազմակերպութեան օրակարգը: Եթէ որ մը հայ դատը լուծուի, ինչ պիտի ըլլայ մեր տեսիլքը՝ Ասիկա հարց է: Հայաստանի մէջ ի՞նչ է մեր տեսիլքը, այս մասին պէտք է խօսի իւրաքանչիւր անհատ ներկայ աշխարհին մէջ մենք ինչպէ՞ս կ'ըմբռնենք մենք մեզ: Մեր ինքնահասկացողութիւնը ի՞նչ է: Այս մասին պէտք է խօսիլ: Ուշացած ենք արդէն: Մեր ազգային ձգտումները եւ տեսիլքը պէտք է յստականան, որպէսզի վերջապէս մեր ազգի օրակարգին մասին իստիլու առիթ ունենանք: Ազգային եւ պետական օրակարգերու եւ տեսիլքի միջեւ ապրկերութիւն կայ, պէտք է չփոխել: Պետութեան տեսիլքները կրնան փոխուիլ, իսկ մեր ազգային զաղափարախօսական տեսիլքը պէտք է ունենանք, եւ անոր համապատասխան՝ մեր օրակարգը:

ԲԱԳԻՆ

13 Մարտ 2006



ԲԱԳԻՆԻՆ ԱՌՋԵՒ՝ ԿՐԿԻՆ

Կախն թիւ էրը Պրումմա-
նայի տան հիւրասեն-
եակը, կեդրոնի սեղանի
ապակին տակ, նաեւ կողմի սե-
ղանիկներուն մէջ: Գունաւոր
կողքերով ու համարակալուած,
բացեր եմ օրին զանոնք ու պա-
տանիի աչքերս յառեր հոն կու-
տակուած դիրքերուն վրայ, թեր-
թատեր ու կարգացքի հոս ու
հոն, առաւելորար փորձեր ար-
ձակ էջերը, մանաւանդ երբ շա-
րունակելի կ'ըլլային մէկ թիւ էն
միւսը, միշտ փորձելով դտնել
պատմութեան թեւ մը, գլուխ
մը, որ դրաւէր տարիքիս ուշագ-
րութիւնը, առանց սակայն շատ
յաջողելու: Այդ ամէնը ուրիշ
աշխարհի մը կը պատկանէին,
որուն գոյութեան մասին տա-
կախն ոչինչ գիտէի: Կարգալու
մարմալը, կամ դուզէ ամուռնա-
յին օրերուն ձանձրոյթը գիտ
մղեր էին անոնց դէգերը քրքրե-
լու, շարելու տարեթիւներով ու
փորձելու մուտք գործել անոնց
մէջ: Խոստովանիմ որ շատ ու-
րիշ գրադումներ չունէինք այդ
օրերուն: Հեռատեսիլի պաստա-
ւը ժամը վեցին կը սկսէր սփռել
իւր սեւեւ ճերմակ հագորդումնե-
րը: Մանկապատանեկան գրա-
կանութիւն ալ գրեթէ չկար
սուներ: Փորձեր եմ բազմաթիւ
անպատմներ կարգալ հօրս հայե-
րէն գիրքերը: Բաժնիէն գաւտ
սակայն շատ հետաքրքրական
բաներ չեմ գտած այդ տարիներ-

րուն հոն:

Այդ ամառ սակայն յայտնուած էին ույտ աւորօրինակ կողքերով տմազ լորները: Տան մէջ նորութիւն մըն էին: Դրացի մը Ամերիկա մեկնելով իր հաւաքած «Բաղին»ները յանձնած էր հօրս: Այդպէս ալ յանի մը ամիս գրազուամս պիտի ըլլային անոնք ու բազմաթիւ նիստերու ու յաւաքարութիւններու թիրախս: Ատկէ ետք անոնց հեաքերը կորսնցուցի: Տարիները անցան, տուն փոխեցինք, երկիր փոխեցինք ու մեծցանք: «Բաղին»ները մոռցուեցան: Լաւագոյն պարագային դաջին հանգրուանելու ուրիշի մը տունը, եւ կամ պարգապէս թափուեցան: Ո՛վ գիտէ: Քանի մը տարի առաջ երբ անդամ մը մօրս հետ նիւթը լրի Պարտի Պետրոսեանի ձգած «Բաղին»ներու ճակաապարիւն, չէր յիշիր դանոնք, ոչ ալ անոնց ուր ըլլալը:

Քանի մը առանձնակ հետք ահա ափիկ նորէն կը գտնուիմ: Ղէմ յանդիման «Բաղին»ներու դէզերուն: Այս անգամ ալ անոնք յարսնուեցան կեանքիս մէջ՝ զէպքերու, բերումով ու փորձութիւնը կրկին գիտ տարաւ անոնց էջերու թղթատումին: Երկվայրկեան մը ետ դացի երբ ահա ալ անոնց այդքան ծախօթ կողքերը: Կեանք մը կարծես անցած ըլլար այդ օրերուն վրայ: Մասնաւորս սահեցան անոնց վրայէն երթալով ետ, մինչեւ առաջին թիւր՝ Յունուար 1962: Կողքը կը պատկանի Փօլ Կիրակոսեանի: Երեք զոյներով ապուած է ան. յետաժամախ վրայ կ'ուրուսողքունին ստորուշան մը, որմէ բոցեր կը բարձրանան եւ մողեք, որոնք նուէրներով կու գան: Ետաջամախին վրայ խոշոր կարմիր տառերով՝ կարծես հաստ վրձինով ներկուած՝ կ'երեւի «Բաղին» վերտառութիւնը: Ներկը, կամ գուգէ արթիւնը, թաց կը թուի: Կը բանամ կողքը ու կը կարդամ: «Բագին, ամապիր գրականութեան եւ արուեստի», վարիչ խմբագիր՝ Կ. Մասունի, խմբագիրներ՝ Եղ. Պոյաճեան, Պ. Մնայեան, ապա խմբագրութեան անդամներ՝ Զ. Գեղարդ, Տ. Ոսկունի, Բ. Փափագեան, Վ. Օշակեան: Կը կարդամ խմբագրականը ու կը գարձնեմ էջերը, մէկիկ մէկիկ կանգ տունելով գրութիւններուն վրայ, կարդալով, փորձելով կրկին մտնել անոր էջերէն ներս: Քառասունչորս տարի անցած է անոնց վրայէն ու կ'անդրադառնամ որ շատ բան փոխուած է ու շատ բան փոխուած չէ միաժամանակ:

Ուրիշ բան կը մզէ գիտ աշօր թերթաբերու

անոնց էջերը կրկին քան Պրուսմանալի ամառներու ձանձրոյթը՝ առեւօք: Կոյ անշուշտ անցեալին հետ կապ հաստատելու մարմաջը, դույնէ դաշն վերագտնելու կամ վերստեղծելու: Այդ անցեալը սակախ անձնականի ոլորտէն անդին կ'երթայ: Պիտաւոր հարցը զոր կը գնեմ ես ինծի աշօր ընդհանուր է ու կը վերաբերի գրողական վայրին: Պրէյը ուղղութիւն ունեցող գործողութիւն է: Երբ կը գրես՝ դու յեզ կը դնես յարաբերութեան մը մէջ գիտացի անձին հետ, այսինքն ընթերցողին: Պրոյը միշտ առնուաղն ընթերցող մը (ինքզինք), ընթերցողներ ունի գրելու արարքին հետեւ որպէս հորիզոն: Պրուսթինը ձեւ կ'առնէ աչգ հօրիզոնին վրայ: Երբ քանի մը գրող հրապարակ կը նետուին ու միասին հրաաարակութեան կը ձեռնարկեն, կը նշանակէ թէ կը կիսեն գետին մը, աշխատանքի գալու մը, որուն վրայ կ'ուզեն միասնաբար աշխատել: Այս դեռինն ու հորիզոնը կը կազմեն գրողական վայրը, ուրիշ գրութիւն մը կը մեկնի: Այս առումով՝ ամէն սերունդ, ամէն գրող «տեղէն» մը կը գրէ: Այդ «սեղը» կրնայ սահմանափակուիլ գրողի մը շատ ենթակայական հոգեփոխակերպ, սակայն ընդհանրապէս հասարակաց փոխակերպն ու պայմաններն են որ կը կազմեն անոր հաստ գիծերը: Վերջապէս գրողական վայրը այն վայրն է որ գրողը կը կանգնի ու կը լսէ ինքզինքը: Ուրեմն հարցումը որ կը բռնէ գիտ աշօր, երբ կը կենամ «Բաղին»ի առաջին թիւ երու, գրութիւններուն ու հեղինակներուն վրայ, հետեւեալն է. ուրիշ՝ կը գրէին անոնք:

Առաջին թիւի խմբագրականի փերնագիրը արդէն կը կրէ բոտկանշակաւ պատմաբան մը: Ան կը կոչուի «Բաղինին առջեւ»: Բաղինը եթէ հեթոնոսական տաճարի գոհաբեղանն է, ապա խմբագրականի առաջին ընթերցումով կը յատուկանայ թէ կը դանուինք բացակայի մը առջեւ: «Մեհհան»ը կործանած է: Կողքին վրայ հագին կ'ուրուադեռի անոր աւարուշանը: Ինչ խօսք որ խոշոր վերաառութիւնը կարծես կու գայ ծածկելու բացակայութեան վայրը, «Բաղին» բառով լսել կարծես ուզէր նշանակել անոր գոյութիւնը այդպէս:

«Մեհհան»ը չակերտեցի ու անոր կործանումին մասին ակնարկը բառախաղէ մը աւելին է: Թոտակ է թէ յոյ մը կ'երթայ 1911 եւ 1915 տարիներուն յոյ ահաւ թախտորոշ պարբերականին:

խուսափող, պէտք չէր ըլլար զայն անողայման ինքնիր մէջ շարունակուած տեսնելու մարմաջր. նորը իր էջը կը բանար, անցնայն ալ իր աննոցով կը դիտէր: Իսկական ժառանգումը ուրիշ ձեւով չ'ըլլար: Անցնայր կարելի է միայն վերամենկնարանի մեկնելով ներկայէն: Կարելի չէ զայն շարունակել: Պիտի տեսնենք քիչ անդին թէ ինչպէս այս շարունակականութեան ձգտումը նորէն պիտի կրկնուի ու այս անգամ դառնայ բացայայտ: Կը կենանք նաեւ «նուիրական պարտականութիւն» դարձուածքին վրայ: Ժառանգելն ու աւելցնելը անով կը յատկանշուին: Ասոր մասին աւելի ուշ: Շարունակենք խմբագրականի ընթերցումը:

Առաջին մեծ պատերազմէն քիչ մը ետք եւ երկրորդ պատերազմէն քիչ մը առաջ, Սփիւռքի մէջ գրական երկու վոյյուն շրջան առեղծեց մեր ժողովուրդին այս բերձը՝ ապուլ մեկտուն գործելու:

Այսուհանդերձ վերջին տարիներուն ստեղծագործական զանազութիւնը ակնհայտ է:

Բայց այդ դանդաղութիւնը յոգնութեան արդիւնք չէ, գրողներու ներքին կրակին պակասով կամ ինքնակամ ծուլութեան նետահանքով չի բացատրուիր, այլ պատճառ ունի կեդրոնական ու կենդրոնածիւղ բեմի մը բացակայութիւնը, այսինքն՝ գրողները քով քովի բերելու, աշխատելի մղելու, աշխատութիւնները արժանաւորապէս ներկայացնելու խանդավառ միջոցը, որ վերջին տարիներուն միշտ պակսեցաւ մեզի: «Բազին»ը կոչուած է այդ կեդրոնական ու խանդավառ բեմը ըլլալու:

Կամբջումի փորձ մը կը կատարուի հոս ներկայէն մինչեւ, անցեալը կը խօսուի երկու պատերազմներուն միջեւ երկարած երկու փայլուն շրջաններու մասին, կ'ենթադրենք որ ակնարկներէն մէկը կ'երթայ «Բարձրագոյն»ի Պոլիսէն մինչեւ Օչական, Ջարեսն, Թէքէիսն երկարող հատուածին, գուցէ նաեւ մինչեւ ամերիկահայ դիւղադիրները, միւսն ալ Ֆրանսահայ գրողներուն: Ասկէ ետք սակայն կը խօսուի ստեղծագործական զանդաղութեան մը մասին: Կը արտին բացատրութիւններ: Հիմնական կը նկատուի «Կեդրոնական եւ կենդրոնածիւղ բեմի մը բացակայութիւնը», որը վերջին տարիներուն միշտ պակսեցաւ մեզի» եւ ուրեմն «Բազին» կը ներկայանայ որպէս այդ բեմը:

Ստեղծագործական դանդաղութեան մասին նշումը հետաքրքրական է: Այսօր ալ նոյն բանը գրողներ պիտի չպակսէին: Մարդ կը մղուի մասնօնելու թէ շատ բան փոխուած չէ այսօր տարի ետք: Բայց ինչու ոչ ոք զգուհութիւնը բառասուն տարի առաջ, երբ մերձաւոր տեսնելու պարտութիւնը կ'եռան մարդու ժողովուրդը, դպրոցները կը յորդին աշակերաններով ու համալսարանաւարաններու փողանդներ կու գան յեմիւն ու ծաղկեցնելու վերականգնող հայութեան մը առաջնակարգ դիրքերը: Հիները չիջնելու վրայ են ամէն տեղ: Այսպէս պէտք է հասկնալ հաւանարար դանդաղութեան ակնարկը: Իսկ նորերը կան, սակայն բեմը կը պակսի: Այս ալ քիչ մը տարօրինակ չի թուի երբ կը նայինք այդ տարիներուն գոյութիւն ունեցող թերթներուն ու հրատարակութիւններուն: Խոսքը անշուշտ գրական պարբերականի մասին է: Բայց ոչ միայն: Պարբերական մը որ իրեն բեմ ծառայէ որոշ հոտներ մը գրողներուն: Ասոր կ'ակնարկէ «վերջին տարիներուն միշտ պակսեցաւ մեզի» ակնարկը: Պէտք է հուանարար հասկնալ «նայիրի»էն ետք ստեղծուած պակասը: Ուրեմն նոր բեմ մը ունաւապիկ, որ կը միտի այս հոտներին պատկանող գրողները քով քովի բերելու, աշխատանքի մղելու, անոնց ոչ խառնութիւնները արժանաւորապէս ներկայացնելու:

Յաջորդ պարբերութեամբ կը խօսուի «երիտասարդ եւ լուրջ պատրաստութեան տէր սերունդ»ի մը մասին, որ «իր խանդավառութիւնները պարկուտ եւ նոգին պարպելու հրամայականներն ունենալով կը գտնուի»: Կարելի է երեսուկայն նորերուն մօտ ակնող խանդավառութիւնը, թէեւ տարօրինակ կը հնչէ այդ մասին ակնարկը: Հրամայական բառը կարծես հոս իրեն պահանջ կը դրուի նոր սերունդին վրայ, իր խանդավառութիւնը պարկուտ եւ հոգին պարպելու մղող: Բայց ո՞վ է պահանջը դնողը: Շարունակենք:

Նախորդ երկու սերունդներու ներկայացուցիչներու կողքին, այս բերքին մէջ տեղ պիտի տրուի նաեւ այդ երիտասարդներուն: Նորերու յորդ ապրումներուն եւ հասուն մարդոց հասուն խոնկերուն բեմը պիտի ըլլայ «Բազին»ը:

Թատակ կը դառնայ այս որ բեմը հաստատողները իրենք նորերը չեն, ոչ ալ հիները: Կարծես գրողներուն ետեւ կենդող, կանոնը աշխատանքի

հրաշիրող «խօսող» մը կույ, որ կը յայանէ իր մտահոգութիւնները ու կը տրամադրէ ընձ մը ուր անոնք պան խօսին: Այս «խօսող»ը կրնայ ըլլալ խմբագրականները գրողներուն ձայնը, եւ կամ պարզապէս անոնց ետին կեցած կողմակերպչական միտւորը: Չնայած նշուած չէ, սակայն գտնուիք այլ չէ թէ «Բաղին» ինչ նկարագրով կ'իջնէ հրապարակ: Այդ չէ մեզ հետաքրքրողը հոս: Հետաքրքրականը հոս խմբագրականի ձայնով յայտնուող եւ ստանձնուած ինքնընկալումն է: Վերեւ նշուած «նուիրտական պարտականութիւն»ը, ինչպէս նաեւ «խանդավառութիւնները պոռթկալու հրամայական»ը երկուքն ալ կու գան նոյն տեղէն: Այդ տեղը գրողին կեցուածքով կը յատկանշուի ինքն իրեն հանդէպ, բայց նաեւ տեսնուին ու շրջապատին:

Յաջորդ պարբերութեան մէջ կը խօսուի գրական դպրոցներու նկատմամբ նախադրութիւններ չյայտնելու մասին, ինչպէս նաեւ տարբեր գրական շարժումներու հետեւողներու տեղ տալու մասին «Բաղին»ի էջերուն մէջ: «Այլ րոտե, որ գրութիւնը ներքին ուղիւսով մ'ը յուսաւորե, մտածումով մը երաշխաւորուած ըլլալը, ներդաշնակութիւն մը պահէ եւս գրականութեան հետ, կամ ընդէ տրուեցտի նոր նպատակ մը»: Փոփանիշներ կը տրուին որոնք բաւական ընդհանուր են, նոյնիսկ քիչ մը պահանջողական: Յաջորդ երեք տողերը կը յաւակացնեն.

Կ'ընկուծիք ուզենալու կեանքին ու մշակոյթին շարունակականութեան նախապայմանը:

Կը մերժենք ճիւղին պերակշուութիւնը ոգեկան ուրժեքներուն վրայ:

Կը հաւատանք իսկապիսեւ ճերքին ումերու զօրութեան:

Քոսեցանք վերը շարունակականութեան ենթագիծային մասին: Հոս պարզապէս կը բացուի յայտուի ուն: Հետաքրքրականը անոր նախապայման ըլլալը չէ: Ատիկա հասարակ տեղիք պիտի նկատուէր: Հետաքրքրականը հոս անոր յիշատակումն է: Կարծես շարունակականութիւնը ինքնին ըլլար խնդրական. «Բաղինին առջեւ» կեցողը կարծես կ'ուզէ յիշել ու յիշեցնել թէ շարունակականութեան մը մէջ կը տեսնէ ինքզինք: Ասոր համար է որ արդէն կեցած է բաղինին առջեւ, եւ ոչ՝ ըսենք ուրիշ որեւէ տեղ: «Ոգեկան արժէքներ», «խոհալ» ու «ներքին ուժերու գոյութիւն» հոս կը շարունակեն «նուիրտական պարտականութեան» ու «պոռթկալու հրամայական»էն եկած ինքնընկալման գիծը: Բոլորն ալ հաւատքի յատկանիշով կը յայտնուին: Անոնցմով է որ բաղինին առջեւ կեցողը իր հաւատքը կը հաստատէ անցեալի արժէքներուն հանդէպ: Հաւանաբար անոնք կը կազմեն այդ հաւատքին բունկու կերպերը: Ժառանկներ ընթերցումը:

Ունը կը ծղոյնը նոր փորձառութիւններու կենսախաղա տրոփով եւ մշակութային նոր պատասխաններու կենդանութեամբ ու իշով՝ հայ գրականութեան վեր բարձրացնելու նպատակի մը:

Հայ գրականութիւնը վերափոխութեան ենթարկելու եւ գրական խախտած չափանիշները վերանայնացնելու մ'եր առաջադրանքին մէջ հետեւողական պիտի ըլլանք եւ քեզ պիտի չթերաւանք մեր պարտականութեան համբաւ մը վրայ:

Նոր փորձառութիւն ու նոր պատուաստ կը խօսին նոր կացութենէ մը: «Մենք» բոլոր գիտէ թէ հինին հանդէպ հաւատքը կամ զայն ժողովրդեայ բաւարար չեն ստեղծագործելու համար: Արդէն «նոր փորձառութիւն» եւ «մշակութային նոր պատուաստ» նշաններ են «նոր» տեղին մասին, ուր կը գտնուի խօսողը: Ատիկայն անոր անգրագարձը չի դառնար հիմնարար գիտակցութիւն, այլ կը մնայ կապուած «գրականութեան աճը բարձրացնելու նպատակին»: Տարբինակ թուի գուցէ այս մէկը իբրեւ գրական ծրագիր: Բայց անիկա գրական ծրագիր չէ, այլ պարզապէս կը պատասխանէ վերը յիշուած դանդաղեցումին, կ'ուզէ զայն դարձանել: Նաեւ «մերառեւտութեան ենթարկել» ու «պրական խախտած չափանիշներ վերահաստատել»: Ատիկա պարզ պարտականութեան մը գիտակցումն է հետեւանքը չէ: Ամսագրի առաջին թիւէն ու հետեւողական կերպով դիւրե պիտի բռնուի այդ օրերուն խորհրդային Հայաստանէն եկող գրականական ճակատամերձութիւնն ու խնդարթութեամբներուն ոգի: Տարբինայ ճակատամարտներն են ու այդ մէկը կը կատարուի բոլոր ասպարէզներուն մէջ, նաեւ գրական: Այնպէս որ «մերառեւտութեան ենթարկել»ուն եւ «գրական խախտած չափանիշներ»ուն ետեւ պէտք է հասկնայ այդ ճակատամարտն ենթաթեքութիւն, որ գրական մտահոգութեան կողքին, կու գայ յստակ քաղա-

քական դիրքորոշում է մը: Յաջորդ պայուսներու թեմամբ այս դիժը կը շարունակուի:

Ամբողջական խանդավառութիւն այլալի բլ-լանք, երբ տեսնենք զեղեցիկ գործ մը, ամբող-ջական գաւթոյրի պիտի վերածուիմք, երբ ճակ-դիպիմք երեսուրական հանգստանքներու եւ ահաւայտակի միջոցներու շաղկապածումով գրա-կուն հոշակ շինող սակեզօծ ոչնչութիւններու:

Ընդհանուր կեցութեամբ մըն է ու մեկնաբանու-թեան չի կարգադր: Վերջին պարբերութիւնն ալ նորութիւն չի բերեր: Կու տանք ամբողջական ը-յուրու համար:

Անշահախնդիր իրազօրծումներով խանդա-վառութեւ ընդունակ եւ այսուհետի սերը իրենց հոգիներուն մէջ անյետաճելի վաշիքի վերա-ծած մալոյց համար բացուած լիւս՝ մըն է «Բա-գին»:

Պէտք է նշել նաեւ թէ երկրորդ թիւն ալ կը կրէ իմբագրական մը՝ «Հաւատարմութիւն» վերնագրով: Ուր կը խօսուի առաջին թիւին գտած խանդավառ-ընդունելութեան ու արձագանդին մասին: Կը շեշտուի աւելոր համագաղութացին բնայթ ունենա-լու հանգամանքը: Արդէն առաջին թիւէն իսկ յատակ է որ աշխարհի չորս կողմերէն դրկուած գրութիւններ լայս պիտի տեսնեն: Կը կրկնուին առաջինին խոչալիսա կեցութեամբները հայ գրակա-նութեան եւ տրուեցաւ մասին: Ամենէն հե-տաքրքրականը հասանաբար «որքա՞ն առեն պի-տի տեւէ «Բագին» ամսագիրը» հարցումին կամ մտափոխութեան տրուած պատասխանն է:

«Բագին» հաստատուն կոռուսներ աւելի, եր-կար տօրլմնրու հաւաքարի կտրելու համար: Ամբողջ ժամանակաշրջան մը ընդգրկելու լու-սադրութեամբ լոյս կ'ընծալուի այս ամսագիրը:

Խոստովանինք որ մարգարէական խաչքիւր են ասօնք: Քառասուն եւ աւելի տարիներ լոյս ընծա-լու մը հրաշքի համագոր երեսօյթ է որեւէ ամսագ-րի պատմութիւնն մէջ, ուր մնաց մեր իրականու-թեան: Մեզ հետեքքրորը շտմորոջ ժամանա-կաշրջան մը ընդգրկելու մասին ակնարկն է: Ժամանակաշրջան մը որ այսօր անցած է: Ասոր է որ կ'անդրադառնաք երբ կը թերթաւէք տնոր առաջին տարիներու սեւ ճերմակ էջերը: Շարան եւ չարան գրութիւններ, երբեմն պոռթկացող ու յախուռն, մանաւանդ երբ քաղաքական գողանա-կով կ'արձակուին, յաճախ յուղիչ երբ անցեալին

կը վերադարձին, յայտ մանաւանդ պատկերը բերող ներկայի մը, որ կը մնայ հայեաղքը սեւեռած մե-տակոյ անցեալին վրայ: տնոր հմայքին ու քուշ-դութեան ներթալայ: Նաեւ անոր ոգրերուական խզումին: Այդ ներկան չի կայանար, որովհետեւ անցեալը անընդհատ կը տահի տարբերուն տակէն ու անոր վրայ կանգնողը ստիպուած է ամէն յայ-լտիտի յայտարարելու կապը անոր հետ: Ան կը կանդնի խուսափող հողի վրայ: տնյ մը, որ իր իսկ հաստատումով կը կուչուի խոչալացուած անցեա-լի «բագինին առջեւ»:

Ամսագրին թիւերը կը մնան որպէս հոյակապ հայեցին ալի տեղին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱճԵՐՈՒՄ



ԵՐԲ ԳԻՐՆ ՈՒ ԽՕՍՔԸ ԿՌԻՒ ԷԻՆ ՄՂՈՒՄ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՆԿԵՂԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՏՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԲՈՆԱԲԱՐՄԱՆ ԴԷՄ *Ռուբէն Զարդարեանի Աղէտի կանչը*

ժամանակը միաստուեր էր, ճշդոր
բունութեան ներքոյ արեւմտահայ
միտքն ու գրականութիւնը կենսա-
գործ էին ու կիսակենդան: Ռուբէն Զարդարեա-
նի գրականութիւնը այն քննիւց էր ուր փորձ էր
արուում նոր շունչ բերել, լուսաւորել քաղաքա-
կան եւ ընկերային ճշունմանի ապկ կրած հայ
մարդու միտքը, ճշտագայթել մուսլի հարկոյնի
վրայ, արուեստի անկեղծութիւնն ու մտքի ազա-
տութիւնը չզսնել պարտադրուած դրին ու խօսքին:

ԱՄԵՐԻԿԱՆԵՐ

Հայոց գրականութեան արխիւներն ու գրա-
կանութեան պատմութիւնը ուսումնասիրող տշ-
խտութիւնները ժխտ են Ռուբէն Զարդարեանի
նկատմամբ: Հինգ հատորնոց հսկայածաւալ «Հայ
նոր գրականութեան պատմութիւն»ի հինգերորդ
հատորում 14 էջ եւ այն էլ ո՛չ առանձին գլխով,
այլ «Այլ արձակագիրներ» գլխի տակ: Մի նիհա-
յին կ'ընթերցարար, որի մէջ մի քանի անտիպ բա-
նաստեղծութիւններ, հէքեաթ ու յօդուած հեղի-
նակի ձեռագրով եւ մի քանի նկարներ նրանի
Գրականութեան Թանգարանում: Իսկ այստեղ
գրադարաններում մի քանի հրատարակութիւն-
ներ միայն: Բացառութիւն է, ի հարկէ, Յակոբ
Ոչակյանի «Համապատկեր»ում (է հտտոր) Զար-
դարեանին նուիրուած ծաւտուն գրութիւն, որի մէջ
սակայն Օչակյանը խօսում է մի քիչ ամէն ինչից եւ
ամէն ոքից: Բիշուած բոլոր հրատարակութիւն-
ներում էլ թույլ է արուած ո՛չ-գիտական մօտե-
ցում, հրատարակողի ճաշակին թողնուած խառն

ի խուռն յնարութիւն ձեռքի տակ եղող դարձերի,
միշտ «Յայգալոյս» վերնագրով եւ Զարդարեանի
հրատարակած հատորին չհամապատասխանող
ըզանդակութեամբ: Այս բանաձեւումը իրակա-
նութիւն էր մինչեւ 1983ի «Անթարճեան գրական
մրցանակի թիւ 3» հրատարակութիւնը (Անթիլիաս,
Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմից: Այս կոթո-
ղային հատորի մէջ հաւաքուած են Զարդարեանի
դեղարուեստական պսոճերը ամբողջութեամբ, եւ
որ կարեւորն է, հատորը պարփակում է Զար-
դարեանի ուսուցչական գործերի - հրապարա-
կագրութիւն եւ գեղարուեստական գրականու-
թիւն - մասնագիտութիւնը Արտաշէս Տէր
Խաչատուրեանի պատրաստութեամբ: Միայն այս
մատենագիտութեան յայտ տակ է որ կարելի է
դադարաւ կազմել Զարդարեանի ամբողջական
գործունէութեան ժամանակագրութեան մասին,
որ կարեւոր է մանաւանդ՝ ներկայ թիմաւորի ու-
սումնասիրութեան տեսակէտից: Հեղինակի մտ-
տեճագիտութեան ցանկը ինձ հնարաւորութիւն է
սուել դասերու իւրաքանչիւր արտայայտութիւն
իր ժամանակի պայմաններում՝ գրաքննութեան
եւ քաղաքական հուլածանքի ճնշող մթնոլորտ,
թէ՛ այդ մթնոլորտից հեռու, սզատ պայմաննե-
րում: Աւելացնեմ միայն, որ յաւանութիւնը շու-
նեմ Ռուբէն Զարդարեանի մասին պարզապէս
կամ վերջին խօսքն ասելու: Դա տարիների տշխա-
անք է պահանջում: Բայց հաւատում եմ, որ
խօսքս պիտի գայ աւելանալու Զարդարեանի թո-
ղած հարուստ ժողանդութեան վրայ, որ գնու պի-
տի աւելի հարստանայ ապագայի ուսումնասի-
րութիւններով:

1. ԱՄԵՐԻԿԱ համալսարանի գրադարանում գոյութիւն ունի չորս հրատարակութիւն «Յայգալոյս» վերնագրով, 1936, 1945, 1977 եւ 1983 թուերին հրատարակուած, եւ ոչ մէկի մէջ չի պահուած 1910ի հրատարակութեան նիւթի-
րի հերթականութիւնն ու ուր գրուած իննները:

ԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՍՏԱՆ

Գաւառական գրականութիւն, Պոլսահայ գրականութիւն, կամ ընդհանրապէս արեւմտահայ նախահոգեւորական գրականութիւն. Զարգարեանի պոքիւստը մէկ անդամատանում գեղեղեմ: Իմ կարծիքով, այսօր կարեւոր բաժանումներ էլ չեն սրանք, իսկ ալ այն օրերին մեծ հարց էր՝ Պոլսի կողմից արհամարհանք դէպի գաւառականը. իսկ գաւառականի կողմից պիտակցուած եւ անպիտան կից հակադրում Պոլսոյ, որոշ չափով էլ ի գծի տնտեսական ու «յեղեղեղ», չարսով ու ծարիրով սնդուրուած»՝ արեւմտահայ գրականութեան, գրականութիւն, որ հազարի չէր հայ հոգուն, ժողովրդի ցուներին, տառապանքին ու իրաւունքին եւ օտար հոգի վրայ էր ածում:

Աշխարհագրական իմաստով, ի հարկէ, գաւառականն է Զարգարեանի անդամատանը, գաւառական է նիւթի, ներշնչման, երակէտ ու մղիչ ուժ հանդիսացող մտահոգութեանց ու ձգտումների տեսակէտից: Լեզուի, ոճի, բարձրորակ արուեստի պահանջների յաղեցման տեսակէտից, սակայն, նրա գրականութիւնը որեւէ բաժանումի չի ենթարկուում: Ժողովրդի ծոցից ծնունդ, նրա ցաւը, ուրախութիւնը, հոգսը, երազներն ու ձգտումները արուեստի գեղեցկութեամբ գրականութեան մէջ յաւերժացնող ստեղծագործն է Ռուբին Զարգարեանը: Գաւառականը նրա յուսով հարստացնողն է, ոճի կենդանի ու պատկերաւոր դարձնողը: Գաւառականը նրա ճամբան է դէպի ազգային գրականութիւն, ճամբան, որ խորմեան Հայրենին ու Գարեգին Արուստեանին էին լացեր Գաւառականը թշուառները, Զարգարեանի ու Արտաշէս Յարութիւնեանի Պոլսի

վրայ պարտադրող ազդեցութիւնն էր, որ պիտի ծխարձակէր «վաղուան գրականութիւն» բնարտնով, դաւառից եկած թարմ շունչ, Պոլսոյ յղկուած ու կազաղարուած գրականութեան վրայ պատուաւատելու:

ԿԵԱՆՔԻ ԱՍՊԱՍԻՉ

Համեմատաբար կարճ էր Զարգարեանի կեանքը, 41 տարի միայն: Մնուել էր 1874ին Սեւերակ գաւառում, ապրել ու գործել էր Խորբերդ, Մեղրէ, Մանիսա, մի քանի տարի Ֆրիլիպէ, Բուրլաքի: Երիտ. Թուրքերի սին խոտորմներով տարւած, 1908ի յեղափոխութիւնից յետոյ վերադարձել էր Պոլիս ու 1911ին գահ զննցել Եղիսիանութեան: Իսկ այդ 41 տարիների կամ աւելի ճիշտ 24 հասուն տարիների կտրւած ժամանակաշրջանում իր կեանքը հաւասարապէս նուիրել էր երէք ասպարէզի:

Ուսուցչական ասպարէզ - արդէն 18 տարեկանից դաստանդում էր եւ ըստ վկայութիւնների կրթական մշակ էր՝ սիրուած ու փնտրուած: 1911ին նրա ձեռնարկած «Մեղրադետ»՝ դասագրքերի շարքը նոր երեւոյթ էր արեւմտահայ կրթության արթնացման ասպարէզում: Այս դասագրքերում, «Տարրական լեզու», Բ. գիրք», 1913ին Պոլսում հրատարակուած, պարզօրէն զգալի է գրաքննութեան կնիքը: Հայաստան, հայրենիք, հայրենասիրութիւն՝ նիւթեր ուղղակի չեն արծարծուած: Կոյ փոքրիկ Լեւոնի հարցումը հայրիկին՝ թէ ի՞նչ է հայրենիքը, Հայրը կարծես գոռաւարտ նիւթը չի փանցելով, չի խօսում Հայր. Հայրենիքի մասին. բացատրութիւնները ընդհանրական են, իսկ եզրակացութիւնը՝ «Երբ որ մեծնաս

2. Պոլսոյ գրականութեանը 3. Օրականի տուած բնութագրում:

3. Թշուառներն Զարգարեանի ուսուցիչն է եղել, նրա տառքին քաղերը ուղղողն ու նրա գրական գործը քաջալերողը: Միտումն մէջում է, ինչ քաղաքական տարբեր համագումարն այդ երկուսն աւերաւորին: Ռազմական Թշուառներն եւ դաշնակցական Զարգարեանը խորք եղան իրար: Բայց բնական է, որ իրարից հեռանալու Զարգարեանը երբեք իր վարպետի երախտիցը չմոռացաւ: Մոյն կուսակցական անջրպետը նրան բաժանեց իր մէկ այլ քաջալերող եղբորից՝ Արշակ Զօյաւանեանից, բայց նրա սրտում միշտ մնաց սէր ու համակրանք Զօյաւանեանի հանդէպ: Տես Գալոս Ա. սրբուհու յղումածը «Ռուբին Զարգարեան», հրատարակուած «Հայրենիք»-ում Գ. տարի, թիւ 3 (27), Յունուար, 1925, էջ 32:

4. Առաջին անգամ այդ վերնագրին հանդիպեց «Հայ նոր գրականութեան պատմութիւն»-ի մէջ Զարգարեանին նուիրուած էջերում: Ենթադրեցի թէ գէտ, գիտնալու իմաստով է: Գուցաւորքը մեծք անցնելուց յետոյ էր, որ անդրադարձայ թէ «Երբ Զարգարեանի պէս երեսն գիտելիքների ամբարումն է Զարգարեանի դասագիրքը եւ ընտրած վերնագրի իմաստը: (Սա էլ Հայաստանեան ուղղագրութեան «բարեմասնութիւններին»)

... այն տոնն այ պիտի գիտնաս թէ՛ ո՛րն է քու հայրենիքդ եւ ինչքան մեծ է անիկա»։ Միանգամայն անմեղ ու անփնաս բնութագրում եւ այն յույսը, թէ էրբեք ազան մեծ տնայ, ինքը պիտի ճանաչի իր հայրենիքը։ Չկայ հայրենիքի բնութագրումը, սակայն նրա ոգին տուեց ինքուհի է հայ գիւղի գեղեցիկ նկարագրութեան մէջ, հայրենի բնութեան զարնային շքեղ պատկերների մէջ եւ կոտնկին ուղղուած «Կրտսէնի, ո՞ւր եկի կապան» (էջ 53) պանդուխտի ախար կանչի մէջ։ Բռնագրութեան հայրենիքի հասկացութիւնն ու պատճառած ցաւը, իմ կարծիքով արաւայալուած են «Արդարասէր պատաւորը» պատմութեան մէջ (էջ 51-53)։ Եւ հրահանգներում ներառւած հարցումները դիտումնաւոր արուած են ուսուցչին առիթ տալու՝ նիւթը գարգացնել ու խօսել հայրութեան զարգացումն ու հայրենիքի մասին։ Չարդարեանը փարձում էր օսմանեան դրաքննութեան ճնշման տակ իր խօսքը վարդապետէն փոխանցել եւ հիմա, Երիւս, Թուրքերի քաղաքականութիւնը հայերի նկատմամբ չափ տարբեր չէր նախորդից։

Երկու յատկանշական երեւոյթ կայ շարքի վերջին դասագրքում, «2. գիրք, բարձրագոյն կարգի դաս» համար», 1813ին Պոլսում հրատարակուած։ Առաջինը արեւելահայ, կամ ինչպէս ինքն է կոչուած «Կովկասահայ, գրականութեան ներառումը իր սեփական լայն-առաջ», նպատակը՝ «գիւրացնել հայրգականութիւնը հայութեան երկու հաւաքածների միջեւ, եւ կոչ է անում «թերահայ ուսուցիչներուն» յատուկ ուղադրութիւն զարձնել այս

կէտին եւ աշակերտներին լայնատեղ քերականական եւ այլ տարրերութիւնները երկրորդ յատկանշական երեւոյթը, դարձեալ աննախընթաց, դասագրքում ներառուած ստեղծագործութիւններ են թուրք ժամանակակից գրականութիւնից։ Բացի հայոց դրականութիւնից բերուած նիւթից, Չարդարեանը նորոգում տիրույթն ծանօթացնում է ոչ միայն եւրոպական գրականութեան, այլ նաեւ եւ մտնաւանի՝ թուրք գրականութեան հետ։ Այս քայլը թարգմանն է Չարդարեանի քաղաքական սեւեռումի եւ համայնութեան, բայց այս մասին քիչ յետոյ։

Կուսակցական-յեզափոխական գործունէութեան բերումով նաեւ տարբեր թերթերում, մանաւանդ՝ իր իմաստասիրութեամբ լոյս տեսած «Բազմիկ» եւ «Ազատամարտ» թերթերում գրուած հրապարակաբանական-գաղափարական բազմաթիւ յօդուածներ ունի Ռ. Չարդարեան։

Եւ վերջապէս գրական ստեղծագործութիւն, որի ընդհանուր բնութագրման համար վերադարձնել մի հատուած «Նախապաշտպաններու, Բարեկամներու» կողմից գրուած ներածականից՝ Չարդարեանի 1930ին Փարիզում հրատարակուած մէկ հատորի մէջ։ «Գործը ուր տուած է Ռուբէն Չարդարեան, քանակով թէ եւ քիչ է, սակայն որակով բազմակողմանի է եւ տրամադրւած։ Անկախ մշակած է վիպակը, հէքեաթը, հոգեւորութիւնը, պատկերը, ստանաւորը եւ փոփոխական պատմութեանը»։

Այս էրբ բնագաւառներից ո՞րն էր գերակշռո-

5. Չարդարեան «Անդրագետի 1927ի հրատարակութիւնն է, Տպարան «Հայրենիք», Պոսթրն։ Մէքքերումը էր 1929-ից։ Արտաշէս Տէր Նալապատեանի մատենագրութիւնից գիտենք, որ դասագիրքը յոյս է տեսել 1913ին Պոլսում։

6. Չարդարեանի «Բազմիկ» եռօրեայի խմբագրութիւնը ստանձնեց Յիւլիպետով՝ կուսակցական-յեզափոխական շուկայ տարածելով նոր միջավայրում։ Թերթը հրատարակուեց 1905 Հոկտեմբեր 15ին մինչեւ Հոկտեմբեր 1908, եւ քաղաքական-յեզափոխական յօդուածներից ունեցաւ նաեւ գրական եւ հասարակական բաժիններ։

7. 1909ին Պոլսի վերադարձից յետոյ, Չարդարեանին յանձնարարուեց խմբագրել «Ազատամարտ» օրաթերթը, սրբան Հ.Յ.Գաջնակցութեան։ Նրա ղեկավարութեան տակ, թերթը նեղ կուսակցական օրգանի բնոյթից դուրս ծաւալուեց եւ այդ յետ-յեզափոխական աշխատանքի մթնոլորտում դարձաւ հայ մտքի արտայայտութիւնը։ Տես Սիրունու վկայութիւնը, «Հայրենիք», էջ 28։ «Ազատամարտ» հրատարակուեց 1909, 10 մուսուրից մինչեւ 1915 Մարտի։

8. Տես Ռուբէն Չարդարեան, «Անդրաշական երկեր, Ա. Սրճակ Էջեր ու Հեքիաթներ», Փարիզ, 1930, էջ 14։ «Նախապաշտպաններու Բարեկամներ» հրատարակականը կապուել էր 1929ի Անկախութեան եւ նպատակ ունէր հաւաքել եւ հրատարակել արեւմտահայ նախապաշտպան կամ մեղադրողների երկերը։

Առաջին հրատարակութիւնը նուիրուած է Ռուբէն Չարդարեանին։ Հրատարակական կապի տեղումներն էին՝ Ա. Վրացեան, Մկրտիչ Պարոտեան, Դ. Գրիգորեան, Լ. Մոսկոն, Վազգէն Շուշանեան, Կարո Սարգսեան, Մկրտիչ Երիցան, Օհան Կարո։ Տեղեկութիւնը առնուած է 1930ի հրատարակութիւնից որ Մատենադարար Լ է կոչուել։

դր. Հաւատում եմ իր կրօններ ընկերել՝ Յակոբ Միրունու վկայութեանը՝ «պրագէտն է արական- նը իր մէջը»⁹ եւ ես էլ այսօր այդպէս կ'ուղեւայի զատել իրեն։ Եւ դեռ աւելին, հաւատում եմ, որ կուսակցական գործը, ընդ որում՝ հրապարակադրութիւնը՝ ի պատասխան իր կուսակցական պատկանելութեան եւ պարտազգացութեան, ժողովրդի ընկերային ու քաղաքական կացութեան հետ քայլ պահելու փորձութիւնը՝ ամէն օր մի նոր խօսք տեսչու, սեղմ, ճշգրիտ, առանց մանուածապատութեան առիտու հնարով կրօնուած, խանգարեց նոր գեղարուեստական պրակտիկութեան վերելքը։ Իսկ միեւնոյն ժամանակ, նրա գեղարուեստական ճաշակն ու բանաստեղծականութիւնը շատաւրեղին, զնասեցին իր հրապարակագրութեանը։ Ըստ ժամանակակիցների վկայութեան ու հետագայ յուշագրութիւնների, Ջարդարեանը աւելի երազող էր քան առաջնորդող, աւելի խոնկացող ու մտածող էր քան յեղափոխական-հաստորակական գործիչ։ Համիսու էր, մեղմ, հանդարտ, անխուփ, պաղարիւն։ Ասում են պիտի մօտենայիր նրան՝ ներսի կրակը պանելու համար¹⁰։ Եւ այսպէս, ամբողջ կեանքում Ջարդարեանը բանտրւած մնաց այդ իրարամբիժ paradoxal իրականութեան մէջ։ Արտեղ տուժողը Հայոց ղեկարուեստական զրականութիւնն էր՝ Ջարդարեանից սուկաւաթիւ։ Եւ սահմանափակ դանձեր բաժին ստացած։

ՊԵՂԱՐԻՒՍԱԿԱՆ ՍՏԵՂԾԱՊՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսօրուայ այս համառօտակի ուսումնասիրութիւնից բխած պեղուցմունս մէջ չպիտի խօսեմ նրա ոճական յատկութիւնների, յեղուական նկարագրի, զրեղածելի, կողադարի ու կառոյցի մասին։ Ըստ Ջարդարեանի կեանքին ու պործին նուիրուած Միրունու մէկ յօդուածին, երբ արեւմտահայ աշխարհարարը դեռ իր օրէնքները

չունէր, երբ Հրանտ Ասատուրը փորձում էր արեւմտահայերէնի քերականութեան բարձրագոյն դասարանների դասադրքնոր ձեւաւորել, նոյն Հրանտ Ասատուրի վկայութեամբ Ջարդարեանի գրածը հենց «դասական աշխարհարարն էր»¹¹։ Եւ իրօք, նրա արձակը ճոխ է ու սուհուն, ոճը չլիւսած, շունչը բանաստեղծական։ Այս հարցերով աւելի հետաքրքրուողը թող կարդայ Յակոբ Օշականի Համապատկերների է հասարակ մուրէն Ջարդարեանին նուիրուած գլուխը։ Եւ յուսամ թէ բազմածալք եւ բազմամակարդակ բառակոյտերի, անդադար բաղուող ու փակուող փակուածների ու շեղումների, բարդ ու խորիմաստ մտքերի տարափի ընդմիջից պիտի կարողանայ պատկերացնել Ջարդարեանի գրական ժառանգութիւնը՝ դուռ արուեստի տեսանկիւնից դիտւած՝ իր ամբողջ գեղեցկութեամբ եւ ինչու չէ նաեւ իր իւրեղիւ երեսներով։

Այստեղ ես էլ իմ հերթին մի փակագիծ բացելով առեմ, որ Օշականը Ջարդարեանի գեղարուեստական պործի որպէս թելութիւն մոտենանշում է նրա տուած գեղեցկի պատկերների պարտուած ծուլիւնը աւելորդ ածականներով ու հոմանիշներով։ Եւ իրօք, դրանք պատնէշներ են՝ տուեա, պատկերի անմիջական ուղղեցութիւնը արդիւրդ։ Մակայն, լոտեն այն է որ նման աւելորդ բնականորումից ու խճողումից գերմ չեն նաեւ իր, Սշականի այսպէս այնքան արժէքաւոր ու դիպուկ դիտարկումները։

Փակագիծը փակելով, այսօր նպատակ ունեմ նորի վեր հանել Ջարդարեանի շատուած բառը, երբ գիրն ու խօսքը ակամայ մերժում էին «հարագատ թարգմանը բլլայ իտրհուրդին ու զգացումներուն»¹²։ Պիտի փորձեմ արտադրքը հանդիտանայ մյն ցուի, որ Ջարդարեանն էր ապրում չկարողանալով արուեստի անկեղծութեամբ եւ մտքի ազատութեամբ տալ յիշուա պատկերը 1893ի չորաշուք պատմութեան։ Ուրեմն շեշտս դորձեալ աղէտի պրականութեան վրայ է, ուր է՝ գրականապիտական գործիս ու կեանքիս առաքելու։

9. ԅ. Տ. Միրունի, «Ռուբէն Ջարդարեան», էջ 30:
10. ԅ. Տ. Միրունի, «Ռուբէն Ջարդարեան», էջ 41:
11. ԅ. Տ. Միրունի, «Ռուբէն Ջարդարեան», էջ 29:
12. Ռուբէն Ջարդարեան, «Յայգալոյս» (Արմակ էջդր), Մատենաշար «Ազդակ» թիւ 4, Կ. Պոլիս, 1910: Մէքքերուվը՝ գրքի նախաբանից։ Յետ ուլու, «Յայգալոյս»ից կատարուած քոլոր յղումները սույ հրատարակութեան են վերաբերում:

թեան կիցակէտը Չարդարեանի գործը ներկայացնելով, պիտի փորձեն՝ տալ նրա իրական արժէքը, դերը մեր դրականութեան անդաստանից ներս, չպիտի գայթակղուեն գոհի ստարագով նրան պարտւելու եւ որպէս նաճատակ երկրպագելու փորձութեան աւելել, այն ինչ որ կատարուել ու կատարուում է Եզեռնի զոհերի Ֆեթիշացման ճամբով: Եւ իրօք, օրինակ՝ Թուրքին Չարդարեանի անունը հոյսովուել է ո՛չ աշխարհի բոլորեւթադարձութիւններէ ծանօթագուման առիթով, այլ հենց որպէս մեծ նաճատակը Հայոյ Եզեռնի:

Չարդարեանը առաջին մատարականներէց էր որ Երիւթ-Թուրքերի յեղափոխութիւնից յետոյ Սոյիս վերադարձաւ: Վերադարձաւ անմիջապէս, ողբերգութեամբ Երիւթ-Թուրքերի յեղափոխութեան բարձր զաղափարներին փառահած: Վերադարձից երեք ժամ առաջ Եսայիանին ուղղուած նամակում այնպէս է րացատրում իր հոգու խայտանքը: «Բաւական պերճախօսութիւն կը պակսի ինծի՝ րացատրելու համար ձեզի ինչ որ կը զգայ սիրտու եւ բոցու համար ձեզի այն ուրախութիւնը՝ որ կը յորդի, կը գեղու հոգիէդ»: Նոյն նամակում յայտնում է իր կասկածը Երիւթ-Թուրքերի նկատմամբ՝ երբ քսա երեսոյթի մի քանի ամիս առաջ Փարիզում տեսակցած է եզել նրանց հետ եւ «կը կնքէինք թուրքերուն հետ մեր գինակցութեան ուխտը», արդեօք հայ ժողովրդից նոր զոհորերութիւն, նոր արիւնի էր պահանջուում: Իսկ հիմա «երբ յաղթանակին մեծագոյն մասը շահած ենք՝ առանց նոյնիսկ մեզմէ քիթ մըն ալ արիւնած ըլլալու, կըր երէկի վազրերը դառաղեղի մէջ էն՝ երջանկութիւնս անթերի է»: Պոյիս էր վերադառնում քանի որ «երկրին մէջ կը սպասէ մեզի ծովու չափ աշխատանք»: Այո՛, Բուլղարիան օտար էր, ժամանակաւոր հանգրուան, իսկ

Թուրքիան իրն էր, իր հայրենիքը: Դեռ նախորդ տարին, Ֆիլիպէից Փարիզ Եսայիանին ուղղուած նամակում այնպէս էր գրել. «Կը զգամ ձեր հոգեկան դառնութիւնը, որ կու գայ ձեզի օտարութենէն ու օտարէն: . . . Ես իսկ նոյն ցաւը կու լամ մէջն թէ եւ հոս հայ կեանք մը կը դտնուի տակաւին»: Չարդարեանը վերադառնում էր սակայն, իր մեծագոյն յուսախաբութիւնը ապրելու եւ իր կեանքը ցուց տալու համար:

Պոյիսմ, Չարդարեանը հաւաքեց ժամանակի թերթերում ցրուած իր գեղարուեստական գրականութիւնը, գրա մէջ նաեւ ձեռք չարաշուք պատմութեան տխուր ստուերները, հէքնաթ, պատկեր, փայտի եւ արձակ րանաստեղծութիւն, ու ձեռքն յոյս ընծայեց «Յայդայոյս», հատորը՝ ներառելով նրա մէջ Ֆիլիպէում գրուած մի քանի կատրիներ, որոնք նշուած են որպէս այդպիսիք: Հատորի համար 1909, Նոյեմբեր 23 թուագրուած, Պոյիսմ գրուած «Իրի նախամուտ» յատուկ խորհրդի մէջ, դեռ խափուակ ապաստանեան յոյսով տարուած, Չարդարեանը վերադարձ էր չղթայուած խօսքի պատճառած դարձ Գաւառական տխուր կեանքը՝ անարդարութեան ու հարածանքի քողարկուած ախուր պատկերներով Չարդարեանի փորձել էր հակադրել իր առաջագրած լուծումով՝ երբեմն ծածկանունն առնել թողնելու՝ Աչք Եհովայի («Հայրենիք»ի մէջ), Ասյան (կուսակցական հայորդակցութիւններում), Բարդէն («Անահիտ»ի մէջ), Էթտահար («Բազմիկ»ի եւ «Երուակ»ի մէջ), Հրաչ («Անահիտ»ի մէջ) եւ դեռ ուրիշներ: Օգտագործել էր այլաբանական խօսքն ու գեղարուեստական արտայայտութեան լուրջ հնարաւորութիւնները, օգտագործել է հէքնաթի ժանրը, որ հնարաւորութիւն պիտի տար իրեն ներկայի աննշան գէղարդ գէպի անցնալի իմաստ-

13. Ըստ Չապէր Եսայիանին գրած նամակի, թուագրուած 31 Յուլիս, 1908, եւ Պոյիս է ուղղուել նոյն օրը, այսինքն ինքնափոխութիւնից միայն մէկ շաբաթ անց: Նամակը տեւ՝ Երեւանի Քրականութեան Թանգարան, Թուրքի Չարդարեանի Ֆոնտ:

14. Տեւ՝ նոյն վերի ծանօթագրութեան մէջ նշուած նամակը:

15. Նոյն տեղում:

16. Նամակը, թուագրուած 1/14 Մայիս, 1907, տեւ՝ Երեւանի Քրականութեան Թանգարան, Թուրքի Չարդարեանի Ֆոնտ:

17. 1910ին Փարիզում վերահրատարակուած «Յայդայոյս»ի մէջ նախորդ հրատարակութեան (1910) մէջ կիրառուած հերթականութիւնը, վերջում եւ կտրուել, աւելացում են ուրիշներ: Եւ որ շփոթեցուցիչ է հետագայ ուսումնասիրողի համար, եթէ ձեռքի տակ չունի 1910ի հրատարակութիւնը եւ կամ Տէր Խաչատուրեանի մատենագիտութիւնը, չգիտի կարողանայ պատկարներ Ֆիլիպէում, այսինքն՝ սպաստ մքեղորատում գրուած ներք՝ գրաքննութեան տառերի տակ գրուածները:

աաւոր խորհուրդները սուղուելու¹⁸։ Ինչպէս Յակոբ Օշականն է բացատրում, «բառի կը ծանրագուն իմաստներով, որոնց խափանցումը անհրաժեշտ է ազդային մշակոյթի օտարներուն»¹⁹։ Եւ դա բանաձեւում է Ջարդարեանի գրականութեան՝ վաղուան գրականութեան։

Ամենից գայտուն եւ շատերին ծանօթ օրինակը այդ աշխարհութեան նրա «Գամրոնն է՝ կեանքի տխուր պայմանների բերումով իր երեւման խորհրտ բարձրութիւնից իջած դաշտային տափաւութեան մէջ խորտոգ միջակութիւններից մի կտոր ոսկոր մուրալոգ դամբուր, որին Ջարդարեանը աջակց է ուղղում իր խօսքը։ «Ամրոտային դատարանը, փողոցային փրկսովակութիւնն է որ իր մեծութիւնը կը հաշակէ» եւ դուռն «Քայլ՝ վեհօրէն, քայլ՝ բարձրագից, ո՞վ գամբուր, քայլ՝ աշխարհայինութիւններուն ծիծաղելի ամբարտաւանութեան առջեւէն, արարտաւանութիւն, որ չի ամչնար վեհանձնութեան ետեւէն հաջելու»²⁰։ Հիմա ինչպէ՞ս ընկալել ու մեկնարանել այս խօսքերը։ Բնութեան օրէնքի մի պատկերաւոր արտացոլիք՝ ծերացած, ոչ պիտանի դարձած մի կենդանու կեանքի արգահանելի վերջին շրջան, թէ՛ հայ եւ ինչո՞ւ, չէ նաեւ որեւէ համայնքի մէջ կրէկ եւ աշօտ, բարձրորակ, մտաւորականի գործունէութեան դէմ միջակութիւնների չլիցազգիւթած անարդար ու ստորին նկրտում։

Էեռների բարձրութեան եւ տափակ ու անհեռանկար դաշտերի մէջ խորտոգ միջակութիւնների հակադրութիւնը կրկնուում է մի քանի գործերում։ «Սարերու տղան» նորավէպի մէջ, օրինակ՝ «պաշտի միամիտները, որ թուփի մը ծածօրին տակ կը նստին ու դաճած մորենիի մը ստուերովը պոչ

կըլլան, անդա՞մ մը դիտնային ամբողջ կտորաւ մը լեցնող կաղնիի մը ասպետական հրապարակ, որ միւս միւտակ կուրծք կու թույլ հովերու կտտաղութեանը . . .»²¹։ Ան նաեւ կոչ է անյուզող պայշարի, թէկուզ՝ մենակ՝ կաղնու կերպարի ունի։

«Լեռան եղիկներն» արձակ քերթուածի մէջ Ջարդարեանը դրել է իր իղձերն ու ձգտումը՝ բնութեան ազատ գեղեցկութեան օրինակով՝ չէպի վեր սլանալու ու եղիկի «անկախ բանաստեղծական հոգի»ի գեղեցկութեանը հասնելու, նշապաատաննչ սրացքի շքեցութիւնը ընդօրինակելու, միջակութիւնից ու տափակութիւնից վեր յառնելու՝ ղէպի բարձունքների անկաշկանդ ազատութիւնը սլանալու, թէկուզ եթէ այդ բարձունքները գծուարին են, անհիւրընկալ, կոշտ ու ձիւնապատ։ Եւ այդ բարձրագագ վեհութեան գէժ Ջարդարեանը պնդում է «ի գուր յորանջող տափակ դաշտեր»ը, ուր անիմաստ է բեղմնաւոր գգացումներ փնտելը²²։

Ջարդարեանը այնքան սերտ կուպերով է կաշուած հայրենի բնութեան հետ եւ այնքան հարազատօրէն է տալիս պատկերը այդ փառահեղ պարգոյութեան։ Այդ պատկերից ճառակայթողը աչքին է դէպի հայրենին։ «Հօրհեռական տուն» պատկերով իր մանկութեան յիշատակները պարուրող հորը յիշած ու ղէպի օտարութիւն ուղղուած հայուցան է երգում։ Հայրական օճակի սկրք մոսնաւորումն է մեծ պատկերի, հայրենիքի սիրոյ։

«Հիմա ո՞վ է որ պիտի կրնայ ինձի բան թէ հոգր կեանք շունի, աւելի հզօր, աւելի տեւական, աւելի հաւատարիմ ու մարդկային, կեանք մը բազմապատկուած, անհունապէս անձնուորուած՝ որուն հետ խառնուած մարմնացքեր են բլուր սիրելիներ

18. Երուխանը այսպէս է բացատրում՝ «Հեքեաթ գրականութեան այն ձեւն է, որուն յարդապէս մշակումը ամենէն աւելի դժուար է։ Հեքեաթը իրականութիւն չէ, քսից իրականութեամբ մը կենդանացած պատմութեան է, անկէ բարոյական եզրակացութիւն չի պահանջուիր, իրիստ շատ անգամ ժողովրդային ամուղութիւն մըն է, բաժանի տրտում իմաստով եւ պոք մ'ողնորէ, կ'ազդուորեն, կը պնդաւորէ գրողը իր երեւակայութեան շողովը»։ Տեւ՝ Սիրունի, էջ 35։

19. Հեքեաթը Ջարդարեանի մշակած գրական սեռն է։ Ջարդարեանը հեքեաթով արտայայտեց ժողովրդի հոգին ու փրկսովակութիւնը իր՝ հեղինակի երեւակայութեամբ գեղարուեստական արժանիքներով օժտելով այդ սեռը։

20. «Համապատկեր», հատոր Է, էջ 252։

21. «Ճայգայտու», էջ 28։

22. Ռուբէն Ջարդարեան, «Ճայգայտու» (Սրձակ էջեր), հրատարակութիւն «Մարտիկ»-ի գրական մրցանակի թիւ 3, Մարտիկ, Եպարան Գրիկիոյ հարողիկութեան, Մարտիկ, 1994։ Մէքեռումն էջ 201-ից։ Ըստ Տէր-Խաչատուրեանի այս նորավէպը տուարին անգամ հրատարակուել է «Մարտիկ»-ում, Խարբերդ։ նորավէպը տեղ չի գտել 1910-ի հրատարակութեան մէջ։

23. «Ճայգայտու», էջ 52։

իրենց բոլոր խորհուրդներով, իրենց սակորներով ու ածխներով: Այդ կհանճն է որ կը խլարի իմ հօրնական երգիքի» ծոցէն ալ ու լեզու կ'ելլէ, երբ պինքը թողլով պիտի հեռանամ»²³:

Ինուեփեան եւ անասնական աշխարհի պարզ, վեհ ու անխառն պատկերները իր հարուստ ներկայացնելով պատկերելով, դրանց հետ միասին, դրանց կողքին՝ գուղահեռ, հին սոփորութիւններէ, սոփիստութիւնով սնուած սնտարապաշտութեան զերի հայ մարդու խեղճ ու անճարակ ներսից ու դրսից բունապաշտած ու կեղեքուած տաօրեան է նկարագրում: «Պուտ մը քուր», «Մանկան մը պատմութիւնը», ամենից տխուր եւ ազդու օրինակն են այս իրողութեան²⁴: Ու դեռ մարդիկ, որ պարպուած բոլոր մարդկային թատկութիւններուց, պարզ գոյութիւն են քաշկրտում: Դա կողմ Առաքելն է՝ «Տան սէրը» պատկերի մէջ, «այլեւ ալ ալ աւելորդ մարդկային շուքը, անակը, անտիրտկան, անզգայ ու մտհոտն իսկ մաքէն, յիշողութենէն ելած»²⁵: Զարդարեանը ընդվզողն է ալ վիճակների գէժ, փոխել, յեղաշրջել երազողը: Բայց միայն երազող: Հաւանական չէ՝ մասնէն, թէ ալ երազի ճնշող բնուէն էր, որ նրան վէպի յեղափոխական լինչաբանական դործունէութեան մղեց ու իր խեղդուած ու կաշկանդուած ծայրը գեղարւեստական դործերում հնչեցրեց: Հայրենասիրութիւն, սպասասիրութիւն, այսօրնապատմութիւն, ընդվզում անարգարութեան դէմ: Ահա Զարդարեանի գիտալուստական գրականութեան զազափարախութիւնը՝ նրա պատմութեան ճիւղերի, հիշեցումների ու վիպակների մէջ արձագանգող: Փոխանակ ամենօրեայ մտահոգութիւնները, հաց վաճակելու ամենօրեայ հոգսը կեանքի նպատակի վերածելու, ծառանայ ստրկացնող հալածող բանութեան գէժ, ալ ժողովրդութիւնների, ցաւի ու հոգսի աղբիւրը հանդիսացող չարի դէմ:

Ինչպէ՞ս գիմադրել, ինչպէ՞ս պայքարել: Արդեօք ճիշտ էր Հռիփսիմէի արարքը, որ թուրքի հարեմից փախուստ տուեց եւ տղարեքի ժամանակ խեղդել տուեց իր այդանդից ծնուած դաւակին, որովհետեւ իր հօրն ու մօրը, իր ժողովրդին կոտորած թուրքի սերունդ էր այն: «Խեղդեցէք զայն» տառերը Զարդարեանը նախապես աղերս է «Զարդի օրերէն» եւ այսպէս է սկսել Յարպի նկարագրութիւնը՝ «Մահուան սրբին են ու դիւանները անթաղ կը պառկին արիւնոտ քարերուն վրայ...»: Հռիփսիմէն սեւեւ է Զարդը, իր սան աւերուելը, ու հիմա թուրքի հարեմում քար է դալիս պղծուած ու սգաւոր: «-Կեանքում, դեռ կը լինէ՞ս անցեալը», կշամբոտում են նրան իր միշտ տխուր լինելու համար: Եւ Զարդարեանը աւելացնում է իր կողմից՝ «Այո՛, կեանքում իմ հայրենիքը լի կրնար մոռնալ՝ որքան ալ տանջուած, հայրածական ու վտարանդի լլկայ՝ աչո՛, անիկա պիտի լինէ իր սուրբ հողն ու անմուսց մեռելները, որ հայունն ու հայ լլկանուն համար կործանեցան, մեռան»²⁶: Հռիփսիմէի կատարածը լատ Զարդարեանի վրէժխնդրութեան աքս է, որով որոտում են նրա մեղքերը, «Քաւութիւնը կատարեալ է»:

Հայ իրականութիւնից վերցուած իրական վրէժխնդրութեան, ալ ժամանակ արդէն ծաւալւած ֆիդայական դաւաճողութիւններից դիմեալ պայքարի օրինակներ պիտի չկայողանար տալ հաւանաբար, ինչպէս Աւետիս Ահարոնեանը կ'անէր աւելի ազատ պայմաններում, բայց կարելի էր գիմել քրդական օրինակին եւ հերոսութեան, ազգասիրութեան (յեղային) ու զոհաբերութեան օրինակը վերցնել ի պարահիմն կեանքից «Նահանջ» քրդական վիպակում. Իրաւահիմն, ցեղապետ Զոյգի քաջարի վաւեր ծառայել էր թշնամու դէմ, մի քանի կտրիճներով յեռ մղել նրան ու կոտորածից փրկել էր իր ցեղը²⁷:

23. «Զուգայոյս», էջ 226:

24. «Զուգայոյս», էջ 42-47:

25. «Զուգայոյս», էջ 82:

26. իս պատմութիւնը տեղ չի գտել 1910ի հրատարակութեան մէջ: Ըստ Տէր հաշտարեանի մատենագիտութեան, տպագրուած է հղել 1901, Գեղարեւոյնի «Գոշակ»ում: Տես Արթիւրեանի հրատարակութիւն, 337-342:

27. Տէրսիմի քրդական կեանքից առած առ վիպակը «Զոյգ» վերնագրով առաջին անգամ տպագրուել է «Ռուզմիկի տառքին համարներում, տպւա՝ 1911ին «Գաւառին տարեցոյցը»-ին մէջ՝ «Գոյում» «Նահանջը» վերնագրով: Մեծ հաւանականութեամբ, Զարդարեանը այս գործը գրել է Ֆիլիպէ գնալուց առաջ: Նկատի ունենալով այն պարագան, որ այդ տարիներին Գաշտարեանի համագործակցութեան ձեռք էր պարպել Տէրսիմի քրդերին երկու ժողովուրդների ընդհանուր թշնամի թուրք կառավարութեան դէմ, վիպակի գրառումը տրամաբանական է թուում: Իսկ ո՞վ էր քշնամի Զիլֆիթարը, մի ուրիշ քրդական ուղիների պէ՞տ. թէ՞ թուրք:

ԲՈՂՈՔԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարգարեանի շեշտուած յեղափոխական, պաշտօնական գործունէութիւնը անդադար հալածանքի առիթ էր առնել (Արդէն, 1903ին Մեկրէում ձերբակալուել էր ու մէկ տարի քանաւոր մնացել)։ Նոր վրայ յաւելեալ կատկածի ստուեր էր ընկել Դաշնակցութեան կազմակերպած Սուլթան Համիդի դէմ կոտորուած մահափորձից յետոյ։ Նոր ձերբակալութիւնը հապիւ ապատուած, ուրեմն Զարգարեանը բնտանիքով Ֆիլիպէ էր հաստատուել 1905ից մինչեւ նորիս թուրքերի յեղափոխութիւն։

Այդ մի քանի տարին, ազատ միջնորդութի մէջ ստեղծագործելով, նա տուն տուն կ'իւրացուած ձայնին, ասաց այն ինչ չէր կարողացել արտայայտուել 1895ի Զարգարի ազդեցութեամբ ստեղծագործած պատկերներում։ Իր գեղարուեստական գրականութիւնը բողոքի դրօշ դարձրեց, իր ժողովրդին սրախողիտի կոտորող, սոված որբերի վռնակի վերածող դահլիճներէ դէմ։ Այս յետոյ բողոքի կանչ անարգար Ասաճու դէմ, «Տէ՛ր լսէ՛ մեզի» պատկերով։

«Տէ՛ր, լսէ՛ անոնց որ քու բարութիւնդ կ'տնիծեն եւ քու համբերութիւնդ կը նախատեն»։

... լսէ՛ անոնց՝ որովհետեւ իրենց նահատակ մայրերուն մայերը դատաստանի օր մը քու վիզդ պիտի փոթթուին իտերու պէս եւ իրենց հայրերուն սակորները երեք չպիտի մոռնան իրենց դատակներուն անարգանքը՝ եթէ եօթը թիւ խոտ ալ բուսնի անոնց գերեզմանին վրայ։

... Անոնք նշանակն են իրենց ցեղին խաչելութեան եւ իրենց հետ՝ աշխարհի շուրջ ծալքերուն պիտի ամանին իրենց արիւնոտ խանձարուրէն ծուէն մը ու կարծի մը այն ահաւոր ծիլանիէն՝ որ քու աստուածային զթութեանդ ուսերէն ձգեցիր այն օրերուն եւ որով ծածկեցիր մահուան այս պաշտակներուն առաջին մերկութիւնը»։

Ֆիլիպէի ազատ միջնորդութիւն, Օսմանեան թուրքիան «գժոխի ռաշան» էր կոչել²⁸։ Իր լուսաբեր ձայնը էր բարձրացրել թէ՛ հրապարակագրութեան ընդմիջից եւ թէ՛ դիպարուեստական անկաշիւից արտայայտութիւններով։ Այս պատկերներէց է «Շուռ մըն ալ պակաս»ը՝ կեղեքուած հայ մարդու անկեղծ բողոքը՝ հայ եսակենտրոն ու ժողովրդի դատը իր անձնական շահերին դռնող հոգեւորականի դորձած անարդարութեան դէմ։

1907ին, Գէորգ Չաուշի նահատակման տարիս վրում է հայ ազատագրական պայքարի այդ մեծ հերոսի կեանքն ու սխրագործութիւնները։ Գեղարուեստական դործ է դա, իի ներշնչանքով ու զդայական կեղիւմներով։ Գէորգ Չաուշի կեանքի պատմութեան ընդմիջից, զգալի են իր Զարգարեանի իղէալը, Ֆիդայական շարժման իր մեկնարանութիւնն ու անկախիքները ու հեռանկարը ապագայի։

Ֆիլիպէի ստեղծագործութիւններէց են «Ճաղթական Ալլահը եւ պարտեալ Ալլահը» եւ «Բաղինին փառարանութիւնը»։

Հայ ժողովրդի ազատագրման իր մոլեգին պայքարի մէջ, հայու դէմ շարունակուող տնայազարութեան վերացումը կեանքի նպատակ դարձրած Զարգարեանը չէր կարող չաղդուել հեթանոս շարժումից, եթէ կարելի է այդպէս կոչել գեղարուեստական գրականութեան մէջ տուած ու փառանքութիւնը հեթանոս անցեալի, երբ ախրողը ուժն էր։ Եւ հեթանոս աշխարհի պարզ ու արդար գեղեցկութեան ու արեւելեան միսթիք անցեալի հետ ու ծալքերում կեանքի խորհուրդը փնտռեց։ Փնտռեց ելքը ազգայնից ուղիւտուած ու նոր ազգայնիքի շարաշուք ստուերում ծուարած իր ժողովրդի։ Եւ շատերի պէս ինքն էլ վառեց բաղինը՝ ուժի ասածունը երկրպագելու համար։ Եւ յուսաց, «Մուխը որ կը ծառանայ այս տաճարին խորէն» մեր սեւ կրկրին մուշկ լաւն է, տնէ՛ծքի սիւն է արհուիրքի անապատին մէջ թափառական ժողո-

28. «Յայգայոյս», էջ 155։ Պատկերի տակ նշուած է զրի ստեղծելու տեղը՝ Ֆիլիպէ։

29. Տեւ Չապէլ Եսայեանին գրած սամակը Ֆիլիպէից Փարիզ, 6/19 Մայիս, 1906, Գրականութեան թանգարան Բուրէն Զարգարեանի ձեռնարկ։ Այս նամակում գրում է իր Մանիսա եղած ծանուակ ձերբակալուած ու բանտարկուած ինչեւէ մասին եւ բանտարկութիւն է համարում իր Ֆիլիպէ մեկնելը «քանի որ յաջողող դէպքերը ապանգարար ծանրօրէն պիտի բախէին ինձի»։

30. Չեռքիս տակ է 1992 թուին Երեւանի Պետական Համալսարանի հրատարակութեան լոյս ընծայած Բուրէն Զարգարեան, «Գէորգ Չաուշ» գրքովը դասական ուղղագրութեամբ։ Գրքովը արտատպումն է 1967ին Կարօ Մասունու յատարանով Պէրոսում լոյս տեսած գրքովի։

վուրդին եւ յայտնութիւնը յոյի ապագային»³¹։ Եւ «հուրն ու իր տարեբային գօրութիւնը» որ պիտի պաշտէր, «հին հաւտութք»ը որին պիտի դառնար, պիտի մաքրէին «ինչ որ տներն ու արիւնը պղծեցին», պիտի ողջակիզէին սարկութիւնը³²։ Սա Զարգարեանի ճիշդ է հուզեմաբար ասարող իր ժողովրդի ճակատագրական ուղին փոխելու ճամբան՝ վրէժխնդրութիւն։ «Տեխտած ենք մեր մայրերուն նամուսին վրայ՝ առի վրէժխնդրութեան այն հարկը՝ որ աւերման անպատիժ օրերը իրեն չղթայ մեր վզին վրայ բեռ դրին»³³։

ՃԱՌԻ ՎԵՐՋԻՆ

Պոլիս վերադարձից յետոյ շատ քիչ պրական գործեր արտադրեց, կրօնական էր հրապարակագրութեամբ, «Ազատամարտ»ն էր խմբագրում, ուսուցչութիւն էր անում ընտանիքի առօրեան հոգալու համար։ Այնուամենայնիւ ազդեցութիւնը մնաց հեթանոս աշխարհի երրորդ օղակին՝ էր, պիւնին, երգը, գեղեցկութիւնը, ուժը, կեանքն ու վայելքը հենց այս աշխարհում։ Նրա «Եօթը երգիչներ» հէքեաթը՝ մարմնացումն է այդ ճշմարտութեան։ Զարդարեանի ղդայուն հույին չէր կարող չտարուրելու Արեւելքից փչող քամուց, որ կեանքի փրկիսփայտութիւնն էր իր հետ բերում, արեւելեան իմաստութիւնը։ «Ո՛վ որ սուլիժան մը ունի իր հողին մէջը»³⁴ հէքեաթում պարփակուած։ Այս իմաստութիւնը տալիս էր բանային քաջութիւնը չղթաները գնդութեան եւ տիրոջների բռնապետութեան։ Դա պերիշի «երգն» էր, այսինքն՝ արուեստը իր կատարելութեան մէջ։ Արեւստի փառարանութեան իր հեւքի մէջ, փառքի ու ճոխութեան պատուանդանին բազմեցրեց այն՝ որպէս հակադրութիւն հոգիներին աղքատութեան, հոգիներ որոնք պարկ են յիմարից ու գեղեցկութեան պաշտամունքից, որոնց մէջ բուն շեն

դրել «գահեր ու պահակներ»³⁵։

Մին էր ճամբան վերապրումի, ժողովրդի յարատեւման։ Պաշտէ իրապէս թուրքի հետ կարեւոր էր չեզու գտնել։ Բայց արդեօք թուրք եւ հայ ժողովուրդները ճանաչում էին իրար, ճանաչում են այսօր։ Զարգարեանը մէկն էր այն քննիչ, որ այդ մերձեցման փորձը կատարեց՝ մտաւորական մակարդակի վրայ գրական էջերի փոխանակում, թարգմանութիւններ երկուստեք։ «Ազատամարտ»ում տեղ տուեց Մեհմետ Էմինի եւ ուրիշների գրականութեանը, նոյնիսկ իր «Մեղրագետ»ի մէջ բարձր պատրանների դասադրում թարգմանարար ներկայացրեց կատարել թուրք գրականութիւնից։ Եւ ո՛վ հեզնանք թուրքական կատարութիւնը մի փոքրիկ դրամական նուէր էր ուղարկեց նրա այդ նախաձեռնութեան համար։ Ու հենց «Մեղրագետ»ի նախարանում, «Այս զրքին նպատակը» վերնադրով, այսպէս արտայայտեց իր համոզումը,

«Պատմական եւ քաղաքական ճակատագրով միացած երկու ժողովուրդներ, որոնք կ'ապրին կողք կույքի եւ կը գործեն միասին, հարկ է որ պիտար ճանչնան մանաւանդ մտաւորապէս։ Այդ փոխադարձ ճանաչողութիւնը պիտի օղակ ջնջելու շատ մը նախապաշարումներ եւ անհասկացողութիւններ, որոնք մեծ մասով հետեւանք են երկու ցեղերու միջեւ մտաւորական հաղորդակցութեան մը պակասին»։

Զարդարեանը հաւատում էր, որ՝

«Գրականութիւնն է մէկը այն միջոցներէն, որ կարող պիտի լլցայ կամաց կամաց ներդաշնակութիւն ստեղծել երկու բնակակից ցեղերու հոգեբանութեան մէջ, կուտակուած դաժնութիւնները շքանկյով ու անոնց տեղ ստեղծելով աւելի մարդկային, աւելի ուղիւ եւ երկու ժողովուրդներուն յառաջդիմութեանը ծառայող աւելի պիտակից ղգացումներ»³⁶։

31. «Յայգայոյս», «Բագինին փառարանութիւնը» պատկերից, էջ 144։ Ռուսերն անգամ տպագրուել է «Ռապմիկ»ում, 1906, Յուլիս 1։

32. Նոյն տեղում, էջ 146։

33. Նոյն տեղում, էջ 145։

34. Ըստ Տէր Խաչատուրեանի մատենագիտութեան, «Եօթը երգիչներ»ը լոյս է տեսել 1911ին «Ուղարկամարտ»ում։ Ծաւ՝ Մարիիսիսի հրատարակութեան մէջ, էջ 176-182։

35. «Ո՞վ որ Սուլթան մը ունի իր հողին մէջը»ը լոյս տեսաւ 1913-ին Նաւասարդ տարեգրքի մէջ։ Տեկետը տես՝ Մարիիսիսի հրատարակութեան մէջ, էջ 183-191։

36. Նոյն տեղում, էջ 191։

37. «Մեղրագետ», «Զ. գիրք, բարձրագոյն կարգերու համար», 1914-ին Պոլսում հրատարակուած։

Յատկանշական հնչեղություն ունեն այս մարբեր աշուր: Ծէ՞ որ մերձեցման այիք է տեցնում նաև այսօր թուրք եւ հայ մտաւորական շրջանակում, առնուազն ճիշդ իրարու ճանաչելու: Արդ՝ հօքի՞նչ արդիւնք պիտի ունենայ, պիտի քննուեն նախապաշարումներն եւ անհատկացողութիւնները:

Զարդարեանի ու նրա պէս մատուցականների ճիշդ ճղեռնի նախօրեակին ի գերեւ անցաւ 1914ի ամառը: Էրզրումի ժողովից վերադարձին արդէն յոռետես էր նա: Պատերազմը սկսել էր եւ հայութեան զլխին պայթող մի ինչ որ աղէտ էր նախատեսուում: Կարելի չէր եղել Զարդարեանին համոզել, որ Պոլսից հեռանայ: Վաճառուոր լուրեր էին ասարածուում մանաւանդ կուսակցական դեկաւարների կառավարութեան կողմից սպառնացող պատահասի մասին: Զարդարեանը չուզեց

«Ազատամարտ»ը թողնել: Սիրունին յիշում է վերջին օրը. Զարդարեանի հետ վերջին հանդիպումը 1915ի Ապրիլ 10ին, Շարաթ առաւօտ, «Ազատամարտ»ի խմբագրութեան մէջ: Նիրունին գնացել էր լուր տալու, որ այդ օրը չէնքը պիտի խուզարկեն: Նոյն գիշեր Զարդարեանին ձերբակալել էին տանից:

Կնոջ՝ Վերոնիկային հասցէագրուած երկու բացիկ է մնացել նրանից, արտորի ու ուղանդի ճամբաներից հասած: Առաջինը Այաշից է 16 Ապրիլ, 1915 թուակիր, թրքերէնով: Երկրորդը էնկիւրից (Անգարա) Մայիս 28, 1915 թուակիր, հայերէնով: Դրանից յետոյ այլեւս ո՛չ մի լուր:

ՌՈՒԲԻՆԱ ՓԵՐՈՒՄԵԱՆ

**«Քալէ՛ վեհօրէն, քալէ՛ բարչրավիգ, ո՛վ գամբռ, քալէ՛ այս միջակութիւններուն ծիծաղելի ամբար-
տաւանութեան առջեւէն, ամբարտաւանութիւն, որ
չի ամչնար վեհանշնութեան եփեւէն հաջելու...»**

Ռ. Զարդարեան



«Quadrant of Hide & Seek»

ԾԷՍԸ, ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԹԱՏՐՈՆԸ ԴԱՐԵՐՈՒ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՉ

Աշխարհի բոլոր ժողովուրդները ունին իրենց հնագույն ծէսերն ու պաշտամունքային արարողութիւնները, տօնախմբութիւններն ու ժողովրդային խաղերը, որոնցմէ սկիզբ առած է թատերական արուեստը: Հայկական ժողովրդականացուած խաղերու մէջ մեծ նշանակութիւն ունեցած են Վարդափառի, Բարեկենդանի, հարսանիկան, ըսյախաղացներու մրցութեան եւ րազմաթիւ այլ ժողովրդական տօնախմբութիւններն ու ծէսեր, որոնք գարեւոր ընթացքին հնթարկուելով փոփոխութիւններու՝ իրենց մէջ պահպանած են թատերական արուեստին փերարկերոյ բազմաթիւ տարրեր:

«Ճանգիւղում» կոչուած փնտրածգութեան թատերականացուած հանդէսը կը կայանար դարնան՝ Համբարձման տօնին, ի յիշատակ Յիսուսի համբարձման: Երգերով ու պարերով յագեցած թատերական այս երեւոյթը Հայաստանի մէջ իսկական ժողովրդական տօնախմբութիւն մըն էր, ուր տղաք եւ աղջիկներ իրենց հաւաքած եօթր գոյնի փաղիկները կը դնէին եօթր աղբիւրներու ջուրով լեցուած կուժերու մէջ եւ զայն կը յանձնէին առաղերս, խորհուրդին: Այնուհետեւ կը սկսէր գուշակութիւնը: Հանդիսատեսը մեծ հաւատքով կը հետեւէր ներկայացման ընթացքին:

Մուսու լերան հինումի արարողութիւնը ժո-

դժգոհական-ծխական թաղիտների եղակի աչքն երեւոյթներէն է. որ պահպանուած ու հասած է մինչեւ մեր օրերը: Ի սկզբանէ ծանօթ դիպաշարին մէջ պորձող «դերասանները» կը խողան խոր հաւատքով ու համոզումով: Հանդիսատեսը այստեղ դերակատար է: Դասի տեսարանին մէջ «մեղադրուի» փեսայուն համար կնքահայրը պարտաւոր է փրկուիլ վճարել:

Թատրոնը մարդկային գործունէութեան այն ոլորտն է, ուր ամէն ինչ խող է, թէ պայմանական, թէ՛ իրական: Թատրոնը կեանքի հայելին է եւ զուգահեռը, դատարկ տարածութիւն մը, որուն մէջ մարդը կը յօրինէ իր կեանքը, կ'որոշէ թէ մ'վ է ինք, ուրիշ՝ կու գոյ եւ ո՛ր կ'երթայ...

«Թատրոն» բառը, ստացին անգամ արտասահման եւ յոյները, որոնք մարդկային քաղաքակրթութեան նախահայրերն են:

Երբ տակաւին չկար թատրոն, թատերական ներկայացումները այգեկութի աւարտին կատարուող ասնահանդէսներ էին՝ նուիրուած Մեծն Զեւսի դաւակ Տիտիստի: Հին Գունաստանի մէջ Տիտիստոս դարձած էր պինդսրտութեան Աստ-

ւած, որու նուիրուած տօնակատարութիւններուն բնիկներն զինարդուքի ճամբով մարդիկ կը փորձէին ազատագրուիլ անօրինայ կաշկանդումներէ: Տիտիստոս ուրախութիւն եւ հրեւանք կը պարզելէր մարդոց, կը կազմակերպուէին խաղեր, դիմակահանդէսներ, մրցոյթներ, հեթանոսական ծիսակատարութեան ժողովրդական բանաստեղծները Տիտիստոսին նուիրուած երգեր կը յօրինէին, զորս կը կատարէր երգչախումբը: Տօնախումբութիւնները կը կայանային բարձրագոյն բոլորն հերոս սարսափ, որպէսզի հանգիստտեսները նստին բրաւանջն ի վեր եւ կարողանան դիմել բոլոր մանրամասնութիւնները: Յունական բոլոր աստուածները ունէին իրենց յատուկ ծիսակատարութիւնները, ուստի Աթէնքի բարձրագոյն բրաւանջներէն մէկուն վրայ կը պատրաստէին նախ փայտէ, ապա քարէ նստարաններ եւ եւ այդ վայրը կը կոչէին Թէաթրոն, որ կը նշանակէ հանգիստավայր կամ ցուցադրամայր, շուրջ 17000 հանդիսատեսներու համար:

Թատերական ներկայացման նախնական ձեւը խմբերգային բանաստեղծութիւնն էր, որ վերաճելով թատրոնի, Ք.Ա. Զ-Ե դարերուն Գունաստանի մէջ կը հասնի իր բարձրագոյն ծագման, իսթիկէսի, Աոփոկիէսի, Եւրիպիտեսի եւ Արիստոփանի շնորհիւ:

Հելլենիզմի դարաշրջանին (Ք.Ա. 4-Ա. դարերուն) թատրոնի մէջ խմբերգային տարրը կը նուազի եւ գործողութիւնը կը տոնայ աւելի շարժուն նկարագիր: Հելլենիզմի շնորհիւ թատրոնը կը տարածուի առաջաւոր Ասիոյ մէջ. Անտիոք, Տարսոս, Եգիպտոս, Արաւշատ, Տիգրանակիս...

Թատրոնի շէնքերը՝ Ամփիթատրոնները յայտնի են շինութիւններէն, բաղկացած երեք մասերէ՝ օրիսթրոս՝ խողահրապարակ, թէատրոն՝ հանդիսատեսի առթիւնաձեւ նստատեղիքը եւ սքենէ՝ զերասաններու հռոյկերձուսեցողները:

Հայկական թատրոնի առաջին շէնքը, ըստ յունահռոմէական եւ հայ պատմագիրներու, կառուցուած է Ք.Ա. 6-ին Տիգրանակերտի մէջ, տպաշատիւնի տարի անց՝ մայրաքաղաք Արտաշատի մէջ:

Ք.Ա. Ա դարուն Անահիտ կը համարուէր հոյժող դիտաւոր Աստուածուհին, որուն մեծ տաճարը կը գտնուէր Եկեղեցի դաւառի Երեզու աւանը: Անա-





հիախ ծիսակատարութիւնները կ'ուղեկցուէին աղօթքներով, երգերով ու խնձուղներով: Բերքահաւաքին զիդուհիի ոսկեծոյլ արձանը կը պատէր զայս: Ճիւղերով ու ծաղկեղաւակներով, կը պահարկուէին ճերմակ ցուլեր, կը կատարուէին թատերական երկխօսութիւններ:

Անահիտի օսկեծոյլ արձանը Բ.Ա. 34 թուին, քարոյած եւ ոսկին բաժնուած են Հոռոմէացի զօրավար Սնտրոնիոսը եւ իր գինեակիցները:

Քրիստոնէութեան ծագումը կը նկատուի մեր թուարկութեան սկիզբը եւ պատմութեան մէջ այդ փոփոխականութեանը կ'անուանուի միջնադար, իսկ արուեստը՝ «միջնադարեան արուեստ»: Հին աշխարհի րացօթեայ թատրոնները կը փոխադրուէին քրիստոնէական ասանդներով, որոնք ժխտելով հին աշխարհի հետ, կապուած ամէն րան՝ կը պարտադրէին նորը, իրենց ստեղծածը:

Վաղ միջնադարուն, յատուկ թաւարներ համար շէնքեր շէին կառուցեր: Կրօնական ներկայացումները կը կայանային նախ տաճարի ներքը, հետագային՝ փողոցներն ու հրապարակները, ապա փայտաշէն ժամանակակից բնակարաններու վրայ:

Թատրոնի շէնքերուն կառուցումը վերակառուցելու անհրաժեշտ էր պարսիկներին, նախ՝ իտալիոյ, ապա եւրոպական երկիրներու մէջ: Եկեղեցին յաճախ իր խորանը տրամադրած է թատերական ներկայացումներու, որոնք դարձած են Ս. Զատիկի կամ Ս. Մանդեան տօնական ծէսերու բաղկացուցիչ մասը:

Այսպէս՝ ստեղծուած է Պատարագային տրաման, յաւակապէս երկխօսութեան այն ձեւէն, ուր երկու անձերը պատասխան կու տայ պատարագի հոգեւորականի հարցումներուն:

Միջնադարեան Հայաստանի մէջ Պատարագային

յին տրամայի բնարաններ կը գտնան Ս. Մանդեան եւ Ս. Զատիկուան շաբաթը: «Յիմար եւ իմաստուն կոյսեր», «Ոտնուայ», «Վերջին Դատաստան», «Դոմեթիա» եկեղեցական ներկայացումները հայ միջնադարեան թատրոնի պարզ դրսեւորումներն էին հոգեւոր բովանդակութեամբ եւ հոգեւորականներու հովանաւորութեամբ: Հայկական Պատարագային տրամանը երբեք չէ դարձած թատերգութեան ինքնուրոյն սեռ եւ աշխարհիկ թատրոնի տարրերակ:

Այս դարաշրջանի թատրոնը մեծ ազդեցութիւն կը գործէր եկեղեցիներուն արհններն ու հրապարակները: Ինչու ա՞ծ հաւատացեալ հանդիսատեսներուն վրայ, որոնք եւանգելիս մասնակցութեամբ երգով, աղօթքով ու խաչակնքումով կը դառնային գործող անձինք, տուեալ «ներկայացման» մէջ: Պատմութեան մէջ առաջին անգամ կը գործածուէր վարագոյրը:

Առաջին լատինացի պատարագային տրամանները եղած են համառօտ, որոնք հետագային հարստացուած են դործողութեամբ՝ իրենց մէջ տուններով կենցաղային, հանդիսանքային կապակերպական տարրեր եւ իրենց աշխարհիկ բովանդակութեամբ հակադրուած են պատարագի բուն էութեան: Այս պատճառով, 1210ին, Հոռոմի պապը արդիւրած է Պատարագային տրամայի կոտորուածը եկեղեցիներու մէջ եւ ներկայացումները կայացած են եկեղեցիներու առջեւ, Ժողովրդային լեզուով՝ ստանալով աշխարհիկ բնույթ, ոչ միայն հոգեւորականներու, այլ աշխարհիկ մարդոց, նոյնիսկ թափառական ղեռասաններու մասնակցութեամբ:

Աստիճանաբար՝ Պատարագային տրաման կ'անցնէ քաղաքային ասանդմարտութիւններու հա-



մակարդին մէջ, ուր դիտաւ որ զերակաստրները կ'ըլլան արհեստաւորները, որոնք կրօնական պատումներու համար կ'ընտրեն վերամրայժ ոճը. աշխարհիկ պատումներու համար կառակերգական ոճը, իսկ խոշտանգման տեսարաններու համար, քնապաշտական ոճը:

ԺԳ-ԺԵ զարերուն Եւրոպայի մէջ կը ծնի թատերգութեան նոր սեռ, որ կը կոչուի միւրաքյ, «հրաշք»: Միւրաքյը Մարիամ Աստուածածնի կամ որեւէ սուրբի մասին պատմող չափածոյ թատերախաղ էր, որ ունէր քարոզչական բնոյթ եւ կը ծառայէր քրիստոնէական բարոյախօսութեան տարածման. թէ ինչպէս մարդու ճակատագիրը կը տնօրինեն երկնային ուժերը, ոյսոնք կը պատժեն մեղաւորը եւ կը վարձատրեն անմեղները...

Աստիճանաբար, թատերական այդ ոեղին մէջ թափանցած են կենդանոցային տարրեր: Քննադատութիւնը կամ սանձազերծուած ծաղրի օրուան իշխանաւորներու եւ հոգեւորականութեան դէմ, բազմիցս պատճառ դարձած են հարստները:

ԺԴ-ԺԶ զարերուն, Արեւմտեան Եւրոպայի մէջ, յայն տարածում կը գտնէ Միսթերիա (զայա-նախորհուրդ) կոչուող կրօնական թատրոնի սեռը, որ Պատարագային տրամալի շարունակութիւնն էր:

Միսթերիաները կը բեմադրուէին կրօնական տօնակատարութիւններու առիթով՝ եկեղեցական եւ քաղաքային իշխանութեանց որոշմամբ: Եռալարկ բեմահարթակի վերնալարիւ շքեղ դրախտն էր, ուր բուզմած էր Աստուած՝ շրջապատուած սուրբերով ու երկնային հրեշտակներով:

Երկրորդ յարկը կը ներկայացնէ Բեթղեհէմի այն ախուք, ուր ծնած է Յիսուս. իսկ վարի յարկը դժոխքն էր, ուր կրուկի շուրջ կը վիտային Մաղայէին ու իր սպասաւոր ծառաները: Եկեղեցական դատարանին կողմէ զառապարտածները այդ յարկին մէջ կ'ենթարկուէին անասելի խոշտանդումներու, անոնց ապիտոյում ճիշդն ու կանչերը սարգափի մէջ կը պահէին հրադարտելը հաւաքւած հանդիսատեսները:

Կենդանոցային եւ կատակերգական բովանդակութեամբ գրուողները հետադային բուրջ պատճառ ոլիսի դառնային կրօնական եւ աշխարհիկ միստումներու ներքին պաշարին:

ԺԵ-ԺԶ զարերուն, եւրոպական բարեփո-

խումբներու շարժումը կը պահանջէր Աստուծոյ հետ անձնապէս հաղորդակցելու սկզբունքը։ Երբ, որ այդ սկզբունքին հետեւած էր Գրիգոր Նարեկացի՝ վերոյիշեալ թուականէն շուրջ վեց հարիւր տարի տուաւ։

Յառաջդիմական այս շարժման ընթացքին կը ծնի Մորալիթէն, որ ազատ ըլլալով եկեղեցական յայտարարէն, ձեռք կը բերէ իր քարոյական սկզբունքները։ Թատերդուլիւններու մէջ ռախումը միշտ կը կայանար ըստ իր, չարի, ապա հոգիի եւ մարմնի միջեւ։ Մորալիթէն կը դատաւարէր տրամաբան եւ կը փառարանէր պարկեշտութիւնը։

Ժողովրդական խաղերէն ու ծէսերէն կը ծնի Պարսը, որ իւրաքանչիւր երկրի մէջ կը ստանայ իւրօրինակ ազդեցիկ զուսմանը։ Պարսը ձեւաւորուած է միաթերիային եւ մորալիթէնի փառաշին։

Հանդէս գալով կերպար-կիմակներով, Պարսը կը ծաղրէր անբարոյ հոգեւորականութիւնը, կաշառակեր պաշտօնեաները, թեթեւամիտ, պարծենկոտ ուսնայներն ու այլք...

Պարսի ներկայացումները յաղեցած էին զուսման ծնկաւորով, անժայել արտայայտութիւններով, տնայալիս իրավիճակներով...

Իտալիոյ մէջ Պարսը դարձած է նշանաւոր «Քոմեմիա Տէյյ Ալթէ» թատրոնի տաղձը։

Եւրոպայի հոգեւոր ուսումնարաններու մէջ կը ստեղծուի թատերադրութեան նոր սեւ մը, որ կը կոչուի Դպրոցական տրամա։ Շուտով ան կը տարածուի քրիստոնեայ ժողովուրդներու հոգեւոր դպրոցներու մէջ եւ կը խաղցուի տարբեր լեզուներով։

Հայ իրականութեան մէջ դպրոցական տրաման երեւան եկած է ժիզդարուն, կրեչով կրօնականի, բարոյախօսական, փութագրական, պատմական բովանդակութիւն։ Հայ առաջին Դպրոցական տրաման որ նուիրուած էր Ս. Հռիփսիմէի նահատակութեան, խաղցուած է Ռաքանիոյ Հայ կաթողիկէ դպրոցին մէջ 1668ին, իսկ Վենետիկի Հայոց դպրոցական թատրոնը հիմնուած է 1730ին, Միսիթարեանները կրած, թարգմանած եւ բնագործ են շուրջ 250 թատերախաղեր։ Միջնադարեան Եւրոպայի թատրոններուն մէջ յայտնուած Մարիսմ Աստուածածիւր տիկնիկի տեսքով կը կոչուէր Մարիոնէթ եւ կը կառավարուէր վերէն,


թելերու կամ մեքաղոյարելու միջոցով։ Հնաազային, Ս. Մարիամի թեման կը հեռանայ արկնիկային թատրոնէն, բայց «Մարիոնէթ» անունն ումը կը մնայ որպէս թելերով կառավարուող Տիկնիկային թատրոնի սեւ։

Արեւելացի դրամորդ դարերու խաղերուն ընթացքին վրայ, օրը օրին մաշող ծէսերու եւ աւանդութիւններու կողքին, ցայսօր, շարունակ կը հանդիպին եկեղեցին եւ թատրոնը, որոնք հիւսուքն այդպիսի ունին մարդկային հոգիի, անոր չրացալայտուած խորհուրդներուն հետ։

ԼԻՊԵՐԻԹ ԱՆԸՔԵԼԵԱՆ

Լուսանկարներ՝ Մաքս Սվասիւեանի





ԲԱԳԻՆԻ վաստակաշատ խմբագիրը, Պօղոս Սնապեան մեզի տրամադրած է իր հին էջերէն մին, բանաստեղծ Ջահրատի նուիրուած, ուր կ'անդրադառնայ բանաստեղծի ԲԱՌԻ ԵՐԿԻՆՔ հատորին: Գրախօսականի առաջին մասը հետաքրքրական է անոր համար որ ներկայիս եւս նորարարական արտայայտութիւններ կան, որոնք նպաստի կը վերածուին եթէ ազգային մշակոյթը շարունակէ մընալ սնուցիչ ենթահող:

«ԲԱՌԻ ԵՐԿԻՆՔ»

Մէն ապանդէն ետք, Հանրապետական Դուրքիւն մէջ ապրող մեր հատուածը ունեցաւ թէ՛ պարոց, թէ՛ մամուլ եւ թէ՛ գրականութիւն, բայց Պոլսոյ մէջ յայտնաբերած որակական մեր նախկին արժանիքներուն հետ համեմատելի եզրեր չկրցան ի յայտ բերել զրուցներէն Եւ ոչ մէկը:

Պոլսոյ մէջ ձեւաւորուած ու կառարելութեան մօտեցած մեր Մեծագրանչին՝ Զարդարեանի, Մեծարենցի, Ինտրուլի, Միամանթոյի, Վարուժանի ու Օշականի լեզուին հետ կարծես մէկ անդամէն իր պարտին կապը կտրած լեզու մը սկսաւ կիրարկուիլ նոյն քաղաքի Հանրապետական շրջանի մամուլին մէջ, եւ գրականութիւնը, լեզուին գու-

յունիսի տրամադրեց մեծ անկում մը՝ տնտեսության բոլոր սեւերու պարագային։

Յաւույի այս կայութիւնը շարունակուեցաւ մինչեւ Համաշխարհային Երկրորդ պատերազմի փախճանը։

Այդ թուականներուն, պատերազմին տնտեսութեամբ տիրած եւ սարսափի նոյն միջնադարին մէջ նոխկիւն արժէքները նոր փորձաքարերու դարկած հարապակի քիչ մը անխիտանական զրոյններուն հետեւողութեամբ, Պոլսոյ նոր սեյունդը, իր կարգին, ոկսաւ հետեւիլ Արեւմուտքին մէջ արդէն որոշ հետաւորութիւն նուաճած գրական նորութիւններուն, արձագանդելով անոնց թէ՛ ձեւով եւ թէ՛ խորքով։ Աւագիւղին ու առարկային այնքան ահզ արտայայտ կատարուած այդ առաջին փորձերուն մէջ, սոյն աստիճան անտեսուեցան դարաւոր փորձով հաստատուած գրականութեան կեցուցիչ տարրերը՝ յեզուն, յոյզը, ներքին կրակը, մաքին բիւրեղները, որ զժողովրդի կարիքի ըլլալ կուտակուած ամբողջէն հատոր մը անջատել կամ մատնանշել առանձին յաջողութիւններ։

Այս խարխափումներէն 15 տարի ետք, վաթսունական թուականներուն էր, որ խարխափողներէն ոմանք դասին իրենց ճամբան եւ յաջողեցան գրական հրապարակին պարտադրել իրենց ինքնութիւնը, ուղարկաւ թարմութեամբ շարք մը պորձեր յոյս ընծայելով։

Մեր ծանօթութեան սահմաններուն մէջ, Ջարեհ Խրախունիի հետ՝ Ջահրատ եղաւ այդ բախտաւորներէն մէկը։

Կենսոյ դրական իտի մը համաձայն, Ջահրատի առաջին բանաստեղծութիւնը երեւցած է «Ժամանակ» օրաթերթի մէջ՝ 1940ին, եւ այդ թուականէն «Կոնալ» օրաթերթիցած է պոլսահայ մամուլին, ստորագրելով արձակ էջեր եւ մանաւանդ բանաստեղծութիւններ։

«Բարի երկինք»ը հրատարակող բանաստեղծին երրորդ հաստին է. որ յոյս տեսաւ 1970ին եւ կը ներկայացնէ հեղինակին վերջին տարիներու ստեղծագործութիւններէն կարճ եւ երկարաշունչ չորս յօդուածներ։

Մարդոց սովորական սէրերուն, գրադուծներուն, գրկանքներուն եւ առանց տրիշած յուզումներուն զգալի շարքով մը ահզ արտած է, պիտի լսէինք տուրք տրուած է «Բարի երկինք» հատո-

րին մէջ, բայց շխորացուած այդ ապրումները, անհատականութեամբ չօժտուած զոյներն ու պտակներն՝ իրենց ստուերին ասկ չեն խեղդած Ջահրատի արժանիքները, որոնք կ'առանձնանան ու ակնբախ կը դառնան ամէն անգամ, որ բանաստեղծը իր տարերքին համապատասխան նիւթի մը մօտենայ, երբ բախի այսօրուան մարդը միւս ժամանակաշրջաններու մարդերէն անջատող տաղանակներուն, մաստանջութիւններուն, թռիչքներուն ու անկումներուն։

«Բարի երկինք» հատորին մէջ՝ իմաստ, յուզում, շարժում, մէկ բառով՝ բանաստեղծութիւն կը բովանդակեն սոյն կտորները իրապէս, որոնք իրենց թեմա ունին ելեկտրոնիք մեքենան, հայ-էիշը յետոյ, ասունց կարողութիւնները մէկ կողմէ, անկարողութիւնները՝ միւս կողմէ, տիեզերական թռիչքները դեռ, մայր հողին վերադառնալու պայակը յետոյ, մարդոց ստեղծած աշխարհը, այդ աշխարհին ստիպողութիւններուն եւ մարդուն անհատական աննշերուն յոխումները, եւ այլն։

«Բարի երկինք» հատորին մէջ այս նիւթերը չօչափող Ջահրատի բոլոր բանաստեղծութիւնները հետաքրքրական են եւ ընդգծելի են յատկապէս անոնք, որոնք խորագրուած են «Ջարմանահ-րաշ», «Այսպէս, ամէն առաւօտ», «Լարախուղաց», «Իրը թէ», «Պարոն Այնըլթալին» եւ «Մեսրուպարոյ» խորագրերով։

Ինչպէս ըսինք, Ջահրատ կը հետեւի նոր բանաստեղծութեան յետպատերազմեան դպրոցին, կը դրէ առանց չափի, կէտադրութեան, առանց յանգի, բայց խորքին մէջ իր սեռեղը կ'առնէ մայր երակէն ու լեզուով, ոճով թէ աշխարհին վրայ բաղուած իր ակնարկով՝ առաւելադրին չափով մը պարտական է հայ գրականութեան, հայ մշակութիւն։

«Բարի երկինք» հատորին յաւադոյն բանաստեղծութիւնները՝ երեւոյթներուն էական գիծերը սրացող եւ գանոնք տնհատականութեամբ օժտող բանաստեղծի մը մասին վկայող ուղարկաւ իրագործումներ են։

Պ. ՄԱՍՊԵՆԸ

ԲԱՐԻ ԵՐԿԻՆՔ

Այդպէս կ'ուզես քանի որ - բնաւ - այդպէս թող ըլլայ -

Ըսի - կեցուածք շունի՞ս դուն -

Չարմացաւ - կեցուածքն ի՞նչ է

Ես պատկուածք ունիմ լոկ

Պուտ մը երկինք որ գտնեմ

Տակը կ'անցնիմ կը պատկիս

Կ'երազեմ երկինքիս չափ -

- Ի՞նչ քեզի ես իրեն

Բարի երկինք մաղթեցի

ԱՅՍՊԵՍ ԱՍԷՆ ԱՌԱՌՈՏ

Այսպէս ամէն առաւօտ

Հրաժեշտ կ'առնեմ կը բաժնուիմ ես ինձմէ

Տանս դուռը երբ կը փակեմ ետեւէս

Գիտեմ թէ

Եսս ներսն է - եւ ամէն քայլ զիս կ'անջատէ իմ եսէս

Այսպէս ամէն առաւօտ

Հրաժեշտ կ'առնեմ կը բաժնուիմ ես ինձմէ -

Կը իսառնուիմ ուրիշներով շինուած հսկայ ծովուն մէջ

Ու կը տեսնեմ - պատուհանին ետեւէն

Եսս կեցեր զիս կը դիտէ մտաւանջ

Իսկ ես ամէն առաւօտ

Կ'երթամ ձուլուիլ ուրիշներով շինուած հսկայ ծովուն մէջ

Մինչդեռ եսս պատն երեսին նստեր կու լսայ ետեւէս -

Հրաժեշտ կ'առնեմ կը բաժնուիմ ես ինձմէ -

Առաւօտուն - ես մանաւանդ առաւօտուն դժբախտ եմ

Ն Ա Մ Ի Կ Ա Ն Ի

Մերելի «Բագին»

Աթենք, 1 Փետրուար 2008

Պրուֆեսոր մայր շարժառիթն է 2005ի Անպանմանը (Բագին», թ. 3) լոյս տեսած վարդան Մատթէոսեանի փորձը՝ «Վերադարձի Առաջապիւր», յատկապէս իր այն հատուածով՝ որ կը յղուի նախորդ թիւի դէպք (Մարտ 2005) հրատարակուած իմ «Միփուփուհայր եւ իր «Մայրենի» Լեզուն» սեմինարային գեկոյցիս:

Ի դէպ՝ փոքր յապաղումս ունի իր պատճառը. «Բագին»ի լոյս տեսած թիւերը ձեռք անցընելու համար՝ պէտք հղաւ որ ոպտեմ լիլոսնանէն անցքիս, վերջերս... Հակառակ բաժանորդադրման յաջորդական գրումներուս՝ «Բագին»ը կը շարունակէ չհասնել... հեռաւոր Աթենք:

Կը յիշէք, Վ. Մատթէոսեանը կը մեկնի դանազան մշակոյթներու մէջ առկայ «Թաւերժական Վերադարձի» միջոցէն: Ընթերցողները պիտի յղեմ ուղղակի տունս թիւի համապատասխան էջերուն, առանց յաւելեալ մանրամասնումներու, առանց ամփոփումներու կամ հատուածային մէջբերումներու փորձութեան: Անհրաժեշտ նուազագոյն նշուեցիքը հոս՝ այն է, որ փորձագիրը, օրինակներ վերցնելով հայ մշակութային իրականութենէն, կը բացայայտէ անբովանդակութիւնը «դուրս»էն դէպի «հայեցիութեան կեդրոն» վերադարձի միջանկան պատկերացման, տնոր ոչ-համապատասխանութիւնը իրականութեան, տնոր պաղաւտաբախտական առասպելի ընդլայնումը, պիտի կրնայիք բոնի Օրինակները, ինչի կը թուի, ըստ ամենայնի յարկը են փորձագիրին ներկայացուցած գրոյթներուն, ախտանշումները՝ շահեկան: Այսինքն, առիթին համար՝ ձեր ընթերցողներէն պիտի խնդրեմ վերադառնալ Մատթէոսեանի գրութեան, զայն կարդալու կամ վերյիշելու համար իր սեփական համագրութեան՝ contexte-ին մէջ:

Իմ համոզումով, փորձին երկրորդ մասը, այն, որ կը վերաբերի իր՝ Վ. Մատթէոսեանի, ինչպէս եւ Մարկ Նշանեանի, «օտարութենէ» դէպի հայ մշակոյթ «վերադարձած» ըլլալուն՝ իմ փորձիս մէջ ըրած աննարկիս, պիտի շահէր՝ ճիշդ ահաւասիկ՝ եթէ նկատի ունենար գեկոյցիս համագրութիւնը, փոխանակ տոանձնացնելու մէկ-երկու մատենանշում: Թերեւս այն առին Վ. Մ. ինքնաբերաբար խուսափէր հոն նշուած «վերադարձը ընկալելէ իրր սոսկ կենսագրական-ժամանակագրական տուեալ, եւ «վերադարձումը» ընթերցելէ իրր վերադարձ՝ դէպի հայեցիութեան ինչ որ «կեդրոն» մը:

Կը գգու շանամ պարսկերաթերթիդ նամակների էջերը շահագործելէ՝ այս նամակս... երկրորդ փորձագրութեան մը վերածելով: Պարզապէս կ'ուզեմ ընթերցողներու (անոնցմէ՝ հետաքրքրուողները) յղել այս անգամ Մարտի թիւիդ իմ գրութիւններու, անոնց համագրութեան, Ընկ-

յով միայն սա արագ մատնանշումները։

ա. Զեկույցի առաջադրանքների մեջ, հայ գրողականության առաջնական դէմքերը, այլ խոսքով՝ Վ. Մ. Ի. արդարօրէն ժխտած «կեդրոն»-ին «սեփականատէրերը», կը ներկայանան մասաւոր մշակույթի շնչօրէն նախնական, ազգատ գործակիցով մը (coefficient)։ Դէպի այ կեդրոնը վերադարձ մը պիտի արժէ... ողջունելի ըլլար՝ նոյն գեկույցի պատմա-րանութեան մէջ։

բ. Խօսելով միշտ՝ գեկույցի մասին, «ծագումով հայ», ստեղծարար մշակութիւններու մասնակցող դէմքեր (Մարտիան, Նահնուր) հոն առիթ տուած են վերլուծական մատնանշումներու, որոնք կ'առնչուին առաւելաբար՝ իրենց անհատական-հոգեբանական պատմութեան, բոլորովին հետեւ՝ «ներս-դուրս», «կեդրոն-եզերք» կարճատես սքեմաներէ, որոնք բնորոշ են Վ. Մ. Ի. մերժած հայապահպանման չափանիշներու գործածութեան։

գ. Ընդդէմ, որ «կորսուած-վերագտնուած», «վերագործած» եզրերը՝ բառացիօրէն ու հպանցիկ՝ պարծանուած են յատկապէս Վ. Մ. Ի. հեղինակների առթիւ։ Մանրթաղրութեան մը սահմանները, իրենց՝ ինչպէս եւ կոտորան Զարեանի պարագային, դիւ հարկադրած են բաւարարուելու կենսոգրական շօշափելի տուեալներու նշումով՝ ի վնաս իրենց վաստակներու ընդլիկման, որոնք հակառակ՝ որ ամէն բան է, բացի վերադարձէ՝ դէպի ինչ որ «հայեցիութեան կեդրոն» մը։

դ. Ուրեմն, հարց կրնայ տրուել՝ ի՞նչ «վերագտնուած» ու ի՞նչ «վերադարձ»։ Պատասխանը շատ հեռու չէ. տրդեօք կորուսում-վերագտնումէ, մեկնում-վերադարձէ տարբեր բան կը հատուտեն, սակայն շատ աւելի մանրամասնօրէն ու փաստարկօրէն, ղեկահաստեմնելու Ն. Մարտիանի մը մասին, իրմէ կատարուած մէջբերումները... Նախապիւղքի ծնունդ Ստրաֆեան մը, Ռբրուելի մը, եթէ պահ մը իրենց հաշուին եւս հարկադրուինք դիմելու համաօտումներու՝ արդեօք նուա՞յ «կորսուած-վերագտնուած», «մեկնած-վերադարձած» են, քան վերը նշուած երկուքը... Կամ՝ «Հայու շրջագիծէն» ներս, Պաղեստին ու Լիբանան ծնած կամ սնած Վահէ Սչախան մը, Պրոտեան մը՝ նուա՞յ «կորսուած-վերագտնուած» են իրենց ո՞ղջ վաստակով։ Ասուք արդէն, հայ նոր ու ժամանակակից գրականութեան այս դէմքերը իրենք, «կորսուած-վերագտնուած», «մեկնած-վերագործած» պաշտօններ չե՞ն... Եւ որ գեկույցի նշած վերադարձն ու վերագտնումը, ռմանց պարագային բառացի-կենսագրական յիշատակումով, այլոց համար՝ հիմնաւորուած վերլուծական նշումներով, հեռու՝ դէպի «հայապահպանման կեդրոն» որեւէ վերադարձի առնչուելէ, հակառակն իսկ չե՞ն ատոր։

ե. Նոր որակի ստեղծման նախապայման որս պրոցեսը՝ կորուսել-վերագտնուելի, մեկնել-վերադառնալ, որ Սփիւռքի գրողներու ախ-

պայման պատկերաշարիտ արժեքափն իսկ է (որովհետեւ հոն փորձառածը, կը ճշգրտի արդէն, «դրոշմ» մըն է),- իբր արտաքին հազուատ միայն ունի, սմանց պարագային, նաեւ կենսադրական տարրեր: Ասորք ու-կայն պէտք չէր մղէին անտեսելու պրոպեան բուն միջոց կը, ներանձ-նական «մեկնում-մերադարձը» իր արտաշխարհագրական, արտա-կենսադրական եւ համաժամային (synchrone) ...: Մտեզծագործա-կանութիւնը հոմանիշ ունեցող այս պրոպեան բացայայտումը, կը հաստատ, բաւական կեդրոնական տեղ կը դրաւ փորձի տրամախո-հութեան մէջ, եւ յաւարտը է խուսափելու համար ամէն «ընթեր-ցում»է, որ պիտ պիտի ներկայացնէր իմ դիրքերու - կը կարծեմ - տրա-մադծօրէն հակառակ դիրքերու վրայ...:

Անկասկած, դիւ շտու բնութի կայալ մասին. եւ ճիշդ ասոր համար ալ կ'ընդհանում հոս, յարգելով ընթերցողներու համբերութիւնը: Բա-նափէ՛՛՛ յարուցելու փափաքէ շեն ծնած այս տողերը. եւ միաքէս շեմ անցնելը copyright պահանջել մէկ գրութեանս շուրջ հղած մեկնարա-նութիւններուն վրայ: Ինչպէս շեմ ձգաիր համոզել ոեւէ մէկը՝ հրաժա-րելու իր տեսակէտներէն: Ո՛ւ հաւանօրէն աւելի ընական ալ է, որ մար-դիկ պահեն իրենց ընկալելու ոճն ու մտաւոր սովորութիւնները: Թո՛ղ ըսեմ միայն՝ որ եթէ ես բլրայի Բիւրճեանի նշեալ ղեկային ընթեր-ցողը, ա՛յս կերպ պիտի կարդայի զայն, ո՛չ ուրիշ...:

Վերադառնալով խմբագրական խոհանոցի աւելի խոնարհ հար-ցերու, ընկերաբար ձեռ ուղարկութեան պիտի յանձնեմ, որ նշեալ փոր-ձիս վերջին ծանօթագրութիւնները (ծնթգր.ներ 16էն 20), յարեալա-տարար ոչ հական, դո՛ւ զացած էին պատահական պոչատումի մը: Ապա՝ ընթերցողները թերեւ աւելի տրամադրուէին կարդալու փոր-ձիս՝ եթէ մայր գրութիւն եւ ծանօթագրութիւններ էջադրուէին քիչ մը ներդաշնակ՝ իբր մասերու դասաւորում եւ տառադրութիւն:

Բարեկամական զգացումներով՝
Յարութիւն Բիւրճեան





ՀԱՅԱՍՏԱՆ
Հայաստան

ՏԱՐԲԵՐ
ԳԵՂԱՆԿԱՐԻԶ ՄԸ՝

Արա
Ազատ

Արա Ազատը ստեղծագործական լուրջությամբ է ապաստվում իր արվեստին։ Երբեմն այդ արվեստն ընկալվում է որպես խոսքի փոխարինություն։ Այնուամենայնիվ, նա չի հեղափոխվում, նա շարունակում է իր արվեստը, որի մեջ կ'ընդգործակեն նաև նոր ստեղծագործողները։ Իհնձ վարակեցված երիտասարդները, բայց նույնպես չընկալող իրենց ինքնությունը և ինքնությունը պահպանում են իրենց արվեստի պատմությունը և մեծությամբ չի տար մեծերի պատմությունը մեջ։

Արա Ազատ ինքնությունը նախանձախնդիր է ինքնությունը պահպանելու համար։ Ինքնությունը պահպանելու համար նա չի հեղափոխվում, նա շարունակում է իր արվեստը, որի մեջ կ'ընդգործակեն նաև նոր ստեղծագործողները։ Իհնձ վարակեցված երիտասարդները, բայց նույնպես չընկալող իրենց ինքնությունը և ինքնությունը պահպանում են իրենց արվեստի պատմությունը և մեծությամբ չի տար մեծերի պատմությունը մեջ։

Դժբախտի դեպքում նա պարտադրանք է առնում, մեր գրողը փորձ մեր էր պարզաբանելու և ըմբռնելու համար արվեստի աշխարհին մեջ տար-

բերությունը մշակելու արտեստագետի եղանակով ու ոճով։ Պոստըն հասարակության իայց 1, իրականում ծնած և հասակ առած այս հայ գեղանկարիչը կը շարունակե իր երրեակ պատկանելիությունը կրել, անկե չի խուսափիր։

«Գործերս կը գտնուին բազմաթիվ ցուցասրահներում մեջ. ինչպես Նիմո Ազգի, Նիլ Երրու և Պեյրու, Նուհի Արթի՝ Մովսես Հերկելյանի, Սեյրանի, Ժուլիեի և Սիմեոնի»։

Արա Ազատ սկսած է ստեղծագործել, ոչ միայն գծել, իր փայտակամ տարիներին։ Ցատկանշական ընդգծում մը։

«Աշակերտական շրջանիս կը օժեղի, Սիմեոնի Նահանգներ մեկնում էս ետք ըմբռնեցի որ այդ շրջանիս իսկ գեղարվեստ կ'ընեի»։

Հասկնալի էր որ Արա Ազատ, վաղ շրջանին իսկ ըմբռնած կառուցարարները որոնք դրան էր ինքզինը։

Գեղանկարչությունը տեսողական արվեստ է։ Տեսածը վերաբերադրելու փորձին վրայ ի՞նչ պետք է գումարուի որ գործը պահանջ գեղարվեստական։

«Ամեն մասագող արվեստագետ մտադիր չէ, ամեն երգիչ արվեստագետ երգիչ չէ, այդպես է մանկ միտ արվեստագետ պարագային։ Նուագողին, երգիչին կարիքի վրայ տարր մը պետք է անելու, այդ լատենայ տարրն է

Դ. Սեյրան, 1961
Հ. Սեյրան, 1961



5

արուեստը: Իմ գործերում պարագային
աչա յառելեալը ես եմ, իմ աշխար-
հովս եւ ապրումներով. գիտակցական
եւ ենթագիտակցական. եզակի: Այսինքն,
գործիս մէջ կայ իմ սէրերուս եւ զգացում-
ներուս արտաձգումը. projection-ը,
կրկնութիւնը չեղող դրոշմը, կան իմ
խոսվյալներս, խնդիրներս: Էթէ տագնապ
եւ խնդիր չունենամ, չեմ նկարեր: Ուսկ
այդ խնդիրը, որ ստեղծագործական
ճիգին գրգիռն է, աւարկայ մը չէ, ցիւք
մը չէ, անմիջականօրէն շօշափելի չէ:
Ան երեսան կ'եղէ երբ գործը կ'աւարտի:
Ռոտաը խնդիրը արթնցնողի, արտաբա-
նողի, տեսանելի եւ շօշափելի դարձնողի
դեր կը կատարէ: Ծնթագիտակցական
յոյզեր ելք կը գտնեն եւ կը մասնակ-
ցին աշխարհը կառուցելու ճիգիս»:

Իհետակ մը երկունք, ծնունդ: Թէ
ի՞նչ նապ կ'որոյս ըլլաւ ստեղծագործո-
ղին եւ ստեղծուածին միջեւ, անոնք
կը սնան մէ՞կ թէ երկու կ'ըլլան, երբ

գործը կ'աւարտի, Արա Ազատ կը խօսի.

«Ի՞նչ աշխատիմ անմիջականութեամբ. ժաթթով, առանց տրամաբանութեան միջամտութեան, առանց ըմտնելու, ստեղծագործութիւնը կը հետեւի իր իրադատու հոլովոյթին: Ջգացումներս կը դնեմ գործիս մէջ եւ աւարտած գործը կը դրսևորէ զգացումներս: Կը մնամ գործիս մէջ: Դործը ոսպնեակի դեր կը կատարէ, դրսևորուած տուեալները կը մնծցնէ. ըմթեմելի կը դարձնէ, ժամանակ կու տամ ես ինծի, որաչա-գի. երբ գործը աւարտած է, անկէ սորվիմ, ինքզինքս տեսնեմ: Արդէն, երբ կ'աշխատիմ, կ'անջատուիմ մերկայէն, շըր-ջապատէն: Գործը ինծի ցոյց կու տայ թէ ո՞ր աշխարհին մէջ էի, ի՞նչ կը զգաի եւ կը մտածէի այն պահուն երբ տեղի կ'ունենար ստեղծագործական աշխա-տանքը եւ արաշխումը»:

Արա Ազատ Բաշ մարդ է եւ յնական է որ ինք ալ, շտաւերու պէս, ապրած



6

5. Beirut Studio Floor
6. 1st floor in Armenia



7

ընթաց ափիւղեաբանութիւն լատով հայրենիքի վտործը, որ սոսկ գրեթէ անհասկանալի վտործէն տարբեր է:

«Նկար գծած եմ ճաշարանի մը մէջ, Հայաստան: Այս ալ գարնազած էի: Ռեքի վրձիններս եւ գծեցի: Իրրեք չլի մտածած որ Հայաստան պիտի երթայի եւ ճաշարանի մէջ նկար գծէի: Տարօրինակ թող չթուի: Զնայներ կը լսեմ գծած պահուող, ձայներ որոնք արձագանգներն են այն բոլոր քաներուն գործը լսած էի Հայաստանի մասին. կեանքիս ընթացքին, եւ անոնք նկարին մէջն են, բերուած եսիս հետ»:

Ինչ խօսքով, գեղանկարիչը չ'անջատուիր գործէն. ան քիչ մը ինք է: Այս փորձը օրինակ մըն էր իր անմիջականութեամբ ստեղծագործելու ոճին: Հետաքրքրական է այս տարբերությունը մշակող եւ անմիջականութեամբ գործող արուեստագէտի որոնման ընթացքը:

«Ես ալ ունեցած եմ շրջաններ, զորս կրնամ բանաձեւել ընդունուած բացատրութիւններով: Վտեղծագործական առաջին շրջաններուս տիրույթին վերացականութիւնն էր. կը գծէի, կ'աշխատէի, չէի գիտեր որ այդ որսերուն մէջ արուեստ էի: Ապա անցած եմ կառուցողական հանգրուան, զոր այդպէս կը կոչեմ, եւ հարկ է որ բացատրեմ: Չեմ աշխատիր վրձինով:

Կ'աշխատիմ քանդակագործի պէս: Զնայի, գոյները, յարաբերութիւնները եւ ձեռքերը կը կազմեն գործը: Անպարտ լարում մը՝ փնտռելու»:

Այդ փնտռելու թարմը Արա Ազատի գործերուն մէջ կ'արտայայտուի շէնքերով, դիմանկարներով. իւրաներէն եւ այլ, ինչ որ ենթադրել կու տայ որ մարդը առանցքային ճշմանկարիւն ունի. մարդը՝ որուն տիպարը ինք է, գոր կը պահէ:

«Դիմանկարը փոփոխութիւն է եւ արուեստի գործը կը դառնար ինչ որ դիմակի տակ է. ինչ որ րաց աչքով չենք տեսներ: Կը փնտռեմ ղեմքեր, որոնք անձներու կը պատկանին, բայց անոնց պատկերման ընթացքին կը փորձեմ հասնիլ թիրախներու, որոնք տեսնուածն տարբեր բան կ'ըսեն: Պարզ վեմքը իմաստ չունի: Պեմքերը, որոնք ընթացիկ կեցակով բնական չեն, կ'արտայայտեն ներաշխարհի պատկերներ, եզակի, տարբեր: Նկարներս ղեմքեր են, բայց ոչ տեսանելի կրկնող, եւ ոչ ալ կրկնութիւն, մարդու եզակիութեամբ արտայայտութիւն են»:

Այս իր տարբերութիւնը ապրող եւ մշակող արուեստագէտը ընդունուած յրաստարարումներու մէջ տեղադրելու եւ ըստ այնմ ճապարհով փորձողը: Օրինակ, ո՞ր դարձիւն կրնայ պատկանիլ Արա Ազատ:



8



9

7. Blank wall drawing three

8. Two from wall, Berlin, 2002

9. Towards the top of 1st drawing in previous



10



11

- | | |
|-------------------------------|----------------------------|
| 10. Beirut | 15. Blue arm |
| 11. Blue T | 16. Posted dancer portrait |
| 12. Orthodox Academy of Crete | 17. Red portrait |
| 13. Beirut memory | 18. Southborough painting |
| 14. Adam's apple | |




12




13



15



16



17



18



19

19. Camouflaged crowd
20. Seper
21. Polar

«Երկու տեսակ արուեստագետներ կան: Մարդկային, հետևաբար մանր արուեստի ամենայն կը պատկանի, հուսաբական ժառանգություն է: Արուեստագետները կան որոնք անցեալին կը մային, անցեալը կը շարունակեն, արդիներն են այդ անցեալին: Անոնք կը պահեն, բայց չեն հարստացներ: Միայն արուեստագետները անցեալը չեն շարունակեր, մտին հետամուտ են եւ յաւելեալ հարստութիւն կը բերեն: Այս ըմբռնումով է որ անցեալը զիս չի հետաքրքրեր: Գիտե՞ք, թանգարանները եղած են անցեալին համար, անոնք ցոյց կու տան ինչ որ եղած է եւ կայ. միաժամանակ կ'ընեն, ցոյց կու տան ինչ որ պետք չէ կրկնել: Աս կ'աշխատին երկրորդի հասկացողութեամբ, այսինքն, չկրկնելու, հարադասելու»:

Այս Լեզաւի կատարած ստեղծութիւնները հետ գրեթէ քննախօսական է, մոլորիկ խորհրդաւոր: Այսինքն, ստեղծութիւն գործը ունի իր կեանքը, որ քաղաքացի չէ, ունի իր հոյակայութիւնը:

«Պատկեր մը կրնայ դադրիւ անոն մը կրել, յատուկ իմաստ մը ունենալ, վերածուիլ ինքնատիպ ինքնիրականացման եւ ընդգրկուիլ ինքնութեան ըմբռնքի մը մէջ եւ ապա վերադարձաւ նկարչութեան»:

Ինքնատիպ փորձարկում մը ընթացքի մէջ է, ստեղծագործական շաղ մը:

«Օրինակ: Աշխատանքի մ'մէջ եմ: Կ'ընտրեմ կտաւ մը, գեղանկար մը, անոր վրայ կ'անցնեմ անոն եւ հասցէ, թեոք կան մօտ ունի մը: Կտաւը, առանց


ծրարկելու կը տեսնիմ մամակաւորութիւն: Իրապէս կ'երթամ մամակաւորութիւն: Իտալի, առանց փաթեկի, կը դրկեմ մախապէս գրութեան հասցէին: Նախապես պաշտօնեաները կը զարմանան, կը կշռեն, դրոշմաթուղթ կը փակցնեն: Գեղանկարին յիմնութիւնը, հարբուսը կը սկսի: Գործին վրայ որոնք դրոշմաթուղթը գոյն եւ նկարագիր կու տայ գործին: Այս գործողութիւնները կը փոխեն գործին պատկերասցումը: Պէտք չէ զարմանալ, մամակաւորութիւնը պաշտօնեաները կը զննարարեն վաւերութիւնը, ուշադրութեամբ կը վերաբերին եւ կտաւը չի ճնշուիր միմեծ եւ հաճի իր հասցէին: Անոն տեղ եւ ամէն բանի համար վաւերութիւնը գիմ չէ, վերաբերում է: Վաւերութիւնը միայն անցնալ չէ, ան կայ ման մեր օրերուն»:

Փորձարկութեան մը ամենատարած իտեպիստ, արուեստագետը կ'ապրի իր ճեղքանկայնութիւնը եւ անոնց համար, որոնք ձեռով մը իր անցած մամբուն արժեւորումը կը բերեն, կ'իմաստաւորեն ներկան եւ զայիցը:

«Գործերու ցրտած են տասներկու երկիրներ: Գիտեմ հասցէները: Պիտի ուզէի օր մը զանոնք միատեղ տեսնել, իմ հաճոյքիս համար. ոչ անպայման ցուցադրելու: Ունիմ արձանի մը ծրագիրը եւ ամերիկեան համալսարանական հիմնարկը, Էմ.Ա.Կ.Ֆի., Միասնադասեցման հասցի Արհեստագիտական հոշակաւոր կանառը կ'ուզէ մասնակցիլ ամերիկեացործման, քանի որ այդ կանառն ալ մնալ ծրագիր ունի: Երագիրը կը



20



21



22



23



24



25

մախառնեռուի Յեղասպանության
Հարիւրամեակին համար, ամ պիտի
ըլլայ կոթողական գործ մը»։

Ոչ-սովորական ստեղծագործող
մըն է Արա Ազատ, դժուար է հա-
կնալ թե ի՞նչ կը փնտռէ, ո՞ր կ'ուզէ
հասնիլ, երբ իր ինքնուրոյն խաղին մէջ
չենք մտնել։ Հասարակ տեղիք բացառ-
ութեամբ մը կրնանք խորհիլ որ ժա-
մանակը պիտի սփռէ։ Ի հարկէ, նման
խառնուածք ունեցողը դժուար պիտի
պատշաճէր կարգի, կանոնի, գնահատ-
ման դասական ձեւերու, ուսուցման
աստիճանական եղանակի մը։ Չէ ուզած
Նիքանան մնայ, ճեղ զգացած է, կը
սիրէ Ամերիկան ուր պատճէջներ չկան։

«Յամախած եմ արուեստի այն
դպրոցը որ չ'ըսէր թէ արուեստագէտ
ըլլալու համար ի՞նչ պէտք է ընել։
Հիմնականը արուեստագէտն է։ Դըպ-
րոցը կալ որ կ'ըսէ թէ ի՞նչ ուսում պէտք
է ստանալ, ո՞ր ուղղութեամբ երթալ եւ
գնահատում կ'ընէ, միշտ կու տայ։ Կենսա-
գրութիւնը կը գործածեն ուղղութիւն
տալու համար։ Ես յամախած եմ միւս

դպրոցը որ չ'ըսէր թէ ի՞նչ պէտք է ընել
արուեստագէտ ըլլալու համար։ Խստը-
ւածքի հարց է։ Հարազատ զգալու։
Անհայեմական վերաբերումը արգելք
է հաղորդակցութեան, իսկ ես ժողո-
վորդը կը սիրեմ»։

Որո՞նքն են մէջ եղող այս ուրոյն
հայեացքներ ունեցող արուեստագէտը
Սփիւռքի գեղանկարիչ է. բայց միթէ՞
նալ գեղանկարիչ է եւ կա՞լ արդեօք
նալ գեղանկարչութիւն, Սփիւռքի յատուկ
գեղանկարչութիւն։ Հասկնալու համար
արուեստագէտը եւ իր գործը շրջամակի
մը մէջ հարկ է տեղադրել։

«Ո՛րք պատմութիւնը կը վկայէ որ
հայկական արուեստ միշտ գոյութիւն
ունեցած է. շատ մից ժամանակներէն
ի վեր։ Անոր ճամար թանգարաններ
կան։ Բայց միմի վրայ նորը կարելի չէ
շինել։ Արմատներս կան որոնք կը թե-
լաղրեն, մէջս են»։

Արա Ազատ մեկուսացած առեղծա-
գործող մը չէ։ Հասանքովն զինը կրկնող
չի փնտռել, բայց աշխարհը, մարդը,
ընտրութիւնը ընկալելու իր տաղմապը



26

22. Apple fall
24. Detail apple leaf

23. Apple leaf
25. First ever posted painting in history
26. Halo of a red apple



27



29



30



28



31

27. A century three specs. installation

28. A century three specs. detail

29. Blue beret and lips

30. Dread like howa

31. Adam's apple

32. Washington red delicious apple

33. Mimi

34. When mama died



32



33



34

կ'ուզե՝ փոխանցեմ: 'Մ'ուսուցանեմ: Բայց՝

«Ցարին մեկ պաշակերա կ'ընտրես, 1996-էն ի վեր, կը հետեւիմ»:

Արա Ազատ, իրաւ արտետուագէտի եւ մտատրականի տազնապ ունի, երբ հարցը կը վերաբերի ընկերութեան հետ հոստատատուած յարաբերութիւններուն, ընկերութեան ի գործ պրահ ուղղակի կամ անուղղակի ճնշումներուն, պարտադրանքներուն:

«Նաւ արուեստը սնունդ կու տայ մեր մշակութիւն արմատներուն, պէտք է որ ընկերութիւնը ազատ արձակէ արուեստագէտը, որպէսզի ան հետապնդէ իրմէ քիտղ պատկերները, լսէ կանչերը, հետեւի, ի հարկէ եթէ ան տեսիլք ունի, ունի իրատիւն: Պարզ պէտք է ըլլայ նաեւ որ արուեստը այս կամ այն մպատակին ծառայելու կոչանք քարոզչական միջոց չէ: Դեղատնկարիչին գոյները հասցէ եւ հայրենիք չունին, իրենց ուզած տեղը կ'երթան, իրենց կեանքը ունին: Այդպէս ալ ես: Ստեղծագործական փորձը ինձմով կը սկսի եւ ինձմով կը վերջանայ»:

'Մ'ըսէ: Բայց ստեղծագործական տենդը, ըլլալով հանդերձ եզակի, իրաքանչիւրին համար, վաղ թէ ուշ, ինչպէս Արա Ազատ կ'ըսէ, կը մտնէ թանգարան իրականացած գործի մը լսելը-ժացած պատկերով: Բաւա այդ տենդը կը վերսկսի մորթի մեռ, միշտ եզակի ըլլալու եւ մնալու լամդգմութեամբ: Ենչպէս կեանքը: Եւ ժամանակը, եզակի

համարուած հողովոյթի մը աւարտին, կը յանգի ոչ-եզակի եզրակացութեան: Ինք կ'ըսէ՝ կան թանգարանները: Ընդ-յաւելով կրնանք ըսել՝ կը հարստանան արմատները, որպէսզի շարունակուի մարդուն աշկածախնդրութիւնը տիեզերքի եւ ժամանակի մէջ:

Քանի որ Արա Ազատ կը սիրէ ժողովուրդը, ինչպէս ինք կ'ըսէ, ալ ժողովուրդը եւ թաւալող ժամանակը կ'ըլլան դատաւոր: Բայց այդ ժամանակը եւ ժողովուրդը, ինչպէս ինք կ'ըսէ, ընկերութիւնը, պէտք է որ «ազատ արձակեն արուեստագէտը», ոչ թարգ-չութիւն, ոչ քարոյալստաութիւն:

Յ. Պապեան
19 'Ինկտեմբեր 2005, Պէյրութ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԶԱՆՃԵԱՆ - Յ. ԳԵՂԱՐԴ



Պեյուր 1928 - 2006 Փարիզ

Մարտ 14, գիշերուան ժամը Յին, Համազգայինի Կեղրոնական Վարչութեան հերթական ժուրովի շնորհոյցին, Միացեալ Նահանգներէն հեռաձայնով խաբարեցին մահը Յ. Գեղարդի, որ տեղի ունեցած էր, նոյն օրը, փարիզեան շրջանին մէջ: Ծննդաւանահայ Յարութիւն Գազանճեան, արհեստով առամնարոյժ էր, վիպեալ ֆրանսական համալսարանէն, բոլոր անալոյժ իր կոչման, հանրային դերը եղաւ Լիւսնանի մէջ: Եղաւ անգամ Ազգային մարմիններու, Համազգայինի Կեղրոնական Վարչութեան, ՀԱԸՄԻ Կեղրոնական Վարչութեան: Իր ուսուցիչներէն, Լեւոն Շանթին եւ Նիկոլ Աղբալեանէն ստացած աւանդին հաւատարիմ, ան ծառայեց հայ գիրին եւ գրականութեան: Երկար տարիներ երաժարակեց ԲՅԺԿ ամսագիրը, որ անկախաբար իր քերած գիտելիքներէն, այսօր հա կր հանդիսանայ առաջադասական մարգին վերաբերեալ բառերու շտեմարան, քանոր՝ գորս շենք գործածեր ընդհանրապէս, եւ կր զիմենք բարեխական բարր լեզուներուն: Մաս կազմած է ԲԱԳ-ԻՆ խմբագրութեան եւ աշխատակցած է:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի անիշխանական օրերուն իր դէմ գործուած անարգ յարձակումէն ցնցուած, ապաաաանած էր Փարիզի միոճակայքը, որ կ'ապրէր քաշուած հանրային կեանքէ, կը հաւաքէր իր ցրուած գրութիւնները եւ կ'ամփոփէր յուշերը: Վերջին տարիներուն իր միակ ելոյթները եղան ՀԱԸՄԻ սկաւառական բանակումներուն բերած պատգամները: Տարի մը առաջ իրեն ընծայուեցաւ Պեյուրի Ծննդանի իր յաջորդներուն վկայականները յանձնելու եւ հուակ րանք ըսելու ուրախութիւնը: Այդ այցելութեան ընթացքին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսը զինք պարգեւատրեց յատուկ շքանշանով:

Ազգին եւ անոր մշակոյթին հանդէպ օրինակելի հաւատարմութեամբ եւ յանձնառութեամբ գործած ազգային դէմք մը, մատուրական մը, հայ գիրի եւ գրականութեան սպատարկաւ մը կր հեռանայ այս աշխարհէն, ներկայ անձանձիք գործած դէմք մը:

Յ. Գեղարդ աճի գրական տպաւորութիւններ, պատմութեան, գրականացուած յուշեր, վարձած է առակագրական սեռը ԳԱՅԼ ՎԱՀԱՆ գրչանունով: Ան սահողն եւ հաճելի լեզուով գրականութիւն մշակեց, պատմութեան եւ առակներ՝ որոնք սրամիա կերպով կը պատկերացնին կեանքն ու ընկերութիւնը ընդհանրապէս, եւ հայ կեանքը մտանաւորաբար:

Յետ-եղեանեան շրջանի ծնունդ իր սերնդակիցներէն ընտրանքի անգամներուն պէս, ընկունեցաւ աւանդը եւ կուակեց:

ԲԱՖԻՆԻ ընտանիքի եին ու նոր անդամները կը սպան կորուստը Յ. Գեղարդի եւ կ'ըսեն, տար-գին վսեմութեամբ, վարձքը կատար:

Բ.

Գոյություն ունի հարկ է դիտարկել գրականության և գեղարվեստի ազնիւ առաջադրանքով երապարակ եկող բոլոր երատարակութիւնները, քանի որ ամենք կը կրեն ետակականութեան մը, այս պարագային իսկ ազգի, ինքնուրոյնութեամբ տեսնելու ստեղծագործական ճիգը, ազգային լեզուի մերշնչած ուժականութեամբ:


ԿԱՄԱՐը եւս, ժամանակի ոգիին պատշաճող մերկայացում ունի, կարենոր՝ նաեւ աչքի ճամբով ինտաքրքրութիւն ստեղծելու, որպէսզի վերականգնի ընթերցման սովորութիւնը, որ տեղի տուած է եւ տեղի կու տայ յաճախ կրկնուող պատճառներով եւ պատրուակներով: Ինչպէս ըստեցաւ առաջին համարի մերկայացման շնորհահանդէսին եւ կարդացինք խմբագրականով, ԿԱՄԱՐ կը փայփայէ Հայաստանն ու Սփիւռքը կամրջելու փառասիրութիւնը: Դրական՝ մեր գտնագանութիւններով եւ տարբերութիւններով մէկութիւն ստեղծելու ճամբուն վրայ:

Հակառակ ժամաց յոռետեսութեան, Սփիւռքը անկ գրական-գեղարվեստական երատարակութիւններ, որոնք կը վկայեն գրականութիւնն մկատմամբ հետաքրքրութեան ճախն: Ի հարկէ, այս երատարակութիւնները, Սփիւռքի մէջ, որ պետութիւն չէ եւ չունի պետական միջոցներ, պարտիս գործել երկու ուղիւթիւններով. յառաջացնել կոչումներ, աւսինքն երիտասարդները մղել գրական-ստեղծագործական ուղի ընդգրկելու, եւ որպէս եմքանող՝ ընթերցող զանգուած յառաջացնելու: Միաժամանակ տէր կանգնելով եւ ցոյցագնելով արեւմտահայերէնը, ամոր տոյով նոր որակ եւ փայլ, զայն պաշտպանելով աղաւաղումներու դէմ, եւ գուրգուրալով մեպոպեան ուրբագրութեան վրայ, սպասելով որ Հայաստան ինք վերահասաաա եարագաւորութիւնը, ԿԱՄԱՐի կամրջելու ցանկութեան քերելով իր նպատաը:

ԲԱԳԻՆ, ՅԱՌԱՋԻ ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ, ՀՈՐԻՋՈՆԻ ԳՐԱԿԱՆ ՅԱՒԵԼՈՒՄՆը, Թեհրանի Գրական ՀԱՆԴԵՍը, ԱՌԱԳԱՍՏը, ՇԻՐԱԿը, եւ այժմ ԿԱՄԱՐը, իրենց տարրերութիւններով համդերձ, որոնք կրնան հարստութեան վերածուիլ, կը ձգտին մոյն նախաակին, ինքնութիւն կերտող եայ մշակոյթը եւ հայաաա գրականութիւնը քերելով մեր ուշադրութեան կեդրոնը:


Ուրախանալ եւ յաջողութիւն մաղթել:

Բ.



ԵՐԿՈՒՔ

Գրիգոր Պրլտեան
Ապրիլ հրատարակչություն
Էոս Անճեյոս, 2005
ստանալու համար դիմել՝ www.ammbooks.com




ՄԹՆԱԼՈՅՍ

Շուշիկ Տառնապետեան
Պէյրոս, 2006
ստանալու համար դիմել՝
Hamazkayin Bookstore
Shaghzyan Cultural Center - Bourj Hammond -
P.O. Box: 801096



ՆԱՄԱԿՆԵՐ ՋԱԹՅՈՒՐԷՆ

Վահէ Պէրպէրեան
Բ. հրատարակչություն
Պէյրոս, 2006
ստանալու համար դիմել՝
Hamazkayin Bookstore
Shaghzyan Cultural Center - Bourj Hammond -
P.O. Box: 801096



ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Յ. Պ. Յակոբեան
Երեւան, 2005
ստանալու համար դիմել՝
Hamazkayin Bookstore
Shaghzyan Cultural Center - Bourj Hammond -
P.O. Box: 801096



Ի ԳԻՊ

թիւ 2

խմբագիր՝ Էլիզապէթ Գրիգորեան
ստանալու համար դիմել՝ www.stleb.com



ԻՆՔՆԻԳԻՐ

թիւ 1

խմբագիր՝ Վիոլէթ Գրիգորեան
ստանալու համար դիմել՝ violeta@exner.am



ԲՎԵՐԸ

Վահրամ Մարտիրոսեան

2005, Երեւան

ստանալու համար դիմել՝ info@printinfo.am




ՍՓԻՐՈՐԻ ՕՏԱՐԱԳԻՐ ԲԱՆԱՍԵՆՉԱՌՈՒԹԻՒՆԸ

Վարդան Փարբամեան

Երեւան, 2005

ստանալու համար դիմել՝ Մուղնի հրատարակչութիւն
Երեւան





ՀԱՂԸ ԿՐԵԱՅ

Home
Medical
Equipment
Services



P.T.S.
AMBULANCE
BY
BISCO

ԱՖՀԻԼ  AFHIL

CENTER, 4TH FLOOR, TEL. 01 - 2415547
E-MAIL: info@afhul.com, www.afhul.com

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԻՐ
ԱՅՍՕՐ

ՆԻՇ ԸԼԼԱԼ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՐԳՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԻՍՏԱՆ

ARIN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՐԳՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԻՍՏԱՆԻ
ԲՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵԲ-ՍԵԻՏԵՐ